



# Զիաց Մեր Յանապագորդ

ՀՈԿՏԵՄԲԵՐ | ՆՈՅԵՄԲԵՐ | ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024

(Oct | Nov | Dec 2024)

ԼԵ. ՏԱՐԻ  
Դ. ԵՌԱՄՍԵԱՅ

Անձնական եւ Ընտանեկան  
Ամէնօրեայ Աստուածաշունչի Ընթերցումներ  
եւ Հոգեւոր Խորհրդածութիւններ

Մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք  
*Our Daily Bread* Ընկերակցութեան որուն  
թոյլատուութեամբ *Our Daily Bread* գրքոյկէն  
թարգմանուած են յաջորդ Էջերու  
խորհրդածութիւնները

---

Ամերիկայի Յայ Աւետարանչական Ընկերակցութիւն  
Armenian Missionary Association of America  
31 West Century Road  
Paramus, New Jersey 07652  
U.S.A.

Հագէք Աստուծոյ ամբողջ գրահը, որպէսզի կարենաք  
դիմադրել Չարախօսին հնարքներուն: [Եփ. 6. 11]

## ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՅԹԱՅԹԱԾ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

**Կ**ինս ու ես ամէն տարի հարիւրաւոր մղոններ կը դնենք մեր հեծանիւներուն վրայ՝ վարելով զանոնք Արեւմտեան Միչիկընի (Michigan) արահետներով: Մեր փորձառութիւնը բարելաւելու համար՝ մենք որոշ յաւելուած բաներ կցած ենք հեծանիւներուն: Կինս՝ Սուն (Sue) ունի առջեւի լոյս, ետեւի լոյս, ուղեչափ եւ կղպանք: Իմ հեծանիւս ունի՝ ջուրի շիշի պահարան: Իրականութեան մէջ՝ մենք կրնանք յաջողութեամբ վարել մեր երթուղին ամէն օր եւ աւելցնել այդ բոլոր մղոնները՝ առանց այդ յաւելուած բաներուն: Անոնք օգտակար են՝ սակայն ընտրովի:

Եփեսացիներու գիրքին մէջ՝ Պօղոս առաքեալ կը գրէ այլ յաւելուած բաներու մասին, սակայն ատոնք ընտրովի չեն: Ան կ'ըսէ, որ մենք պէտք է «հագնինք» այս բաները, որպէսզի յաջողինք ապրիլ Յիսուսի հանդէպ մեր ունեցած հաւատքը: Մեր կեանքերը հեշտ ուղեւորութիւններ չեն: Կր մարտնչինք ու կը «դիմադրենք չարախօսին հնարքներուն» (6. 11), հետեւաբար պէտք է լա՛ւ զգեստաւորուած ըլլանք:

Առա՛նց Աստուածաշունչի իմաստութեան, մենք ստիպուած կ'ըլլանք ընդունիլ սխալը: Առա՛նց Յիսուսի օգնութեամբ ապրելու իր «ճշմարտութիւնը», մենք տեղի կու տանք սուտերուն (Հմ. 14): Առա՛նց «աւետարանին» մենք «խաղաղութիւն» չունինք (Հմ. 15): Առա՛նց «հաւատքի» պաշտպանութեան, մենք կը սկսինք կասկածիլ (Հմ. 16): Մեր «փրկութիւնը» եւ Սուրբ Հոգին կը խարսխեն մեզ Աստուծոյ համար լաւ ապրելու (Հմ. 17):

Որքա՛ն կարեւոր է, որ մենք ճամբորդենք կեանքի ճանապարհներով՝ պաշտպանուած ըլլալով իրական վտանգներէն: Ու այդ կարելի կ'ըլլայ, երբ Քրիստոս կը գինէ մեզ՝ հագցնելով Աստուծոյ զրահը, մեր ճամբուն վրայ մեզի հանդիպող դժուարութիւններուն դէմ դնելու համար:

**Աղօթք** - Սիրելի Հայր, շնորհակալ եմ, որ Սուրբ Գրութիւնները՝ ինծի կը յիշեցնեն, թէ ինչպէ՛ս կրնամ դիմակալել Սատանային յարձակումներուն: Ամէն:

**Աստուծոյ սպառազինութեամբ՝ մենք կրնանք դիմագրաւել կեանքի բոլոր իրավիճակներն ու վտանգները:**

Յոգիին պտուղն է՝ սեր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերատարութիւն, բարութիւն, քաղցրութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն: [Գաղ. 5. 22-23]

## ՅԻՍՈՒՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՑՈՒԼՑՆԵԼ

**Ա**ֆղանիստանի (Afghanistan) մէջ մարտահրաւէրներով լիցուն շրջագայութենէ ետք, Բրիտանական բանակի քսանապետ Սքոթ (Scott) փշրուեցաւ: Ան յիշեց. «Ես մուժտեղ մըն էի»: Բայց երբ ան «յայտնաբերեց Յիսուսը եւ սկսաւ հետեւիլ Անոր», անոր կեանքը հիմնովին փոխուեցաւ: Այժմ ան կը ձգտի կիսել Յիսուս Քրիստոսի սէրը ուրիշներու հետ, յատկապէս վեթերաններու հետ, որոնց զէմ ան կը մրցի Ինվիկթըս (Invictus) Խաղերու մէջ, որ միջազգային խաղ մըն է՝ վիրաւոր եւ վնասուած վեթերան զիռուորներու համար:

Սքոթի համար՝ Աստուածաշունչ կարգալը, աղօթելը եւ փառաբանական երաժշտութիւն ունկնդրելը, կը պատրաստէ զինք՝ խաղերու մասնակցելէ առաջ: Աստուած յետոյ կ'օգնէ անոր «ցոլացնելու Յիսուսի նկարագիրը եւ ցուցաբերելու բարութիւն, հեզութիւն եւ շնորհք» հոն մրցող բարեկամ վեթերաններու հանդէպ:

Սքոթ այստեղ կը նչէ Հոգիին պտուղներէն մի քանին, որոնց մասին Պօղոս առաքեալ զրեց Գաղատայի հաւատացեալներուն: Անոնք կը պայքարէին կեղծ ուսուցիչներու ազդեցութեան տակ, ուստի Պօղոս կը ձգտէր խրախուսել անոնց, որ հաւատարիմ մնան Աստուծոյ եւ Անոր շնորհքին եւ «առաջնորդուիլ Հոգիով» (Գաղ. 5. 18): Այդպէս ընելով՝ անոնք հետեւաբար կու տային Հոգիին պտուղը՝ «սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերութեան, բարութիւն, քաղցրութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն եւ ժուժկալութիւն» (Հմ. 22-23):

Երբ Աստուծոյ Հոգին ապրի՝ մեր մէջ, մենք ալ նոյնպէս պտուղ կու տանք Հոգիին բարութեամբ եւ սիրով: Մենք նոյնպէս հեզութիւն եւ բարութիւն կը ցուցաբերենք մեզ շրջապատողներուն:

**Աղօթք** - Կեանք տուող Աստուած, շնորհակալ եմ Ըու Յոգիիդ համար: Կը խնդրե՛մ, մէջս պտուղ տո՛ւր, որպէսզի ուրիշներ վայելեն: Ամէն:

**Աստուած կ'օգնէ մեզի, որ կարենանք տալ Յոգիին պտուղները եւ մասնք ներդաշնակ Իր հետ:**

Տէ՛րոյ մեզի հետ է: [Թուոնց 14. 9]

## ԱՅՈ՛ ԸՍԵԼ՝ ՉԱԲԱՏԹՈՎ

**Ե**րբ հարցուցին՝ եթէ կ'ընդունի՞ մ'նոր պատասխանատուութիւն մը աշխատավայրիս մէջ, ուզեցի ո՛չ ըսել: Ստածեցի մարտահրաւաններուն մասին եւ ինքզինքս անհամարժէք զգացի այդ գործը ընելու: Բայց երբ ազօթեցի եւ առաջնորդութիւն փնտռեցի Աստուածաշունչէն եւ այլ հաւատացեալներէ, հասկցա՛յ, որ Աստուած կը կանչէ զի՛ս ըսելու, այո՛: Սուրբ Գրութիւններու միջոցով ես նաեւ երաշխաւորուեցայ Անոր օգնութեամբ: Այսպիսով, ես ընդունեցի առաջադրանքը, սակայն որոշ վախով:

Ես ինքզինս կը տեսնեմ Իսրայէլացիներուն եւ տասը լրտեսներուն մէջ, որոնք մղուած էին գրաւելու Քանանի երկիրը (Թուոնց 13. 27-29, 31-33, 14. 1-4): Անոնք նոյնպէս տեսան դժուարութիւնները՝ մտածելով, թէ ինչպէ՞ս կրնան յաղթել երկրի հզօր մարդոց եւ տիրել անոնց ամրացուած քաղաքներուն: Լրտեսները ըսին. «Մենք մեր աչքերուն մարախի պէս էինք» (13. 33) եւ Իսրայէլացիները տրտնջեցին ու ըսին. «Ինչո՞ւ Տէրը մեզ այս երկիրը բերաւ, որ սուրով իյնանք» (14. 3):

Միայն Քաղէբ եւ Յեսու յիշեցին, որ Աստուած արդէն խոստացած էր, որ Քանանը պիտի տայ Իր ժողովուրդին (Մն. 17. 8, Թուոնց 13. 2): Անոնք վստահութիւն քաղեցին Աստուծոյ խոստումէն՝ տեսնելով գալիք դժուարութիւնները՝ Անոր ներկայութեան եւ օգնութեան լոյսին ներքեւ: Անոնք պիտի դիմագրաւէին այդ դժուարութիւնները Անոր գօրութեամբ, պաշտպանութեամբ եւ միջոցներով, եւ ո՛չ թէ իրենց (Թուոնց 14. 6-9):

Պարտականութիւնը, որ Աստուած տուաւ ինծի, հե՛շտ չէր, բայց Ան օգնեց յաղթահարելու: Թէեւ մենք միշտ գերծ չենք մնար դժուարութիւններէ՛, Իր տուած յանձնարութիւններուն մէջ, սակայն մենք կրնանք՝ Քաղէբի եւ Յեսուի նման դիմակալել զանոնք իմանալով, որ «Տէ՛րը մեզի հետ է» (Հմ. 9):

**Աղօթք** - Միրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինծի ամբողջ սրտով հետեւելու Քեզի: Ամէն:

**Երբ անբաւարար զգանք մենք զմեզ Աստուծոյ տուած առաջադրանքները կատարելու, նա՛յինք Քաղէբի եւ Յեսուի օրինակին ու անցմէ սորվինք՝ Աստուծոյ վստահիլ:**

Երբ կը հեզնուեր, փոխարէնը չէր հեզներ. կը չարչարուեր, բայց չէր սպառնար, հապա կը յանձներ ինքզինք արդարութեամբ դատողին: [Ա. Պետ. 2. 23]

## ՔՐԻՍՏՈՍԱՆՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ

**Ճորճ (George)** շինարարական աշխատանք կը կատարէր՝ Գարոլայնայի (Carolina) ամառնային տաք արեւին տակ, երբ մօտը բնակող մէկը մտաւ շրջափակը, ուր ինք կ'աշխատէր: Յստակ էր որ դրացին զայրացած ըլլալով սկսաւ հայհոյել եւ քննադատել այն ամէնը, ինչ որ կը վերաբերէր նախագիծին եւ թէ ինչպէ՛ս կը գործադրուէր: Ճորճ մտիկ ըրաւ ծանր խօսքի հարուածները՝ առանց պատասխանելու, մինչեւ որ զայրացած մարդը դադրեցաւ գոռալէ: Յետոյ՝ մեղմ պատասխանեց. «Ի՞նչ իսկապէս ծանր օր մը ունեցած էք, այդպէ՞ս չէ»: Յանկարճ՝ զայրացած դրացիին խոժոր դէմքին արտայայտութիւնը փոխուեցաւ, գլուխը կախեց եւ ըսաւ. «Ներողութիւն կը խնդրեմ իմ արտայայտութեանս համար»: Ճորճի բարութիւնը՝ մեղմացուց եւ թուլցուց դրացիին զայրոյթը:

Կ'ըլլան պահեր, երբ կ'ուզենք հակահարուած տալ ուրիշին: Չարաշահումի դիմաց՝ չարաշահում եւ վիրաւորանքի դիմաց՝ վիրաւորանք: Փոխարէնը, Ճորճ ձեւաւորեց բարութիւն, որ ամենէն կատարեալ կերպով կ'երեւի այն բանին մէջ, թէ ինչպէս Յիսուս կը կրէ ցաւ ու վիշտ մեր մեղքերուն հետեւանքով, առանց սպառնալիք հնչեցնելու իր կրած նեղութեան տեսն: «Երբ կը հեզնուէր, փոխարէնը չէր հեզներ. կը չարչարուէր, բայց չէր սպառնար, հապա կը յանձնէր ինքզինք արդարութեամբ դատողին» (Ա. Պետ. 2. 23):

Բոլորս ալ պիտի դիմադրուենք պահեր երբ մեզի սխալ պիտի հասկնան, սխալ նեկայացնեն կամ յարձակին մեր վրայ: Մենք՝ գուցէ ցանկանք նման կերպ արձագանգել, բայց Յիսուսի սիրտը մեզի կոչ կ'ընէ՝ ըլլալու բարի, հետամուտ խաղաղութեան եւ դրսեւորելու հասկացողութիւն: Գուցէ Աստուած կարող է մեզ օգտագործել՝ օրհնելու մեկուն, որ կը դիմադրուէ ծանր օր մը:

**Աղօթք** - Դձուր, կը խնդրեմ՝ օգնէ ինձի Քու մէջդ գտնելու Յիսուսի սիրտը ցոյց տալու ուժը, շնորհքը եւ իմաստութիւնը: Ամէն:  
**Ընդհանրապէս հակումը կ'ունենանք հակահարուածելու մեզի հանդէպ անբարեացակամ դիրք բռնողներուն, սակայն պետք է աւելի միտումնաւոր կերպով բարութիւն դրսեւորել չարիքի դէմ:**

Այսպես թող ըսեն Տէրոջ փրկածները, որոնք փրկեց թշնամիին ձեռքէն: [Մաղմ. 107. 2]

## ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԳՈՐԾԱԾԷ ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**Բ**ացի՛ յիշատակի տուփը՝ եւ հանեցի փոքրիկ արծաթագոյն կուրծքի զարդասեղ մը, որ ճիշդ չափն ու ձեւը ունէր՝ տասը շաբաթական չծնած երեխայի մը ոտքերուն: Շոյելով տասը փոքրիկ մատները՝ յիշեցի իմ առաջին յղութեան կորուստս եւ անոնց, որոնք ըսին թէ «բախտաւոր եմ», որովհետեւ ես ալ «այդքան հեռու չէի»: Տխրեցայ՝ իմանալով, որ երեխայիս ոտքերը նոյնքան իրական են, որքան սիրտը, որ ժամանակ մը կը բաբախէր արգանդիս մէջ: Շնորհակալութիւն յայտնեցի Աստուծոյ, որ ազատեց զիս՝ ճնշուածութենէ եւ օգտագործեց պատմութիւնս՝ մխիթարելու ուրիշներուն, որոնք վշտացած էին երեխայի մը կորուստէն ետք: Վիժումէս աւելի քան երկու տասնամեակ անց ամուսինս ու ես մեր կորսնցուցած երեխային անուանեցինք *Գայ (Kai)*, որ որոշ լեզուներով կը նշանակէ «ուրախանալ»: Թէեւ ես տակաւին կը ցաւիմ իմ կորուստիս համար, սակայն շնորհակալ եմ Աստուծոյ իմ սիրտս բուժելու եւ իմ պատմութիւնս օգտագործելու՝ ուրիշներու օգնելու համար:

107-րդ Մաղմոսը գրողը ուրախացաւ Աստուծոյ հաստատած բնաւորութեամբ եւ երգեց. «Շնորհակա՛լ եղէք Տէրոջմէն, որովհետեւ բարի է, որովհետեւ անոր կարեկցութիւնը յաւիտենական է» (Հմ. 1): Յորդորեց «Տէրոջ փրկածներուն» պատմել իրենց պատմութիւնը (Հմ. 2), «շնորհակալ ըլլալ Տէրոջմէն՝ իր կարեկցութեան համար, ու մարդոց որդիներուն ըրած իր սքանչելիքներուն համար» (Հմ. 8): Ան յոյս տուաւ խոստումով, որ միայն ինք «պապակած անձը կը յագեցնէ, եւ անօթեցած անձը բարիքներով կը լեցնէ» (Հմ. 9):

Մենք կրնանք զգալ Աստուծոյ ողորմութիւնը. երբ Ան կ'օգտագործէ մեր պատմութիւնները՝ մատնանշելու ուրիշներուն իր քաւիչ սէրը:

**Աղօթք** - Սիրելի Յիսուս, շնորհակալ եմ Զեզի, որ բժշկեցիր զիս՝ եւ օգտագործեցիր իմ պատմութիւնս, ուրիշներուն մատնացոյց ընելու՝ Զու քաւիչ սերդ: Ամէն:

**Աստուած կը բուժէ մեր սիրտը կտրող փորձառութիւնները եւ կ'օգտագործէ ուրիշներուն պատմութիւնները՝ մեզ մխիթարելու համար:**

Տէ՛րը զիս հօտին ետեւէն առաւ եւ ինծի ըսաւ. «Գնա՛, մարգարեացի՛ր»: [Ամ. 7. 15]

## ԱՍՏՈՒԱԾ ԿՐ ՏԵ՛ՍՆԷ ՄԵՁ

**Մ**իչիկըն (*Michigan*) նահանգին մէջ կան տասն չորս երկիրիոն ծառեր, որոցմէ շատերը սովորական ծառեր են՝ որոշ չափանիշներով: Սակայն՝ նահանգը կը հիւրընկալէ տարեկան «Մեծ Ծառերու Որս» կոչուած մրցոյթը՝ բացայայտելու այն ծառերը, որոնք ամենահին եւ ամենամեծն են. ծառերը, որոնք կրնան մեծարուել որպէս կենդանի տեսարժան վայրեր: Մրցոյթը՝ սովորական ծառերը կը բարձրացնէ մէկ այլ մակարդակի. որեւէ անտառի մը մէջ կրնայ մրցանակակիր մը ըլլալ, պարզապէս սպասելով՝ որ իրեն ուշադրութիւն դարձնեն:

Ի տարբերութիւն մարդոց մեծամասնութեան, Աստուած միշտ կը նկատէ սովորականը: Ան կը մտածէ այն մասին, թէ ի՞նչն ու որո՞ւ կ'անտեսեն ուրիշները: Աստուած՝ Հերոզովամ թագաւորի օրով՝ Իսրայէլ զրկեց Ամովս անունով հասարակ մարդ մը: Ամովս յորդորեց իր ժողովուրդին՝ ետ կենալու չարէն եւ փնտռել արդարութիւն, սակայն զինք վտարեցին եւ ըսին, որ լուռ մնայ: Արհամարհեցին ու ըսին. «Ո՛վ տեսանող, գնա՛, փախի՛ր Յուդայի երկիրը. հո՛ն մարգարէացի՛ր» (Ամ. 7. 12): Ամովս պատասխանեց. «Ես ո՛չ մարգարէ էի, ո՛չ ալ մարգարէի որդի, հապա եզնարած ու ժանտաթուզ քաղող էի: Տէ՛րը զիս հօտին ետեւէն առաւ եւ ինծի ըսաւ. ‘Գնա՛, մարգարէացի՛ր իմ ժողովուրդիս Իսրայէլի’» (Հմ. 14-15):

Աստուած գիտէր եւ նկատեց Ամովսին, երբ ան սովորական հովիւ էր, որ կը հովուէր իր հօտերն ու ծառերը: Հարիւրաւոր տարիներ ետք, Յիսուս նկատեց եւ կանչեց սովորական Նաթանայէլին (Յովհ. 1. 48) եւ Զաքէոսին (Ղուկ. 19. 4-5) թուզի եւ ժանտաթուզի ծառերուն մօտ: Անկախ անկէ, թէ որքա՛ն աննշան ըլլանք, ան կը տեսնէ, կը սիրէ եւ կ'օգտագործէ մեզ՝ իր նպատակներուն համար:

**Աղօթք** - Սիրելի Յայր, շնորհակալ եմ, որ կը սիրես զիս, նոյնիսկ երբ ես զիս անտեսուած կը զգամ: Ամէն:

**Երբեմն դժուար է հաւատալ, որ Աստուած մեզ կը տեսնէ որպէս անհատ ու իր սերը կը յայտնէ մեզի՝ անարժաններու:**

«Ո՛չ կարողութեամբ է, ո՛չ ալ ոյժով, հապա՛ իմ Զոգիովս» կը յայտարարէ զօրքերու Տէրը: [Զաք. 4. 6]

## ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԵՐ ԵՏԵՒ ԱԹՈՒՆ ՎՐԱՅ

**Է** նտրուին (Andrew) Վոլքսվակընը (Volkswagen) կանգ առաւ եւ մաքսատան պահակները մօտեցան: Ան կ'աղօթէր, ինչպէս անցեալին յաճախ աղօթած էր. «Ո՛վ Աստուած, երբ դուն աշխարհի վրայ էիր, կոյրին աչքերը բացիր: Հիմա՛ կը խնդրեմ՝ տեսնող աչքերը փակէ»: Պահակները խուզարկեցին ինքնաշարժը, առանց բան մը ըսելու էնտրուի պայուսակին մէջ եղած Աստուածաշունչերուն մասին: Էնտրուն անցաւ սահմանը իր ինքնաշարժին բեռը տանելով անոնց, որոնք չէին կրնար Աստուածաշունչ ունենալ:

Էնտրու Վան Տէր Պիճլ (Andre van der Bijl) կամ Եղբայր Էնտրու, ապաւինեցաւ Աստուծոյ զօրութեան՝ այն անհնարին թուացող գործին համար: Աստուած կանչած էր Էնտրուին՝ Սուրբ Գիրքեր տանելու այն երկիրները, ուր Քրիստոնէութիւնը անօրինական էր: «Ե՛ս սովորական տղամարդ մըն եմ», ըսաւ ան՝ ընդգծելով իր սահմանափակ կրթութիւնն ու նիւթականի բացակայութիւնը: «Այն՝ ինչ որ ես ըրած եմ, բոլորը կրնան ընել»: Այսօր անոր հիմնած «Բաց Դուռ Միջազգային» (Open Doors International) կազմակերպութիւնը, կը ծառայէ Յիսուսի հաւատացող հալածուած մարդոց՝ ամբողջ աշխարհին շուրջ:

Երբ Յուդայի կառավարիչ Զօրաբաբէլ դիմագրաւեց տաճարը վերակառուցելու անհնարին գործը՝ Հրեայ ժողովուրդին աքսորէն վերադարձէն ետք, յուսահատեցաւ: Բայց Աստուած յիշեցուց իրեն, որ յոյսը դնէ ո՛չ թէ մարդկային զօրութեան եւ ուժին վրայ, այլ իր Հոգիին վրայ (Զաք. 4. 6): Քաջալերեց անոր՝ Զաքարիա մարգարէին տրուած տեսիլքին միջոցով, որ կը վերաբերէր աշտանակներու համար մօտակայ ճիթապտուղի ծառերէն ստացուած իւղին (Հմ. 2-3):

Երբ մենք կ'ապաւինինք Աստուծոյ, թող որ մենք վստահինք իրեն եւ ընենք այն՝ ինչ որ Ան կոչ կ'ընէ մեզի:

**Աղօթք** - Սուրբ Զոգի, կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի որ Զեզի ապաւինիմ: Ամէն: **Ճրագներուն՝ ձիթէնի ծառերուն իւղ մատակարարելու տեսիլքը, թող մեզ քաջալերէ՝ որ Աստուծոյ Զոգիին ապաւինինք:**



Արդարը արմաւենիի պէս պիտի ծաղկի, ... ալեւորութեան մէջ ալ պտուղ պիտի արտադրեն: [Սաղմ. 92. 12-14]

### ՅԻՍՈՒՍԻ ՅԱՄԱՐ ՎԱԶԵԼ

**Ե**րբ մարզիկ կը մտածեն 100 մեթր վազքի մասին, ներկայի աշխարհի լաւագոյն ժամանակ արձանագրող՝ Ուսէյն Պոլթը (Usain Bolt) կը մտաբերեն: Սակայն չենք կրնար մոռնալ Ճուլիա «Փոթոռիկ» Հոքինսը (Julia “Hurricane” Hawkins): 2021 թուականին՝ Ճուլիան միւս բոլոր վազողներէն առաջ անցաւ աւարտի գիծը, շահելով Լուիզիանայի (Louisiana) Երէցներու Խաղերու 100 մեթր վազքը: Անոր ժամանակը քիչ մը աւելի դանդաղ էր, քան Պոլթի 9.58 երկվայրկեանը – միայն 60 երկվայրկեանով: Սակայն ան 105 տարեկան էր:

Շատ բան կայ սիրելու կին մը, որ թերեւս իր այդ յառաջացած տարիքին կը վազէր արագ վազքեր: Եւ շատ բաներ կան Յիսուսի հաւատացողները սիրելու, որոնք երբէ՛ք չեն դադրիր մրցավազքը վազելու Անոր հետ՝ որպէս իրենց նպատակը (Եբ. 12. 1-2): Սաղմոսերգուն այսպէս կ'ըսէ կեանքի յետագայ վերջին փուլերուն գտնուող հաւատարիմներուն մասին. «Արդարը արմաւենիի պէս պիտի ծաղկի, ... ալեւորութեան մէջ ալ պտուղ պիտի արտադրեն, պարարտ ու կանաչ պիտի մնան» (92. 12-14):

Տարեց հաւատացեալներ, որոնք կը հետեւին այս չափանիշին, կրնան լրացուցիչ ուսուցում գտնել Պօղոս առաքեալի՝ Տիտոսի ուղղած նամակին մէջ: Տարեց տղամարդերը պէտք է ըլլան «ողջամիտ՝ հաւատքով, սիրով եւ տոկոսնութեամբ» (Տիտ. 2. 2), իսկ տարեց կիները՝ պէտք է ըլլան «բարի բաներ սորվեցնող» (Հմ. 3): Տարեց հաւատացեալներուն կոչ չկայ՝ դադրեցնելու իրենց մրցավազքը: Գուցէ՛՝ ո՛չ այնպէս, ինչպէս Ճուլիան կ'ընէ մրցարշաւին, այլ այնպիսի ձեւերով, որոնք կը պատուեն Աստուած, քանի որ Ան կու տայ անոնց պէտք եղած ուժը: Եկէ՛ք բոլորս ալ մրցինք՝ Անոր եւ ուրիշներուն լաւ ծառայելու համար:

**Աղօթք** - Սիրելի Յիսուս, շնորհակալութիւն ամէն օրուայ համար, որ կու տաս ինծի: Անկախ իմ տարիքէս, օգնէ ինծի ձգտիլ վազելու մրցավազքը՝ Զու փառքիդ համար: Ամէն:

**Որպէս Աստուծոյ հաւատացողներ, անկախ մեր տարիքէն՝ շատ բաներ կրնանք ընել, հասնելու ուրիշներու՝ օգնելու եւ իրախուսելու, որ անոնք աճին հաւատքով:**

Բայց համբերութիւնը թող ունենայ իր կատարեալ գործը, որպէսզի կատարեալ եւ ամբողջ ըլլաք, եւ ոչինչ պակսի ձեզի: [Յակ. 1. 4]

## ԴԱՍԵՐ՝ ԶԱՄԲԵՐՈՒԹԵԱՆ ՍԷՋ

**Պ**ապ Սէյլըմ (Bob Salem) արագութեան մրցանակակիր է, պիստակը (peanut) քիթով վեր հրելու՝ հասցնելով Գոլորատոյի Փայքս (Colorado's Pike's Peak) լեռան գագաթը. աւելի ճիշդը դէմքին ամրացած դգալով մը: Ան իրագործեց իր այս սխրանքը եօթը օրուան ընթացքին, աշխատելով գիշերուայ ժամերուն զթօսաշրջիկներու կողմէ՝ ընդհատումներէն խուսափելու համար: Պապ՝ չորրորդ անձն է, որ կրցած է յաջողութեամբ աւարտել այս հնարքը. սա կը նշանակէ, որ երեք այլ շատ համբերատար մարդեր՝ նոյնը կրցած են ընել:

Կարելի է ըսել, որ անոնց համբերութեան կարիքը ինքնաբոլիս եղած է, բայց շատ յաճախ կեանքի մէջ՝ այդ այդպէս չէ: Մեզի համբերութիւն պէտք է: Համբերութիւնը Հոգիին պտուղն է (Գաղ. 5. 22) եւ կարեւոր առաքինութիւն մըն է «կատարեալ եւ ամբողջ ըլլալու, եւ ոչինչ պակսելու մեզի» համար (Յակ. 1. 4): Համբերատար մարդիկ կրնան իրենց գլուխը պահել, երբ շրջապատը խուճապի մէջ է: Անոնք կը ցանկան, որ իրավիճակը տարբեր ըլլայ, բայց այդ իրենց պէտք չէ: Անոնք կը շարունակեն մնալ իրենց ուղիին մէջ՝ վստահելով Աստուծոյ, որ իմաստուն կերպով գործեն (հմ. 5):

Համբերատարութիւն սորվելու միայն մէկ միջոց կայ: Յակոբ կ'ըսէ, «ձեր հաւատքին փորձը համբերութիւն կ'իրագործէ» (հմ. 3): Նման փորձարկութիւններ կը կատարուին՝ մեծ ու փոքր ձեւերով: Օրինակ, մէկը կը գրէ. «Կը գրեմ օդակայանէն: Ժամը 11.00-ի թռիչքս՝ յետաձգուած էր առաւօտեան ժամը 2.00-ին, Առանց քնանալու գիշեր մը անցնելէ ետք՝ սուրճ կը խմեմ եւ յոյս ունիմ, որ ի վերջոյ կը հասնիմ տուն: Չեմ սիրեր ամբողջ օր մը քնոտ անցընել օդակայանը, բայց սիրող Հայրս ինծի համբերութիւն կը սորվեցնէ»: «Կ'աղօթեմ, որ դասը աւարտի օրուան համար, բայց ո՞վ գիտէ: Յաջորդ թռիչքի ժամը ստուգելու ժամանակն է հիմա»:

**Աղօթք** - Զայ՛ր, կը խնդրեմ՝ օգնէ ինծի որ սորվիմ համբերութիւն, մինչ կը կառչիմ Զեզի եւ Զու խոստումներուդ: Ամէն:

**Համբերութեան առաքինութիւնը կարելոր է եւական է, ուստի կ'արժէ զարգացնել զայն:**

Ա՛յնչափ իր կարեկցութիւնը մեծ է իրմէ վախցողներուն վրայ:  
[Սաղմ. 103. 11]

## ԿԱՐԵԿՑՈՒԹԻՒՆ՝ ՍԱՅՄԱՆՆԵՐԷՆ ԱՆԴԻՆ

«Աստուած՝ այնքա՛ն բարի եղած է մեզի հետ: Կ՛ուզեմ շնորհակալութիւն յայտնել Անոր մեր ամուսնութեան տարեդարձին համար»: Թէրիին (Terry) ճայնը հաստատուն էր եւ անոր աչքերուն արցունքները՝ ցո՛յց կու տային իր անկեղծութիւնը: Մեր փոքր խումբին անդամները՝ խորապէս յուզուած էին: Մենք գիտէինք թէ ինչե՛ր պատահած էին անցեալ տարիներուն Թէրիին եւ իր ամուսինին համար: Թէեւ հաւատացեալ էր, սակայն Ռոպերթ (Robert) կը տառապէր յանկարծակի ծանր հոգեկան հիւանդութեամբ եւ խլած էր իրենց չորս տարեկան աղջկան կեանքը: Տասնամեակներ շարունակ մտային խանգարումներու հաստատութեան մէջ էր, բայց Թէրին այցելեց զինք եւ Աստուած կատարեց գեղեցիկ բուժիչ գործ մը՝ օգնելով իրեն, որ ներէ: Չնայած իր խոր ցաւին, անոնց սէրը իրարու հանդէպ աճեցաւ:

Նման սէրն ու ներումը կրնան գալ միայն մէկ աղբիւրէ: Դաւիթ Աստուծոյ մասին կը գրէ «Ան մեր մեղքերուն համեմատ չվարուեցաւ մեզի հետ: ...Որչափ արեւելքը արեւմուտքէն հեռու է, ա՛յնչափ հեռացուց մեզմէ մեր յանցանքները» (Սաղմ. 103. 10, 12):

Ողորմութիւնը, որ Աստուած ցոյց կու տայ մեզի, կու գայ իր արժէքաւոր սիրով. «Ո՛րչափ երկինքը երկրէն բարձր է, ա՛յնչափ իր կարեկցութիւնը մեծ է» մեզի համար (Հմ. 11): Այդքան խոր սէր՝ ստիպեց զինք երթալ դէպի խաչ եւ գերեզմանին խորքերը՝ ներելու մեր մեղքերը, որպէսզի Ան կարենայ իր մօտ բերել բոլոր անոնց, որոնք «կ'ընդունին զինք» (Յովհ. 1. 12):

Աստուծոյ կարեկցութիւնն ու ներողամտութիւնը՝ դուրս կու գան աներեւակայելի սահմաններէն եւ մեզի կու տան կեանք, որ երբէ՛ք չաւարտիր:

**Աղօթք** - Ողորմած Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինծի որ ուրախասամ Քու սիրով եւ աճիլ անոր մէջ: Թող սերդ հասնի ուրիշներուն՝ իմ միջոցով: Ամէն:

**Յակառակ մեր բոլոր սխալներուն, Աստուած իր ողորմութիւնն ու կարեկցութիւնը կը յայտնէ մեզի: Եկէ՛ք արձագանգեք Անոր սերն ու ողորմութիւնը այսօր:**

Անդադար աղօթեց՛ք: [Ա. Թես. 5. 17]

## ՄԻ՛ՇՏ ԱՂՈԹԷ

**Ս**տացայ 84 նիշ՝ քննութեան: *Զգացի անչափահաս աղջկանս ուրախութիւնը, երբ կարգացի անոր զրկած այս կարճ հաղորդագրութիւնը՝ հեռախօսիս վրայ: Ան նոր սկսած էր երկրորդական դպրոցի դասերուն եւ կը գործածէր իր բըիջային հեռախօսը՝ ճաշի դադարի ընթացքին: Իմ մայրական սիրտս ցնծութեամբ խայտաց՝ ո՛չ միայն այն պատճառով, որ աղջիկս լաւ նիշ ստացած էր դժուար քննութեան մը, այլ այն պատճառով, որ ան ուզած էր ինծի փոխանցել այդ լաւ լուրը: Ան կ'ուզէր կիսել իր լաւ լուրը ինծի հետ:*

Հասկնալով որ իր զրկած հաղորդագրութիւնը ուրախացուց գիս, աւելի ուշ՝ մտածեցի, թէ Աստուած ինչպէ՞ս պէտք է գգայ, երբ ձեռքս երկարեմ իրեն: Արդեօ՞ք ինք ալ նոյնպէս կ'ուրախանայ երբ խօսիմ իր հետ: Աղօթքով մենք կը հաղորդակցինք Աստուծոյ հետ եւ մեզի կ'ըսուի ընել այս բանը «անդադար» (Ա. Թես. 5. 17): Անոր հետ խօսիլը, մեզի կը յիշեցնէ, որ Ան մեզի հետ է՝ լաւին եւ վատին ատեն: Մեր լուրերը Աստուծոյ հետ բաժնեկցիլը, հակառակ անոր որ Ան արդէն գիտէ ամէն բան, օգտակար է. քանի որ այդ կը փոխէ մեր ուշադրութիւնը եւ կ'օգնէ որ մտածենք իր մասին: Եսայի 26. 3-ը կ'ըսէ. «Հաստատ միտքը կատարեալ խաղաղութեան մէջ կը պահես, որովհետեւ քեզի կը վստահի»: Մեզի խաղաղութիւնը կը սպասէ, երբ մեր ուշադրութիւնը դարձնենք Աստուծոյ:

Անկախ անկէ թէ ի՞նչ կը դիմագրաւենք, թո՛ղ որ մենք շարունակաբար խօսինք Աստուծոյ հետ եւ կապ պահենք մեր Արարիչին եւ Փրկիչին հետ: Փսփսայ՝ աղօթք մը եւ յիշէ՛ ցնծալ եւ «չնորհակալութիւն յայտնէ»: Ի վերջոյ, Պօղոս կ'ըսէ, որ սա՛ «Աստուծոյ կամքն է» մեզի համար (Ա. Թես. 5. 18):

**Աղօթք** - Հայր, կը խնդրեմ՝ յիշեցո՛ւր ինծի, որ կապի մէջ մնամ Զեզի հետ ամբողջ օրուան ընթացքին: Կ'ուզեմ ուրախանալ եւ շնորհակալութիւն յայտնել Զեզի՝ այն ամէն բաներուն համար, ինչ որ կը դիմագրաւեմ: Ամէն:

**Ի՞նչ բան մեզի պէտք է Աստուծոյ հետ բաժնեկցելու: Միշտ յիշենք թէ օրուան ընթացքին կապ պահելու ենք Աստուծոյ հետ:**

Զանի մը մարդիկ յարեցան իրեն (Պօղոսի): [Գործք 17. 34]

## ՎՆԱՍԻ ԵՎ ՆԱԿԱՊԱՐՅՈՎ

**Ա**ռաւօտեան զբօսնելու ժամանակ նկատեցի, որ սխալ ուղղութեամբ գացող ինքնաշարժը կանգ առաւ: Վարորդը տեղեակ չէր իր եւ ուրիշներու սպառնացող վտանգին մասին, քանի որ քնացած եղած էր՝ ալքոլի ազդեցութեան տակ: Իրավիճակը վտանգաւոր էր եւ ես պէտք էր բան մը ընէի: Որոշ չափով զինք զգաստութեան բերելէ ետք, կրցայ զինք տեղափոխել ուղեւորի աթոռին, որպէսզի կարենամ նստիլ վարորդի աթոռին վրայ ու զինք հասցուցի անվտանգ տեղ մը:

Յիզիքական վտանգը միակ վնասը չէ, որ կը դիմադրուենք: Երբ Պօղոս Աթէնք էր, տեսաւ աշխարհիկ իմաստունն եւ խելացի մարդիկ՝ Հոգեւոր վտանգի մէջ, քանի որ «քաղաքը լեցուած էր կուռքերով», անոր Հոգին գրգռուեցաւ (Գործք 17. 16): Առաքեալին բնածին պատասխանն էր բաժնեկցիլ Աստուծոյ նպատակներուն մասին՝ Յիսուսի մէջ եւ միջոցով (Հմ. 18, 30-31) անոնց հետ, որոնք սիրախաղ կ'ընէին գաղափարներու հետ ու հաշիւի չառին Քրիստոսը: Եւ ոմանք, որոնք լսեցին, հաւատացին (Հմ. 34):

Քրիստոսի հանդէպ հաւատքէն բացի՝ վերջնական իմաստ փնտռելը վտանգաւոր է: Անոնք՝ որոնք ներում եւ խսկական իրագործում գտած են Յիսուսի մէջ, փրկուած են փակուղային հետապնդումներէ եւ ստացած են հաշտութեան պատգամը (տե՛ս՝ Բ. Կորնթ. 5. 18-21): Յիսուսի բարի լուրը այս կեանքի արբեցնող ազդեցութիւններու տակ գտնուողներուն հետ բաժնեկցիլը՝ տակաւին այն միջոցն է, որ Աստուած կը գործածէ՝ մարդոց վնասէն խնայելու համար:

**Աղօթք** - Երկնաւոր Յայր, շնորհակալ եմ, որ զիս փրկեցիր մեղքի հոգեւոր վնասէն: Կը խնդրեմ՝ գործածէ զիս՝ օգնելու ուրիշներուն, որոնք չեն կրնար տեսնել, որ իրենք վտանգի տակ են: Ամէն:  
**Եթէ տակաւին Յիսուսի չես հասած, ի՞նչ կը սպասես: Եթէ հասած ես, ի՞նչ բան կը խանգարէ քեզ՝ պատմելու ուրիշներու, թէ ինչպէս Աստուած քեզ փրկած է վնասէն:**



Գևա՛ խաղաղութամբ, ինչպէս երկուքս ալ Տերոջ անունով  
երդում ըրիսը: [Ա. Թագ. 20. 42]

## ՄԻԱՍԻՆ ՆՈՒԱՃԵԼ ԼԵՌՆԵՐԸ

**Կ**րնաս տեսած կամ լսած ըլլալ սա՛ ասացուածքին որեւէ այլ տարբերակ մը. «Եթէ կ’ուզես արագ քալել, գնայ առանձին: Բայց եթէ կ’ուզես հեռու երթալ, գնայ միասին»: Լաւ ու հաճելի միտք մըն է, այնպէս չէ՞: Բայց կա՞յ որեւէ հիմնաւոր հետազօտութիւն, որ կը հաստատէ մեզ, որ այս խօսքերը՝ ո՛չ միայն գեղեցիկ են, այլ նաեւ ճշմարիտ:

Այո՛: Իսկութեան մէջ, Բրիտանացի եւ Ամերիկացի հետազօտողներու մէկ սերտողութիւնը ցոյց տուած է, որ մարդիկ լեռներու չափերը կը գնահատեն զգալիօրէն աւելի փոքր, եթէ անոնք կեցած են ուրիշներու հետ, ի տարբերութիւն մինակ կանգնելու ժամանակ: Այլ կերպ ըսած, «ընկերային աջակցութիւն»ը այնքա՛ն կարեւոր է, որ նոյնիսկ լեռներու չափը կը փոքրանայ մեր մտքին մէջ:

Դաւիթ գտաւ այդպիսի քաջալերանք՝ թէ սիրուն եւ թէ ճշմարիտ, Յովնաթանի հետ իր ունեցած բարեկամութեան մէջ: Սաւուղ թագաւորի նախանձոտ զայրոյթը, Դաւիթի պատմութեան մէջ անյաղթահարելի լեռան պէս էր, որ զինք կը վախցնէր իր կեանքին համար (տես Ա. Թագ. 19. 9-18): Առանց որեւէ աջկցութեան, այս պարագային իր ամենամօտ ընկերոջը, պատմութիւնը կրնար կտրուկ կերպով տարբեր ըլլալ: Բայց Յովնաթան «Դաւիթի համար վշտացաւ, որովհետեւ իր հայրը գայն խայտառակեր էր» (20. 34), կանգնեցաւ իր ընկերոջ կողքին: Ան հարցուց. «Ինչո՞ւ պիտի մեռցուի» (Հմ. 32): Անոնց Աստուծոյ սահմանած բարեկամութիւնը՝ ամրապնդեց Դաւիթին՝ թոյլ տալով իրեն դառնալ Իսրայէլի թագաւոր:

Մեր բարեկամութիւնները կարեւոր են: Եւ երբ Աստուած անոնց կեդրոնն է, մենք կրնանք զիրար մղել աւելի մեծ բաներ ընելու, քանի որ կրնանք պատկերացնել:

**Աղօթք** - Հայր, շնորհակալ եմ՝ անոնց համար, որ Դուն դրած ես իմ կեանքիս մէջ, որոնք պահած են լեռները իմ հեռանկարիս մէջ:  
Ամէն:

**Ո՛ր կարելի է գտնել մեր ընկերային աջակցութիւնը: Որո՞ւ կրնանք աջակցիլ մեր բարեկամութեամբ:**

Հագե՛ք գուլթը, կարեկցութիւնը, քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեզութիւնը, համբերատարութիւնը հանդուրժելով իրարու եւ ներելու իրարու: [Կող. 3. 12]

## ԲԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՐԶ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

**Ե**րբ մայրս հանգստեան տան մէջ էր ու կը մօտենար երկրի վրայ իր վերջին օրերուն, ես յուզմունքով տեսայ հաստատութեան խնամելու անկեղծ բարութիւնը: Թուլացած մօրս՝ աթոռէն ուշադրութեամբ բարձրացնելու եւ անկողինին մէջ դնելու ատեն, բժիշկին օգնականը շոյեց մայրիկիս գլուխը՝ ու իր վրայ ծռելով ըսաւ. «Դուն այնքա՛ն քաղցր ես»: Յետոյ հարցուց ինծի, թէ ինչպէ՞ս եմ: Անոր բարութիւնը՝ յուզեց զիս, այդ ատեն եւ մինչեւ օրս՝ արցունքներ կը թափեմ:

Անոր ըրածը պարզ բարութիւն մըն էր, բայց այդ՝ ճիշդ այն բանն էր, որ պէտք էր ինծի այդ պահուն: Այդ արարքը օգնեց ինծի յաղթահարելու՝ գիտնալով, որ այս կնոջ աչքերուն մէջ մայրս պարզապէս հիւանդ մը չէր: Ան կը հոգար եւ կը տեսնէր զինք՝ որպէս մեծ արժէք ունեցող անձնաւորութիւն մը:

Երբ Նոյեմի եւ Հռութ գրկուեցան իրենց ամուսիններուն կորուստով, Բոոս՝ բարութիւն ցոյց տուաւ Հռութի հանդէպ՝ թոյլ տալով անոր հաւաքելու հացահատիկի մնացորդները հնձողներուն ետեւէն: Ան նոյնիսկ հրամայեց հնձողներուն հանգիստ ձգել զինք (Հռ. 2. 8-9): Անոր բարութեան զրդապատճառն էր՝ Հռութի հոգատարութիւնը Նոյեմիի նկատմամբ. «Բու ամուսինիդ մեռնելէն ետք ինչ որ կեսուրիդ ըրիր՝ բոլորն ալ պատմեցին ինծի» (Հմ. 11): Ան զինք կը տեսնէր ո՛չ թէ որպէս օտարական կամ այրի, այլ որպէս կարիքաւոր կին մը:

Աստուած կը ցանկայ, որ մենք «հագնի՛նք գուլթը, կարեկցութիւնը, քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեզութիւնը, համբերատարութիւնը» (Կող. 3. 12): Երբ Աստուած կ'օգնէ մեզի, մեր պարզ բարութեան գործերը կրնան ուրախացնել սիրտերը, յոյս բերել եւ բարութիւն ներշնչել ուրիշներուն:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կ'ուզեմ հագնիլ բարութիւն: Կը խնդրեմ, տո՛ւր ինծի հնարաւորութիւնը՝ գայն ցոյց տալու ուրիշներուն: Ամէն:

**Ե՞րբ մեկը ցուցաբերած է քեզի պարզ բարութիւն մը: Ինչպէ՞ս այդ արարքը՝ ոգեշնչեց եւ քաջալերեց քեզ:**



Կը ճնշեմ ու կը նուաճեմ մարմինս: [Ա. Կորնթ. 9. 27]

## ԿԱՐԳԱՊԱՅ ԿԵԱՆՔ ՍԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՁ

2016 Յունիսն էր՝ Էլիզապէթ Թագուհիին ծննդեան ինիսուն ամեակը: Իր կառքէն միապետը ձեռքով բարեւեց ամբոխին, անցնելով կարմիր հագուստով գինուորներու երկար շարքերու դիմաց, որոնք կանգնած էին կատարեալ եւ անխախտ ուշադրութեամբ: Տաք օր մըն էր եւ պահակները հագած էին իրենց աւանդական մուգ բուրդէ տաբատները, կզակին կոճկած բուրդէ բաճկոնները եւ արջի մորթով հսկայական գլխարկները: Երբ գինուորները կանգնած էին հաւասար շարքերու մէջ՝ արեւին տակ, պահակներէն մէկը սկսաւ ուշքը կորսնցնել: Յատկանշական է, որ ան պահպանեց իր խիստ հսկողութիւնը եւ ուղղակի ինկաւ առջեւ, իսկ մարմինը փայտի պէս ուղիղ մնաց ու իր դէմքը զարնուեցաւ աւազոտ խիճին մէջ: Հոն ան պառկած էր, տակաւին անշարժ:

Տարիներու փորձ եւ կարգապահութիւն պէտք էր՝ ա՛յս պահակին սորվելու համար նման ինքնատիրապետում, իր մարմինը՝ իր տեղը պահելու համար, նոյնիսկ երբ ան կ'ըլլար անգիտակից վիճակի մէջ: Պօղոս առաքեալ կը նկարագրէ նման դաստիարակութիւն մը երբ ան գրեց. «Կը ճնշեմ ու կը նուաճեմ մարմինս» (Ա. Կորնթ. 9. 27): Պօղոս հասկցաւ. «Ո՛վ որ կը մըցի՝ չափաւորութիւն կը պահէ ամէն բանի մէջ» (Հմ. 25):

Թէեւ Աստուծոյ շնորհքը (ո՛չ թէ մեր ջանքերը) հիմնուած է այն ամէն բանին վրայ, ինչ որ կ'ընենք, հետեւաբար մեր հոգեւոր կեանքը արժանի է խիստ կարգապահութեան: Երբ Աստուած կ'օգնէ մեզի դաստիարակելու մեր միտքը, սիրտը եւ մարմինը, մենք կը սորվինք մեր ուշադրութիւնը կեդրոնացած պահել իր վրայ, նոյնիսկ փորձութիւններու կամ շեղումներու պարագային:

**Աղօթք** - Սիրող Աստուած, կը խնդրեմ՝ սորվեցուր ինձի, ինչպէ՞ս աւելի կարգապահ ըլլալ Զեզի համար: Կ'ուզեմ մեծցնել իմ սերս Զեզի հանդէպ եւ սիրտս պահել Զեզ մօտ: Ամէն:

**Երբեմն դժուար կը թուի խրատել սիրտը, միտքն ու մարմինը: Սակայն Աստուած կը հրաւիրէ մեզ՝ աւելի խոր կարգապահութեան:**



Այս բաները խօսեցայ ձեզի՝ որպեսզի իմ ուրախութիւնս մնայ ձեր մէջ, ու ձեր ուրախութիւնը լման ըլլայ: [Յովի. 15. 11]

## ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԱՐԱԳՈՒԹԻՒՆԸ

**Գ**ացէ՛ք ուրախութեան արագութեամբ: Այս արտայայտութիւնը միտքս եկաւ, երբ առտու մը աղօթելով մտածեցի գալիք տարուան մասին եւ այդ բանը թուաց տեղին ըլլալ: Գերաշխատանքի յակում ունէի, ինչ որ յաճախ կ'աւերէր իմ ուրախութիւնս: Ուստի՝ հետեւելով այս ուղեցոյցին, որոշեցի գալիք տարուան մէջ աշխատիլ հաճելի ընթացքով, տեղ տալով բարեկամներու եւ ուրախ գործունէութեան:

Այս ծրագիրը յաջողեցաւ ...մինչեւ Մարտ: Յետոյ՝ ես համագործակցեցայ համալսարանի հետ՝ վերահսկելու իմ մշակած դասընթացքիս փորձարկման: Ուսանողներուն գրանցելու եւ դասաւանդելու համար, շուտով սկսայ երկար ժամեր աշխատիլ: Ինչպէ՞ս կրնայի հիմա՝ երթալ ուրախութեան արագութեամբ:

Յիսուս կը խոստանայ ուրախութիւն անոնց, որոնք կը հաւատան Իրեն, ըսելով՝ որ այդ կու գայ Իր սիրոյն մէջ մնալով (Յովհ. 15. 9) եւ աղօթքով մեր կարիքները Իրեն բերելով (16. 24): Ան կ'ըսէ. «Այս բաները խօսեցայ ձեզի՝ որպէսզի իմ ուրախութիւնս մնայ ձեր մէջ, ու ձեր ուրախութիւնը լման ըլլայ» (15. 11): Այս ուրախութիւնը կու գայ որպէս պարգեւ՝ Անոր Հոգիին միջոցով, որու հետ մենք պէտք է համընթաց պահենք մեր քայլերը (Գաղ. 5. 22-25): Հասկցայ, որ կրնայի ուրախութիւնը պահել իմ զբաղ ժամանակիս մէջ, միայն երբ ամէն գիշեր ժամանակ անցընէի հանգիստ՝ վստահելի աղօթքով:

Քանի որ ուրախութիւնը շատ կարեւոր է, իմաստ ունի առաջնահերթութիւն տալ անոր՝ մեր օրուան ծրագիրներուն մէջ: Բայց որովհետեւ կեանքը երբէ՛ք ամբողջովին մեր վերահսկողութեան տակ չէ՛, ես ուրախ եմ, որ ուրախութեան մէկ այլ աղբիւրը՝ Հոգին, հասանելի է մեզի: Ինծի համար հիմա՝ ուրախութեան արագութեամբ երթալը կը նշանակէ երթալ աղօթքի արագութեամբ՝ ժամանակ տրամադրելով ուրախութիւն տուող Հոգիէն ստանալու համար:

**Աղօթք** - Սուրբ Յո'գի, կը խնդրեմ՝ այսօր թարմացուր զի՛ս Զու սիրով, խաղաղութեամբ եւ ուրախութեամբ: Ամէն:  
**Ի՞նչ բան քեզ տո կը պահէ ուրախութենէն: Դիմէ՛ ուրախութիւն տուողին եւ վստահե՛ Անոր:**

Մովսես անոնց ըսաւ. «Ա՛յս է այն հացը, որ Տէրը ձեզի տուաւ՝ ուտելու: [Ել. 16. 15]

## ԱՍՏՈՒԾՈՅ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ

**Ա**շխարհ հիացաւ, երբ 2023 Յունիսին Գոլոմպիայի Ամազոն (Colombia Amazon) անտառին մէջ՝ ողջ գտան մէկէն տասներեք տարեկան՝ չորս քոյրեր եւ եղբայրներ: Անոնք քառասուն օրեր ողջ մնացած էին անտառին մէջ՝ սաւառնակի արկածի հետեւանքով, երբ զոհուած էր իրենց մայրը: Ծանօթ ըլլալով անտառին դժուար տարածքին, անոնք պահուրտեցան ծառերու կոճղերու մէջ՝ կենդանիներէն պաշտպանուելու համար, շիշերու մէջ ջուր հաւաքեցին՝ առուններէն եւ անձրեւէն եւ կերան ինչ որ գտան, ինչպէս գասաւա (cassava) ալիւր խորտակուած սաւառնակէն: Անոնք նաեւ գիտէին, թէ ո՞ր վայրի միրքերը եւ սերմերը՝ անվնաս են՝ ուտելու համար:

Աստուած խնայեց այդ քոյր եղբայրները:

Անոնց անհաւանական պատմութիւնը՝ կը յիշեցնէ մեզի թէ ինչպէ՞ս Աստուած հրաշքով պահեց Իսրայէլացիները՝ անապատին մէջ քառասուն տարիներ, որ արձանագրուած է Ելից եւ Թուոց գիրքերուն մէջ եւ նշուած՝ ամբողջ Աստուածաշունչին մէջ: Ան պահեց անոնց կեանքը, որպէսզի անոնք գիտնան, որ Ա՛ն է իրենց Աստուածը:

Աստուած դառն աղբիւրի ջուրը վերածեց խմելու ջուրի, երկու անգամ ջուր տուաւ ժայռէն եւ իր ժողովուրդը առաջնորդեց՝ ցերեկը ամպի սիւնով եւ գիշերը՝ կրակի սիւնով: Ան նաեւ մանանա տրամադրեց անոնց: «Մովսէս անոնց ըսաւ. ‘Ա՛յս է այն հացը, որ Տէրը ձեզի տուաւ՝ ուտելու: Ահաւասիկ ինչ որ Տէրը պատուիրեց.- “Ժողովեցէ՛ք անկէ՛ իւրաքանչիւրդ իր կերածին չափ” ’» (Ել. 16. 15-16):

Նո՛յն Աստուածը՝ կ’ապահովէ մեզի «մեր ամէնօրեայ հացը» (Մատթ. 6. 11): Մենք կրնանք վստահիլ Անոր, որ կ’ապահովէ մեր կարիքները «իր փառքին ճոխութեան համեմատ, փառքով՝ Քրիստոս Յիսուսի միջոցով» (Փիլ. 4. 19):

**Աղօթք** - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ Զեզի՝ իմ իւրաքանչիւր կարիքս հոգալուդ համար: Ամէն:

**Աստուած նախատեսութիւններ ըրած է մեզի համար, ուստի՝ կ’արժէ Իրեն վստահիլ:**

Ա՛լ կը բաւէ, ո՛վ Աստուած, ա՛ն իմ անձս, քանի որ ես իմ հայրերես լաւ չեմ: [Գ. Թագ. 19. 4]

## ՔՍՈՒԱԾ ԿԱՐԱԳ

**Ճ.** Ռ. Ռ. Թոլքինի (J. R. R. Tolkien) «Մատանիներու Ընկերակցութիւնը» (The Fellowship of the Rings) գիրքին մէջ, Պիլպօ Պէկինզը (Bilbo Baggins) կը սկսի ցոյց տալ վեց տասնամեակ շարունակ մութ ու ժերով կախարդական մատանին կրելու հետեւանքները: Ծանրացած անոր դանդաղ քայքայիչ բնութեանն ան կ'ըսէ կախարդ Կանտալֆին (Gandalf). «Ինչո՞ւ ես ինծի նիհար կը զգամ, տեսակ մը երկնցած, եթէ գիտես ի՞նչ ըսել կ'ուզեմ, ինչպէս կարագը, որ հացի վրայ քսուած է»: Ան կ'որոշէ լքել իր տունը գտնելու համար տեղ մը, ուր «խաղաղ ու հանգիստ կրնայ ըլլալ, առանց բազմաթիւ հարագատներ ունենալու իր շուրջ»:

Թոլքինի պատմութեան այս երեւոյթը՝ ինծի կը յիշեցնէ Հին Կտակարանի մարգարէի փորձառութիւնը: Յեզաբէլէն փախած եւ կեղծ մարգարէներու հետ կռուելէ ետք, Եղիա հանգիստի պէտք ունէր: Սպառած զգալով, խնդրեց Աստուծմէ, որ թոյլ տայ իրեն մեռնիլ՝ ըսելով. «Ա՛լ կը բաւէ, ո՛վ Աստուած» (Գ. Թագ. 19. 4): Քունի անցնելէ ետք, Աստուծոյ հրեշտակը արթնցուց զինք, որպէսզի կարենայ ուտել եւ խմել: Ան դարձեալ քնացաւ, իսկ յետոյ՝ աւելի շատ կերաւ՝ հրեշտակին տուած ուտելիքը: Վերակենդանացած՝ ան բաւական ուժ ունէր՝ Աստուծոյ լեռը քառասուն օր քայլելու համար:

Երբ մենք զգանք, որ սպառած ենք, նոյնպէս կրնանք Աստուծմէ ահնկալել իսկական թարմութիւն: Մեզի կրնայ անհրաժեշտ ըլլալ հոգ տանիլ մեր մարմինին, նաեւ խնդրել իրմէ, որ մեզ յեցնէ իր յոյսով, խաղաղութիւնով եւ հանգստութիւնով: Ինչպէ՞ս որ հրեշտակը հոգ տարաւ Եղիայի, մե՛նք ալ կրնանք վստահ ըլլալ, որ Աստուած իր թարմացնող ներկայութիւնը կը հաղորդէ մեզի ու կը հանգստացնէ (տե՛ս Մատթ. 11. 28):

**Աղօթք** - Չօրութիւն տուո՛ղ Աստուած, կը սպասեմ Զեզի՝ իսկական հանգիստի համար: Կը իսկորեմ, օգնե՛ ինծի որ յոյսս դնեմ Զու վրայ եւ լեցուիլ Զու ներկայութիւնով: Ամէն:

**Երբ ուժասպառ, տկար եւ յոգնած զգաս, վստահե՛ Աստուծոյ: Ան կը գորացնէ քեզ:**

Ի՞նչ որ կ'ընէք՝ սրտանց ըրէք, որպէս թէ Տէրոջ եւ ո՛չ թէ մարդոց: [Կող. 3. 23]

## ՄԷԿ ՀԱՆԴԻՍԱՏԵՍ

**Ո**րպէ՛ս՝ «Տէնվըր Նակեթցի» (Denver Nuggets) ձայնը, խուճաբ հոգեւոր տեսուչ՝ Գայլ Սթէլլըր (Kyle Speller) առաւել յայտնի էր իր աղմկոտ հրապարակային ելոյթով, պասքէթպօլիսիստ խոյանութեան խաղերու ժամանակ: «Երթա՛նք» (Let's go!): Ան կ'որոտայ խօսափողին մէջ եւ հազարաւոր NBA-ի երկրպագուներ, ինչպէս նաեւ միլիոնաւոր դիտողներ կամ մտիկ ընդդէմ, կ'արձագանգեն անոր ձայնին, որ արժանացած է Սթէլլըրի նշանակումին որպէս 2022-ի, բոլոր աստղերու խաղերուն հաղորդավար: Ան կ'ըսէ. «Գիտե՛մ՝ ինչպէս զգալ ամբոխին հետ եւ տեսակ մը ստեղծել այդ միջնորդը»: Տակաւին՝ անոր ձայնի իւրաքանչիւր բառի գեղարուեստական գործ, որ նաեւ կը ցուցադրուի հեռուստացոյցի եւ ձայնասփիւռի գովազդներու մէջ, Աստուած փառաբանելու համար է: Անոր աշխատանքը, կ'աւելցնէ Սթէլլըր, «պարզապէս կ'ընեմ ամէն բան մէկ հանդիսատեսի համար»:

Պօղոս առաքեալ ընդգծեց նման բարոյականութիւն մը՝ Կողոսայի եկեղեցիին համար, որու անդամները թոյլ կու տային, որ Քրիստոսի աստուածութեան եւ ինքնիշխանութեան վերաբերեալ կասկածները՝ թափանցեն նոյնիսկ իրենց գործնական կեանքերուն մէջ: Փոխարէնը, Պօղոս գրեց. «Եւ ամէն ինչ որ կ'ընէք, թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով, ըրէ՛ք Տէր Յիսուսի անունով, շնորհակալ ըլլալով Աստուծոյ ու Հօրմէն՝ անոր միջոցով»: (Կող. 3. 17):

Պօղոս աւելցուց. «Ի՛նչ որ կ'ընէք՝ սրտանց ըրէք, որպէս թէ Տէրոջ եւ ո՛չ թէ մարդոց» (Հմ. 23): Գայլ Սթէլլըրի համար՝ այդ կը ներարէ իր դերը՝ որպէ՛ս հոգեւոր տեսուչ, որու համար ան կ'ըսէ. «Այդ մէկը իմ նպատակս է այստեղ ... իսկ յայտարարութիւնը անոր զարգարանքն է»: Մեր սեփական աշխատանքը Աստուծոյ համար՝ կրնայ նոյնքան քաղցր ըլլալ մէկ հանդիսատեսի համար:

**Աղօթք** - Տեր Յիսու՛ս, շնորհակալ եմ իմ աշխատանքիս համար: Ոգեշնչէ՛ գիս՝ ընելու ամէն ինչ Քեզի համար: Ամէն: **Ի՞նչն է հիմնական՝ քու աշխատանքիդ բարոյականութեան մէջ: Ինչպէ՛ս կրնայ Աստուծոյ համար աշխատիլը՝ փոխել մեր տեսակետը:**

Բայց նախ խնդրեցէ՛ք Աստուծոյ թագաւորութիւնն ու անոր արդարութիւնը, եւ այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի: [Մատթ. 6. 33]

## ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

1921-ին, արուեստագէտ՝ Սէմ Ռօտիա (Sam Rodia) սկսաւ Ուաթց Աշտարակի (Watts Tower) շինութիւնը: Երեսուներեք տարիներ ետք, Լօս Անճըլըսի (Los Angeles) մէջ տասնեօթ քանդակներ բարձրացան՝ մինչեւ երեսուն մեթր բարձութեամբ: Երաժիշտ ձէրրի Կարսիա (Jerry Garcia) կը մերժէ ընդունիլ Ռօտիայի կեանքի գործերը: Կարսիա ըսաւ. «Ա՛յդ է վարձատրութիւնը: Այն բանը, որ գոյութիւն ունի քու մահէդ ետք»: Յետոյ ան աւելցուց. «Վա՛յ, այդ ինձի համար չէ՛»:

Ուստի, ո՞րն է անոր վարձատրութիւնը: Իր նուագախումբի ընկերը՝ Պապ Ուիր (Bob Weir) ամփոփեց իրենց փիլիսոփայութիւնը սապէ՛ս. «Յաւիտենականութեան մէջ, ոչի՛նչ պիտի յիշուի քու մասիդ: Ուրեմն ինչո՞ւ պարզապէ՛ս չզուարճանալ»:

Հարուստ՝ իմաստուն մարդ մը անգամ մը փորձեց գտնել իր «վարձատրութիւնը» ընելով Հնարաւոր եղած ամէն ինչ: Ան գրեց. «Իմ սիրտիս մէջ ըսի. 'Եկո՛ւր հիմա, փորձարկե՛մ քեզ ուրախութեան միջոցով. ուստի վայելէ՛ բարօրութիւնը' » (Ժող. 2. 1): Բայց ան նչեց. «Արդարեւ իմաստունին յիշատակը յաւիտենական չէ, ոչ ալ անմիտինը. որովհետեւ գալիք օրերուն բոլորն ալ պիտի մոռցուին» (Հմ. 16): Ապա եզրակացուց. «Արդարեւ արեւին տակ կատարուող գործերը ինձի չարչարալից թուեցան» (Հմ. 17):

Յիսուսի կեանքն ու պատգամը՝ հիմնապէս կը հակադրէ այդպէս անհեռատես ապրիլը: Յիսուս եկաւ մեզի լիարժէք «ճոխ կեանք» տալու համար (Յովհ. 10. 10) եւ սորվեցուց մեզի ապրիլ այս կեանքը՝ նկատի ունենալով յաջորդը: Ան ըսաւ. «Երկրի վրայ գանձեր մի՛ դիզէք ձեզի: Հապա երկի՛նքը գանձեր դիզեցէ՛ք ձեզի» (Մատթ. 6. 19-20): Ապա ամփոփեց. «Նախ խնդրեցէ՛ք Աստուծոյ թագաւորութիւնն ու անոր արդարութիւնը, եւ այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի» (Հմ. 33):

Ա՛յդ է վարձատրութիւնը՝ թէ արեւի տակ եւ թէ ալ անկէ անդին:

**Աղօթք** - Դա՛յր, , կը խնդրեմ՝ օգնե՛ ինձի որ ուրախութեամբ ծառայեմ Զեզի՛ յաւիտենականութեան հեռանկարով: Ամէն: Ինչպէ՛ս կ'ուզես որ մարդիկ քեզ յիշեն: Ի՞նչ կը նշանակե՛ երկինքը գանձեր դիզել:



Դաւիթէն արդարութեան Շառաւիղ մը պիտի բուսցնեմ, ու ան երկրին մէջ իրաւունք եւ արդարութիւն պիտի կիրարկէ: [Եր. 33. 15]

## ՅԻՍՈՒՍ ՇԱՌԱԻԻՂԸ

**Ա**րիզոնա (Arizona) նահանգի Սըտօնայի (Sedona) կարմիր Լեռներու մէջէն՝ վեր կը խոյանայ Սուրբ Խաչի գեղեցիկ մատուռը: Մտնելով փոքրիկ մատուռը զիս գրաւեց խաչի վրայ Յիսուսի անսովոր քանդակը: Աւանդական խաչի փոխարէն՝ Յիսուս խաչուած է ծառի ճիւղերու վրայ՝ երկու կոճղերով: Հորիզոնական կտրուած ու մեռած կոճղը՝ կը ներկայացնէ Հին Կտակարանին մէջ Իսրայէլի ցեղերը, որոնք կը մերժէին Աստուած: Միւս կոճղը՝ կը բարձրանայ դէպի վեր եւ կը ճիւղաւորուի՝ խորհրդանշելով Յուդայի ծաղկող ցեղը եւ Դաւիթ թագաւորի տոհմը:

Խորհրդանշական նշանակութիւն ունեցող այս արուեստի գործը, կը մատնանշէ Հին Կտակարանին մէջ Յիսուսի մասին կարեւոր մարգարէութիւն մը: Թէեւ Յուդայի ցեղը կ'ապրէր գերութեան մէջ, Երեմիա մարգարէն՝ Աստուծոյ յուսադրող պատգամ տուաւ. «Իսրայէլի տան համար ու Յուդայի տան համար տուած բարի խոստումս պիտի իրագործեմ» (Եր. 33. 14) ապահովելու համար փրկարար մը, որ «երկրին մէջ իրաւունք եւ արդարութիւն պիտի կիրարկէ» (Հմ. 15): Փրկիչին ինքնութիւնը իմանալու ձեւերէն մէկը պիտի ըլլայ, որ Ան «բունսի Դաւիթի տոհմէն» (Հմ. 15), որ կը նշանակէ թէ Փրկիչը պիտի ըլլայ Դաւիթ թագաւորի Ֆիզիքական շարաւիղէն:

Քանդակը՝ Հմտօրէն կը ցոյացնէ կարեւոր ճշմարտութիւն մը, որ Յիսուսի ընտանեկան ծագումին մանրամասնութիւններուն մէջ՝ Աստուած հաւատարիմ էր կատարելու այն ամէնը, ինչ որ խոստացած էր: Նոյնիսկ աւելին, Ան կը յիշենցէ, որ անցեալին Անոր հաւատարմութիւնը՝ մեզի վստահութիւն կու տայ, որ Ան հաւատարիմ կ'ըլլայ՝ իրականացնելու իր խոստումները մեզի՝ ապագային:

**Աղօթք** - Ամենակարող Աստուած, փա՛ռք Զեզի, որ կը կատարես Քու տուած բոլոր խոստումներդ: Ամէն:

**Աստուած ուրիշ խոստումներ ալ տուած էր, որոնք Յիսուս կատարեց: Անոնց կատարումը թող քաջալերէ մեզ:**

Դո՛ւք կը մաքրեք գաւաթին ու պնակին դուրսի՛ կողմը, բայց ներսէն լեցուն են յափշտակութեամբ եւ անիրաւութեամբ: [Մատթ. 23. 25]

## ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ ՆԵՐՍԷՆ

**Ե**րկրորդ Համաշխարհային պատերազմէն ի վեր՝ Մեծն Բրիտանիոյ ամենասարսափելի հրդեհի ժամանակ, կրակը պատած է Արեւմտեան Լոնտոնի շրջանը գտնուող քսանչորս յարկանի՝ Կրէնֆէլլ Աշտարակի (Grenfell Tower) շէնքը, խլելով եօթանասուն մարդերու կեանք: Քննութիւնները պարզեցին, որ կրակին այդքան արագ տարածուելուն հիմնական պատճառը՝ երեսապատումն էր, որ օգտագործուած էր որպէս վերանորոգութեան մաս, ծածկելու համար շէնքին արտաքին տեսքը: Նիւթը՝ դուրսէն պաղլեղածին (էլումինիում/aluminium) էր, բայց ունէր չափազանց բոցավառելի բլասթիք միջուկ:

Ինչպէ՞ս թոյլ տրուած էր նման վտանգաւոր նիւթի վաճառքն ու տեղադրումը այդտեղ: Այդ ապրանքը վաճառողները չբացայայտեցին նիւթին հրդեհային անվտանգութեան վատ արդիւնքները: Եւ գնողները, որոնք ներգրաւուած էին նիւթին աժան գինին պատճառով՝ չկրցան ուշադրութիւն դարձնել նախազգուշացնող նշաններուն: Փայլուն երեսապատումը, արտաքնապէս գեղեցիկ տեսք ունէր:

Յիսուսի ամենակոշտ խօսքերէն մի քանին՝ ուղղուած էին կրօնական ուսուցիչներուն, որոնց կը մեղադրէր գեղեցիկ արտաքինին ետեւ աղաւաղումը ծածկելու համար: Ան ըսաւ, որ անոնք նման են «ծեփուած գերեզմաններու» որոնք «դուրսէն գեղեցիկ կ'երեւնան», բայց ներսէն լեցուն են մեռելներու ոսկորներով (Մատթ. 23. 27): «Արդարութեան, ողորմութեան եւ հաւատարմութեան» (Հմ. 23) հետամուտ ըլլալու փոխարէն, անոնք կեդրոնացած էին լաւ տեսք ունենալու վրայ՝ մաքրելով «գաւաթին դուրսը», բայց ո՛չ ներսի «կեղծաւորութիւնն ու անօրէնութիւնը» (Հմ. 25):

Աստուած կը հրաւիրէ մեզի թոյլ տալու, որ Ինք փոխէ մեզ բոլորս՝ ներսէն (Ա. Յովհ. 1.9):

**Աղօթք** - Դայր, կը խնդրեմ օգնէ ինձի չպահել իմ կոտորուածութիւնս՝ այլ թոյլ տալու, որ Դո՛ւն վերափոխես զիս ամբողջութեամբ: Ամէն:

**Կը փորձուիք ծածկել մեր մեղքերը, սակայն կարելի է առաջնահերթ սեպել՝ ներքնապէս վերափոխութիւնը:**



Ես ալ պիտի թախանձեմ Յօրը, եւ ուրիշ Միսիթարիչ մը պիտի տայ ձեզի, որպէսզի յաւիտեան բնակի ձեզի հետ: [Յովհ. 14. 16]

## ՍՈՒՐԲ ԶՈԳԻՆ ՆԵՐԿԱ՛Յ Է

Հիւսիսային Գարօլայնայի Շարլօթէն՝ (Charlotte) Նիու Եօրք Սիթի (New York City) թուիչքի համար իր նախաթուիչքային ստուգումները կատարելով, ուղեկցորդուհին նկատեց ուղեւոր մը, որ տեսանելիօրէն մտահոգ եւ անհանգիստ կը զգար: Ան նստեցաւ միջանցքին մէջ, բռնեց անոր ձեռքը, բացատրեց թուիչքի իւրաքանչիւր քայլը եւ վստահեցուց անոր, որ ամէն բան լաւ պիտի ըլլայ: Ան ըսաւ. «Երբ օդանաւ կը բարձրանաս, այդ մեր մասին չէ, այլ քու մասիդ: Եւ եթէ դո՛ւն լաւ չես զգար, կ'ուզեմ այնտեղ ըլլալ, որ ըսեմ՝ 'Հէյ, ի՞նչն է սխալ: Կրնա՞մ բան մը ընել քեզի օգնելու համար'»: Անոր հոգատար ներկայութիւնը կրնայ պատկերացնել ա՛յն, ինչ որ Յիսուս ըսաւ ու խոստացաւ, թէ Սուրբ Հոգին կ'ընէ Իրեն հաւատացողներուն համար:

Քրիստոսի, մահը, յարութիւնը եւ համբարձումը՝ անհրաժեշտ եւ օգտակար էին մարդիկ մեղքերէն փրկելու համար, բայց այդ նաեւ զգացական խառնաշփոթ եւ խոր վիշտ առաջացուց աշակերտներուն սիրտերուն մէջ (Յովհ. 14. 1): Ուստի՝ Ան վստահեցուց անոնց, որ իրենք մինակ պիտի չմնան՝ շարունակելու իր առաքելութիւնը աշխարհի մէջ: Ան պիտի զրկէր Սուրբ Հոգին, որ իրենց հետ ըլլայ. «Միսիթարիչ մը որ յաւիտեան պիտի բնակի իրենց հետ» (Հմ. 16): Հոգին պիտի վկայէր Յիսուսի մասին եւ պիտի յիշեցնէր անոնց՝ այն ամէն բանին մասին, ինչ որ Քրիստոս ըրաւ եւ ըսաւ (Հմ. 26): Անոնք պիտի «խրախուսուին» Իրմով՝ դժուար ժամանակներու մէջ (Գործք 9. 31):

Այս կեանքի մէջ, ներառեալ Յիսուսի հաւատացողները, պիտի ունենան մտահոգութեան, անհանգստութեան եւ վիշտի խառնաշփոթութիւն: Բայց Ան խոստացած է, որ իր բացակայութեան պարագային՝ Սուրբ Հոգին ներկայ է մեզ միսիթարելու համար:

**Աղօթք** - Միրելի Յիսուս, շնորհակալութիւն Յոգիին միսիթարութեան եւ խորհուրդին համար: Ամէն:

**Կան շատ բաներ, որոնք կ'անհանգստացնեն ու կը նեղեն մեզ, սակայն կարելի է խնդրել Սուրբ Հոգիին միսիթարիչ ներկայութիւնը:**



Կիսե՛ հացդ անօթիին հետ, տո՛ւնդ ընդունե՛ անպատասպար դժբախտները, ծածկե՛ մերկը՝ երբ զայն տեսնես, ու մի՛ անտեսեր քու ընկերդ: [Ես. 58. 7]

## ՈՒՏԵԼԻՔ ԱՆՕԹԻՒՆ

**Տ**արիներ շարունակ՝ Ափրիկէի եղջիւրը (*Horn of Africa*) տուժած է դժժան երաշտէն, որ աւերած է չրջանի բերքը, սպաննած անասունները եւ վտանգած միլիոնաւոր մարդկանց: Ամենախոցելիներու թիւին մէջ - օրինակի համար՝ Գենիայի (*Kenya*) Գահումա (*Kahuma*) Գաղթակայանի բնակիչներուն նման, որոնք փախուստ տուած էին պատերազմներէն եւ ճնշումներէն - աւելի սարսափելի էր վիճակը: Վերջերս հրապարակուած տեղեկագրութիւն մը նկարագրեց՝ թէ ինչպէս երիտասարդ մայր մը կը բերէր իր երեխան գաղթակայանի պաշտօնեաներուն մօտ: Երեխան կը տառապէր սաստիկ թերանունդէ, պատճառ ըլլալով անոր «մագերն ու մաշկը՝ չոր եւ փխրուն ըլլալով»: Ան չէր ժպտար, չէր ուտեր: Անոր փոքրիկ մարմինը կամաց կամաց կը փակուէր: Անմիջապէս մասնագէտները միջամտեցին: Բարեբախտաբար՝ հակառակ անոր որ կարիքները թէեւ մեծ էին, հատատուած է ենթակառոյց մը, որ կ'ապահովէ կեանքի ու մահուան անյապաղ անհրաժեշտութիւնները:

Այս յուսահատ վայրերը՝ ճիշդ այն տեղերն են, ուր Աստուծոյ ժողովուրդը կանչուած է շողացնելու Անոր լոյսն ու սէրը (Ես. 58. 8): Երբ մարդիկ սովամահ կ'ըլլան, կը հիւանդանան կամ սպառնալիք ունենան, Աստուած կը կանչէ իր ժողովուրդին, որ նախ տրամադրեն սնունդ, բժշկութիւն եւ անվտանգութիւն, ու այս բոլորը Յիսուսի անունով: Եսայի յանդիմանեց հին Իսրայէլին՝ այն բանին համար, որ կը կարծէին թէ իրենք հաւատարիմ են իրենց ծոմապահութեան եւ աղօթքներուն՝ անտեսելով իրական գթասիրտ աշխատանքը, որ կը պահանջէր ճգնաժամը. «Կիսել հացդ անօթիին հետ, տո՛ւն ընդունիլ անպատասպար դժբախտները, ծածկել՝ մերկը» (Հմ. 7):

Ան կը գործէ մեր մէջ եւ մեր միջոցով, բաւարարելու կարիքներ:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինձի ըլլալու մէկ մասը թէ Դուն ինչպէ՛ս սնունդ, սեր եւ միտքաբարեկամ կու տաս անոնց, որոնք անօթի ու սեղութեան մէջ են: Ամէն:

**Երբ մեր շուրջ կայինք, պիտի տեսնենք անօթութիւն եւ կարիք: Աստուած կոչ՛ կ'ընէ որ մեր օգնութեան ձեռքը երկարենք կարիքաւորներուն:**

Իմ տազևապիս մէջ Տերոյ գոչեցի, եւ ան ինծի պատասխանեց դժոխքին փորէն օգնութեան կանչեցի ու ձայնս լսեցիր: [Յով. 2. 2]

## ԱՍՏՈՒԾՄԷ ՓԱԽՉԻԼ

**Ճ**ուլի եւ Հիզ կը նաւարկէին Գալիլիոյ ծովափին մօտերը՝ տեսնելու կողմ կէտձուկեր: Կէտձուկերը յայտնի են՝ ջուրին մակերեսին մօտէն լողալով, որ կը դիւրացնէ զանոնք նկատելը: Երկու կիները ստացան իրենց կեանքի մեծագոյն անակնկալը, երբ կէտձուկ մը յայտնուեցաւ՝ ճիշդ իրենց տակը: Դիտողներէն մէկը՝ կրցաւ նկարել անոնց հանդիպումը, ուր կը տեսնուի կէտձուկին մեծ բերանը եւ անոր մօտ՝ ձուլին եւ Հիզը իրենց նաւակով որպէս գաճաճ: Կարճ ժամանակով ջուրի յատակ երթալէն ետք, կիները մնացին անվնաս:

Անոնց ունեցած փորձառութիւնը կ'առաջարկէ «մեծ ձուկ» մը՝ Յովնան մարգարէն կուլ տալու Աստուածաշունչի պատմութեան մէկ հեռանկար մը (Յով. 1. 17): Աստուած պատուիրած էր Յովնանի քարոզել Նինուեցիներուն, բայց քանի որ անոնք մերժած էին Աստուծոյ, ան խորհեցաւ որ անոնք արժանի չեն ներում ստանալու: Հնազանդելու փոխարէն՝ ան փախաւ՝ նաւ մը բարձրանալով: Աստուած վտանգաւոր փոթորիկ մը հանեց եւ Յովնանը ծովը նետեցին:

Աստուած հնարաւորութիւն տուաւ պահելու Յովնանի ու ազատելու մահէն՝ բաց ծովին մէջ եւ խնայեց զինք իր արարքներուն վատթարագոյն հետեւանքներէն: Յովնան «Տէրոջ գոչեց» կէտձուկին փորէն եւ Աստուած լսեց (2. 2): Յովնան իր մեղքը ընդունեց եւ արտայայտեց իր գովասանքը ու Աստուծոյ բարութեան ճանաչումը, Աստուծոյ հրամանով ձուկը ցամաքի վրայ դուրս փսխեց զինք (Հմ. 10):

Աստուծոյ շնորհքով, երբ մենք կ'ընդունինք մեր սխալ արարքները եւ կը հաւատանք Յիսուսի զոհաբերութեան, մենք զերծ կը մնանք այն հոգեւոր մահէն, որու արժանի ենք եւ նոր կեանք կ'ունենանք Իր միջոցով:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կ'ընդունիմ սխալ արարքներս եւ շնորհակալութիւն կը յայտնեմ Զեզի՝ Յիսուսի միջոցով՝ ինծի նոր կեանք տալուդ համար: Ամէն:

**Ե՞րբ «փախուստ տուած ես» Աստուծմէ: Ինչպի՞սի փորձառութիւն ունեցած ես Յիսուսի միջոցով:**

Ուստի պատիւ կը համարենք ընդունելի ըլլալ անոր, մօտ թէ հեռու: [Բ. Կորնթ. 5. 9]

## ՅՈ՛ՅՍ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԷՁ

**Ճ**էրէմիին (Jeremy) չհասկցաւ՝ թէ ինչ բանի մէջ կը մտնէր, երբ եկաւ համալսարան իր երամեայ դասընթացքին համար եւ խնդրեց հանրակացարանի ամենաժան սենեակը: Ան պատմեց. «Այդ՝ ահրելի էր: Սենեակը եւ լուացարանը սոսկալի էին»: Բայց ան ունէր քիչ դրամ եւ քիչ ընտրութիւն: Ապա շարունակեց եւ ըսաւ. «Միակ բանը որ կրնայի ընել, մտածել՝ թէ երեք տարիներ ետք, լաւ տուն մը ունիմ վերադառնալու, այնպէս որ կը կառչիմ անոր եւ առաւելագոյնս կ'օգտուիմ այստեղ իմ ժամանակէս»:

Ճէրէմիի պատմութիւնը կը ցոլացնէ մեր «երկրային վրանին» մարդկային մարմինին մէջ, ապրելու մեր ամէնօրեայ մարտահրաւէրները, մարմին մը՝ որ կը մեռնի, (Բ. Կորնթ. 5. 1), կը գործէ աշխարհի մը մէջ, որ կ'անցնի (Ա. Յովհ. 2. 17): Հետեւաբար «ծանրութեան տակ կը հառաչենք» (Բ. Կորնթ. 5. 4), մինչ կը պայքարինք՝ յաղթահարելու այն բազում դժուարութիւնները, որոնք կեանքը կը նետէ մեր վրայ:

Մեզ հաստատ կը պահէ յոյսը, որ օր մը մենք կ'ունենանք անմահ, յարութիւն առած մարմին մը՝ «երկնաւոր բնակութիւն» (Հմ. 4) եւ կ'ապրինք աշխարհի մը մէջ, ուր գերծ կը մնանք ներկայի հառաջանքներէն եւ պատրանքներէն (Հռոմ. 8. 19-22): Այս յոյսը մեզի հնարաւորութիւնը կու տայ՝ առաւելագոյն օգուտը քաղելու այս կեանքէն, որ Աստուած սիրով տուած է: Ան նաեւ կ'օգնէ մեզի օգտագործելու իր տուած կարելութիւններն ու տաղանդները, որպէսզի մենք կարենանք ծառայել Իրեն եւ ուրիշներու: Եւ այդ է պատճառը, որ «պատիւ կը համարենք ընդունելի ըլլալ անոր, մօտ թէ հեռու» (Բ. Կորնթ. 5. 9):

**Աղօթք** - Յայր, անհամբեր կը սպասեմ Զեզի հետ ըլլալու՝ Զու երկնային տանդ մէջ: Շնորհակալ եմ խոստումիդ եւ ուժին համար, որ այս յոյսը կու տայ ինծի ամէն օր: Ամէն:

**Մենք մեզի յիշեցնելու ենք Աստուծոյ տուած յոյսին մասին եւ նոյն ատեն քաջալերել ուրիշները, որ նոյն յոյսը ունենան Աստուծոյ մէջ:**



«Ճշմարտապետ, ճշմարտապետ կը յայտարարեմ քեզի.  
'Եթէ մէկը ջուրէն ու Յոգիէն չծնի՝ չի կրնար մտնել Աստուծոյ  
թագաւորութիւնը»։ [Յովհ. 3. 5]

## ՎԵՐՍՏԻՆ ԾՆԱԾ

**Մ**եռելաթաղ ընկերութեան տնօրէնը հարցուց. «Վերստին  
ծնա՞ծ: Ի՞նչ կը նշանակէ: Ես երբէ՛ք չեմ լսած այդ  
արտայայտութեան մասին»: Օգտուելով առիթէն, մահացողին  
որդին բացատրե՛ց թէ ի՞նչ կը նշանակէ վերստին ծնիլ՝  
Յովհաննու 3-րդ գլուխին խօսքերով:

Ան ըսաւ. «Իրականութիւնը այն է՝ թէ մենք բոլորս մէկ  
անգամ կը ծնինք այս աշխարհին մէջ: Աստուած կախարդական  
կշիռք մը չունի, որով կռէ մեր լաւ գործերը՝ վատերուն հետ:  
Աստուած կը պահանջէ, որ մենք ծնինք Հոգիէն: Ահա՛ թէ ինչու  
Յիսուս մեռաւ խաչին վրայ: Ան վճարեց մեր մեղքերուն գինը  
եւ հնարաւորութիւն տուաւ մեզի ունենալու յաւիտենական  
կեանք իր հետ: Մենք ինքնուրոյն չենք կրնար այդ բանը ընել»:

Յովհաննու 3-ին մէջ Նիկողեմոս սկսաւ կասկածիլ, թէ  
արդե՞օք ինք իսկապէս ամէն ինչ հասկցած է: Ըլլալով Սուրբ  
Գրութիւններու պատրաստուած ուսուցիչ (Հմ. 1), ան գիտէր  
որ Յիսուս՝ կը տարբերի ուրիշներէն եւ Անոր ուսուցումը ունի  
իշխանութիւն (Հմ. 2): Ան կ'ողգէր ինքն իրեն պարզել, ուստի  
գիշեր մը մօտեցաւ Քրիստոսի, որպէսզի հարցը կարգաւորէ:  
Նիկողեմոս պէտք է ընդունած ըլլար Յիսուսի «գուք պէտք է  
վերստին ծնիք» (Հմ. 7) արտայայտութիւնը եւ հաւատացած  
անոր, որովհետեւ ան օգնեց պատրաստելու Փրկիչին մարմինը  
թաղման համար՝ խաչուելէն ետք (19. 39):

Մեռելաթաղի ընկերութեան տնօրէնը համաձայնեցաւ տուն  
երթալ եւ կարդալ Յովհաննու Աւետարանին երրորդ գլուխը:  
Որդիին նման՝ որ խօսեցաւ տնօրէնին հետ, եկէ՛ք ի սրտէ  
ընդունինք Յիսուսի խօսքերը եւ կիսե՛նք զանոնք ուրիշներու  
հետ, մինչ Ան կ'օգնէ մեզի:

**Աղօթք** - Սիրելի Յայր, շնորհակալ եմ, որ թոյլ տուիր վերստին  
ծնելու: Թող Յոգիդ բնակի անոնց սիրտերուն մէջ, որոնց հետ որ  
կը կիսուիմ՝ վերստին ծնելու անհրաժեշտութիւնը: Ամէն:

**Ի՞նչ կը նշանակէ քեզի համար վերստին ծնիլ: Ինչպե՞ս կրնաս  
կիսել անոր իմաստը ուրիշներու հետ:**

Եսաւ վազեց զայն (Յակոբը) դիմաւորելու. զայն գրկեց: [Ծն. 33. 4]

## ԱԶԱՏՈՒԼ ՌՂԵԲԵՌՆԷՆ

**Գ** ուէճի մէջ՝ մէկ կիսամեակ ուսումնասիրեցի Ուիլյամ Շէքսպիրի (William Shakespear) ստեղծագործութիւնները: Դասընթացքը կը պահանջէր՝ հսկայ՝ ու շատ ծանր դասագիրք մը, որ կը պարունակէր Շէքսպիրի բոլոր գրածները: Գիրքը կը կշռէր մի քանի քիլօ եւ ես ստիպուած էի զայն կրել ժամերով: Այդ ծանրութիւնը կրելով՝ մէջքս ցաւցուցի եւ ի վերջոյ ան կտրեց պայուսակիս մետաղէ ամրակը:

Որոշ բաներ պարզապէս շատ ծանր են՝ կրելու համար: Օրինակ՝ անցեալի ցաւէն յառաջացած զգացական բեռը՝ կրնայ մեզ ծանրաբեռնել՝ դառնութեամբ եւ ատելութեամբ: Բայց Աստուած կը ցանկայ, որ մենք ազատութիւն ունենանք մարդկանց ներելու եւ հնարաւորութեան պարագային՝ անոնց հետ հաշտուելու (Կող. 3. 13): Որքա՞ն խորունկ է ցաւը, այնքան աւելի երկար կրնայ տեւել անկէ ազատուիլը: Սակայն, ամէն ինչ կարգին կ'ըլլայ: Երկար տարիներ պահանջեցին, որ Եսաւ ներէ Յակոբին՝ իր անդրանիկի իրաւունքը ու օրհնութիւնը գողնալուն համար (Ծն. 27. 36):

Երբ անոնք վերջապէս միացան, Եսաւ ողորմութիւնով ներեց իր եղբօր եւ նոյնիակ «գրկեց զայն» (33. 4): Ո՛չ մէկ բառ չփոխանակեցին, մինչեւ որ երկուքն ալ լացին: Ժամանակի ընթացքին մեղմացաւ Եսաւի բարկութիւնը, որ ստիպած էր զինք սպաննութեան մասին մտածելու (27. 41): Եւ այդ բոլոր տարիները Յակոբին տուին առիթը՝ տեսնելու հարցին մեծութիւնը, թէ ինչպէ՞ս վնասած էր իր եղբօր: Ան խոնարհ եւ յարգալից էր վերամիացումին ընթացքին (33. 8-11):

Ի վերջոյ, երկու եղբայրներն ալ եկան այնտեղ, ուր ո՛չ մէկը միւսէն ոչինչ կը պահանջէր (Հմ. 9, 15): Բաւական էր ներել ու ներուիլ եւ ազատուիլ անցեալի ծանր բեռէն:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ ազատե՛ գիս դառնութենէն եւ բարկութենէն: Ամէն:

**Ո՞ր տեսակի վիրաւորանքները քեզի համար ամենէն դժուարն են ներելու: Ինչպէ՞ս ուրիշներուն ներելը կ'արտացոլայ՝ մեր յարաբերութիւնը մեր երկնաւոր Զօր հետ:**



Ամեն բանի մէջ՝ աղօթքով ու աղերսանքով, շնորհակալութեամբ միասին, գիտցուցէ՛ք ձեր խնդրանքները Աստուծոյ: [Փիլ. 4. 6]

## ԴԱԴԱՐ ԱՂՕԹԵԼՈՒ

**Մ**իսիսիփիի (Mississippi) մէջ՝ օգերեւուլթաբան մը, համացանցին վրայ տարածուեցաւ Մարտ 24, 2023-ին՝ եղանակի կանխատեսման ժամանակ վեց պարզ, բայց խորիմաստ բառեր արտասանելուն համար: Մէլթ Նաուպհան (Matt Laubhan) կը հետեւէր սաստիկ փոթորիկի մը, երբ հասկցաւ որ աղետալի փոթորկահանով մը կը պատրաստուի հարուածելու Ամորի (Amory) քաղաքին: Ծիշդ այդ պահուն Նաուպհան կանգ առաւ հեռուստացոյցի ուղիղ սփռումի ընթացքին՝ ըսելու այս աղօթքը, որ կը լսուէր ամբողջ աշխարհի մէջ. «Միտելի Յիսուս, կը խնդրեմ՝ օգնէ անոնց: Ամէն»: Որոշ հեռուստադիտողներ աւելի ուշ ըսին, որ աղօթքը դրդած էր գիրենք պատասպարուելու: Անոր ինքնաբուխ եւ սրտանց աղօթքը կրնար օգնած ըլլալ փրկելու անթիւ կեանքեր:

Մեր աղօթքները նոյնպէս կրնան փոխել վիճակներ: Պարտադիր չէ՛, որ անոնք երկար աղօթքներ ըլլան: Կրնան ըլլալ կարճ ու քաղցր. եւ կարելի է ըսել օրուան որեւէ ժամուն: Անկախ անկէ՛ թէ մենք մեր աշխատավայրն ենք, գործեր կ'ընենք կամ արձակուրդի մէջ ենք, մենք կրնանք «անդադար աղօթել» (Ա. Թես. 5. 17):

Աստուած կը սիրէ լսել, որ մենք կ'աղօթենք ամբողջ օրուան ընթացքին: Պօղոս առաքեալ կը յիշեցնէ մեզի, որ մենք պէտք չէ ըլլանք անհանգստութեան կամ վախի գերի, այլ մեր բոլոր հոգերն ու մտահոգութիւնները տանինք Աստուծոյ. «Մի՛ մտահոգուիք որեւէ բանի համար. հապա ամէն բանի մէջ՝ աղօթքով ու աղերսանքով, շնորհակալութեամբ միասին, գիտցուցէ՛ք ձեր խնդրանքները Աստուծոյ: Եւ Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն միտքէ գերիվեր է, պիտի պահպանէ ձեր սիրտերն ու մտածումները՝ Յիսուս Քրիստոսով» (Փիլ. 4. 6-7):

Անկախ անկէ՛ թէ մենք կը վայելենք պայծառ օր մը, թէ կը հարուածուինք կեանքի բառացի կամ փոխաբերական փոթորիկներէն, յիշենք դադար առնել եւ աղօթել:

**Աղօթք** - 3ա՛յր, շնորհակալ եմ որ կրնամ աղօթել Քեզի՝ որեւէ ատեն: Ամէն: **Ինչպէ՞ս կրնանք աւելի միտումնաւոր ըլլալ աղօթելու հարցին մէջ:** **Ինչպէ՞ս աճած է մեր աղօթքի կեանքը տարիներու ընթացքին**

Այն օրը՝ Տերոջ շառաւիղը Փառաւոր եւ պատուական պիտի ըլլայ: [Ես. 4. 2]

## ԳԵՂԵՑԻԿ ԱՆԱԿՆԿԱԼ ՄԸ

Հ երկուսը հողը գաղտնիք մը կը պարունակէր՝ պահուած բան մը: Նախապատրաստուելով իրենց ամուսնութեան յիստներորդ տարեդարձին, Լի Ուիլսըն (Lee Wilson) առանձնացուցած էր շուրջ 325 հազար մեթր քառակուսի հողատարածք մը, որպէսզի իր կնոջ համար արտադրէ մեծագոյն ծաղիկի նուէրը: Ան գաղտնաբար տնկեց անհաշիւ արեւածաղիկի հունտեր, որոնք ի վերջոյ տուին 1.2 միլիոն ոսկեղէն բոյսեր, որոնք իր կնոջ սիրելի էին: Երբ արեւածաղիկները բարձրացուցին իրենց դեղին թագերը, Ռենէ (Renee) անակնալի եկաւ եւ մեծապէս տպաւորուեցաւ Լիի սիրոյ այս գեղեցիկ արարքով:

Խօսելով Յուդայի ժողովուրդին հետ՝ Եսայի մարգարէին միջոցով, Աստուած անոնց հետ կիսեց գաղտնիք մը. թէ եւ անոնք չէին կրնար տեսնել հիմա, իրեն հանդէպ անհաւատարիմ ըլլալնուն համար՝ անոնց դէմ իր խոստացած դատաստանէն յետոյ (Ես. 3. 1 – 4. 1), նոր եւ ոսկի օր մը կը բացուէր: «Այն օրը՝ Տէրոջ շառաւիղը Փառաւոր եւ պատուական պիտի ըլլայ: Ու երկրին պտուղը մեծափառութեան եւ շքեղութեան համար պիտի ըլլայ Իսրայէլի ազատուածներուն» (4. 2): Այո՛, անոնք ակերածութեան եւ աքսորի փորձառութիւնը պիտի ունենային՝ Բաբելոնի ձեռքով, բայց գեղեցիկ «շառաւիղ» մը՝ գետինէն դուրս եկած նոր ծիւ մը, այդ ժամանակ պիտի երեւնայ: Անոր ժողովուրդին մնացորդը՝ առաձնացուած («սուրբ», Հմ. 3), մաքրուած (Հմ. 4), սիրով առաջնորդուած եւ պիտի խնամուին իր կողմէ (Հմ. 5-6):

Մեր օրերը կրնան մութ թուիլ եւ Աստուծոյ խոստումներուն կատարումը պահուած: Բայց երբ մենք հաւատքով կառչինք իրեն, օր մը Անոր բոլոր «ամենամեծ եւ պատուական խոստումները» պիտի կատարուին (Բ. Պետ. 1. 4): Գեղեցիկ նոր օր մը կը սպասէ մեզի:

**Աղօթք** - Հայր, շնորհակալութիւն քեզի՝ Զու հաւատարիմ խոստումներուդ գեղեցկութեան համար: Ամէն:

**Երբեմն Աստուծոյ տուած խոստումները կրնան պահուած թուիլ, սակայն մենք ընդունելու ենք զանոնք հաւատքով:**



Ինչ որ կայսրին է՝ կայսրի՛ն տուէք, եւ ինչ որ Աստուծոյ է՝  
Աստուծոյ: [Մար. 12. 17]

## ՄԵԾ ԲԱԺԱՆՈՒՄԸ

**Դ**ասական Պիստակի (*Peanuts*) կատակերգական երիզի մը մէջ, *Լայնըսի (Linus)* ընկերը կը նախատէ զինք՝ Մեծ Դդու մի հանդէպ իր ունեցած հաւատքին համար: Վհատած հեռանալով, *Լայնըս* կ'ըսէ. «Կա՛ն երեք բաներ, որ ես սորված եմ երբէ՛ք չբննադատել մարդոց հետ ...կրօնք, քաղաքականութիւն եւ Մեծ Դդու մ»:

Մեծ Դդու մը գոյութիւն ունէր միայն *Լայնըսի* գլուխին մէջ, բայց միւս երկու նիւթերը շատ իրական են՝ որոնք կը բաժանեն ազգեր, ընտանիքներ եւ ընկերներ: Խնդիրը ծագեցաւ նաեւ Յիսուի օրերուն: Փարիսեցիները խորապէս կրօնասէր էին եւ կը փորձէին մինչեւ վերջ հետեւիլ Հին Կտակարանի օրէնքին: Հերովդեսականները աւելի քաղաքական էին, սակայն երկու խումբերն ալ կը ցանկային տեսնել Հրեայ ժողովուրդին՝ ազատուած Հռոմէական ճնշումներէն: Կը թուէր այնպէս թէ Յիսուս չէր կիսէր անոնց նպատակները: Ուստի, անոնք մօտեցան Անոր՝ քաղաքական միտումով եղած հարցով. պէ՞տք է ժողովուրդը հարկ վճարէ Կայսրին (Մարկ. 12. 14-15): Եթէ Յիսուս ըսեր այո՛, ժողովուրդը պիտի նեղանար Իրմէ: Եթէ ան ըսեր ոչ, Հռոմայեցիները կրնային զինք ձեռքակալել՝ ապստամբութեան համար:

Յիսուս դահեկան մը խնդրեց: Ան հարցուց. «Որո՞ւնն են այս պատկերն ու գրութիւնը» (Հմ. 16): Բոլորն ալ գիտէին թէ՛ Կայսրինն էր: Յիսուսի խօսքերը այսօր կը հնչեն. «Ինչ որ Կայսրին է՝ կայսրի՛ն տուէք, եւ ինչ որ Աստուծոյ է՝ Աստուծոյ տուէք» (Հմ. 17): Իր առաջնահերթութիւնները իրենց կարգին, Յիսուս զգուշացաւ անոնց ծուղակէն:

Յիսուս եկաւ կատարելու Իր Հօր կամբը: Հետեւելով Անոր առաջնորդութեան, մենք ալ նոյնպէս կրնանք ամէն բանէ առաջ՝ փնտռել Աստուած եւ Իր թագաւորութիւնը՝ մեր կեդրոնացումը ուղղելու հերժուածութիւններէն հեռու դէպի Ան, որ ճշմարտութիւնն է:

**Աղօթք** - Յայր, Զու իմաստութեանդ եւ առաջնորդութեանդ պետք ունիմ իմ բոլոր փոխազդեցութիւններու համար: Ամէն:  
**Բաժանարար խնդիրներ մեզ կ'անհանգստացնեն, սակայն Յիսուսի վրայ կեդրոնանալով՝ կարելի է հեռու մնալ բաժանող հարցերէն:**



Ուրեմն զգուշացէ՛ք որ ընթանաք շրջահայեցութեամբ ...  
իմաստուններու պէս: Գնեցէ՛ք ժամանակը: [Եփ. 5. 15-16]

## ԼԱԻ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ԺԱՄԱՆԱԿ

Մարտ 14, 2019-ին՝ NASA-ի հրթիռները բռնկեցան՝ պարզելով տիեզերագնաց Քրիսթինա Գոչը՝ (Christina Koch) դէպի Միջազգային Տիեզերակայանը: Գոչ՝ պիտի չվերադառնար երկիր՝ 328 օրեր՝ անոր տալով կնոջ կողմէ ամենաերկար շարունակական տիեզերական թռիչքի՝ գրանցումը: Ամէն օր, ապրելով երկրէն մօտաւորապէս 254 մղոն բարձրութեան վրայ, ցուցապաստար մը ցոյց կու տար տիեզերագնացին ժամանակը՝ հինգ վայրկեանի հանգրուաններով: Ան ունէր կատարելիք անհաշիւ ամէնօրեայ պարտականութիւններ՝ ճաշէն մինչեւ փորձարկումներ եւ ժամ առ ժամ կարմիր գիծ մը ցոյց կու տար՝ եթէ Գոչ ժամանակացոյցէն առաջ է թէ ետ կը նմայ: Կորսնցնելու ո՛չ մէկ ժամանակ ունէր:

Թէեւ Պօղոս առաքեալ՝ անշուշտ խորհուրդ չտուաւ մեր կեանքին վրայ իշխող կարմիր գիծի նման անհանգստացնող որեւէ բան մը ունենալ, սակայն խրախուսեց մեզ ուշադիր օգտագործելու մեր արժէքեւոր եւ սահմանափակ ժամանակը: Ան գրեց. «Ուրեմն զգուշացէ՛ք, որ ընթանաք շրջահայեցութեամբ. ո՛չ թէ անխոհմտներու պէս, հապա՛ իմաստուններու պէս: Գնեցէ՛ք ժամանակը, որովհետեւ օրերը չար են» (Եբ. 5. 15-16): Աստուծոյ իմաստութիւնը մեզի կը հրահանգէ լեցնելու մեր օրերը մտադրութեամբ եւ հոգատարութեամբ, ի գործ դնելով՝ հնազանդութիւն ցոյց տալ Անոր, սիրել մեր դրացին եւ մասնակից ըլլալ Յիսուսի շարունակական փրկագնումին աշխարհի մէջ: Սակայն դժբախտաբար կարելի է անտեսել իմաստութեան խրատը եւ փոխարէնը անմտաբար օգտագործել մեր ժամանակը (Հմ. 17) փճացնելով մեր տարիները եսասիրական կամ կործանարար հետապնդումներու մէջ:

Հնազանդութեամբ եւ վստահութեամբ հետեւիք Աստուծոյ, որ կ'օգնէ մեզի՝ առաւելագոյն չափով օգտագործելու մեր օրերը:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի գնելու ժամանակը եւ իմաստութեամբ գործածելու զայն: Ամէն,  
**Ի՞նչ կը նշանակէ քեզի համար ժամանակը: Ինչպէ՞ս կրնաս այսօր առաւելագոյնս օգտագործել ժամանակը:**

Ձեզմէ ո՛վ որ ուզէ մեծ ըլլալ՝ անիկա ձեր սպասարկո՛ւն թող ըլլայ: [Մատթ. 20. 26]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԾԱՌԱՅԵԼ՝ ԲԱՐԻԻ ՅԱՄԱՐ

**Պրէտ՝ (Brad)** տեղափոխուեցաւ քաղաք եւ շուտով գտաւ եկեղեցի մը, ուր կրնար Աստուած պաշտել: Քանի մը շաբաթներ գնաց պաշտամունքի, իսկ յետոյ Կիրակի մը ան խօսեցաւ հովիւին հետ՝ որեւէ տեսակի ծառայութիւն մատուցանելու իր ցանկութեան մասին: Ան ըսաւ. «Ես պարզապէս կ'ուզեմ ձեռքս առնել ցախաւելը ու գործի լծուիլ»: Ան սկսաւ օգնելով պաշտամունքներու համար աթոռները շարելու եւ գուգարանները մաքրելու: Եկեղեցիի ընտանիքը աւելի ուշ իմացաւ, որ Պրէտ օժտուած էր ուսուցանելու պարգեւով, բայց ան պատրաստ էր ամէն ինչ ընելու:

Յիսուս իր աշակերտներէն երկուքին՝ Յակոբոսի եւ Յովհաննէսի եւ անոնց մօրը՝ ծառայութեան դաս մը տուաւ: Անոնց մայրը խնդրեց, որ իր որդիները պատուաւոր տեղ ունենան՝ Քրիստոսի աջ եւ ձախ կողմերը, իր թագաւորութեան մէջ (Մատթ. 20. 20-21): Միւս աշակերտները լսեցին այս մասին եւ բարկացան: Գուցէ անոնք կ'ուզէին ունենալ այդ պաշտօնները իրենց համար: Յիսուս ըսաւ, որ ուրիշներու վրայ իշխանութիւն գործադրելը՝ ապրելու ձեւ չէ՝ (Հմ. 25-26), բայց փոխարէնը՝ ծառայելը ամենակարեւորն է: «Ձեզմէ ո՛վ որ ուզէ մեծ ըլլալ անիկա ձեր սպասարկո՛ւն թող ըլլայ» (Հմ. 26):

Պրէտի «ցախաւելը ձեռք առնելու» խօսքը՝ գործնական պատկեր մըն է բանի մը համար, թէ մեզմէ իւրաքանչիւրը՝ ի՞նչ կրնայ ընել մեր համայնքներուն եւ եկեղեցիներուն մէջ՝ Քրիստոսի ծառայելու համար: Պրէտ՝ նկարագրեց իր կեանքի ցանկութիւնը Աստուծոյ հանդէպ՝ այսպէս. «Ես կ'ուզեմ ծառայել Աստուծոյ փառքին, աշխարհի բարօրութեան եւ իմ ուրախութեանս համար»: Ինչպէ՞ս դո՛ւն եւ ե՛ս կրնանք «ցախաւել ձեռք առնել», երբ Աստուած կ'առաջնորդէ մեզ:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, Դուն այնքա՛ն շատ բան ըրած ես ինձի համար եւ արժանի ես իմ սիրոյս: Կը խնդրեմ՝ զօրացո՛ւր զիս եւ ցո՛յց տուր, թէ ինչպէ՛ս ծառայեմ ուրիշներուն: Ամէն:

**Ինչպէ՞ս կրնաս ծառայել քու եկեղեցիի ընտանիքին:**  
**Ե՛րբ պիտի սկսիս:**

Հաստատ միտքը կատարեալ խաղաղութան մէջ կը պահես, որովհետեւ քեզի կը վստահի: [Ես. 26. 3]

## ՄԵՐ ՎՍՏԱ՛ՅԵԼԻ ՀԱՅՐԸ

**Վ**եց ոտնաչափ եւ երեք՝ իմ որդիս՝ Զաւյէր (Xavier), դիւրութեամբ վեր բարձրացուց իր քրքրջացող փոքր որդին՝ Զարիան (Xarian): Ան իր մեծ ձեռքերը փաթթեց իր որդիին փոքր ոտքերուն շուրջ, զանոնք ամրացնելով իր ափերուն մէջ: Երկարելով իր երկար թեւը՝ ան խրախուսեց իր որդիին, որ ինքնուրոյն հաւասարակշռուի, բայց իր ազատ միացած ձեռքը պահեց, որպէսզի անհրաժեշտութեան պարագային՝ բռնէ զինք: Զարիան՝ ոտքերը ուղղեց եւ կանգնեցաւ: Լայն ժպիտով եւ ձեռքերը՝ շիտակ իր կողքին դրած, աչքերը հաստատուեցան իր հօր հայեացքին վրայ:

Եսայի մարգարէն յայտարարեց՝ մեր երկնաւոր Հօր վրայ կեդրոնանալու օգուտներուն մասին. «Հաստատ միտքը կատարեալ խաղաղութեան մէջ կը պահես, որովհետեւ քեզի կը վստահի» (Ես. 26. 3): Ան խրախուսեց Աստուծոյ ժողովուրդին նուիրուած ըլլալու՝ զինք փնտռելու՝ Սուրբ Գիրքերուն մէջ եւ կապուելու իր հետ՝ աղօթքի եւ երկրպագութեան միջոցով: Այդ հաւատարիմները՝ վստահութեան փորձառութիւն կ'ունենան՝ կառուցուած Հօրը հետ իրենց հաստատած՝ ընկերակցութեան շնորհիւ:

Որպէս Աստուծոյ սիրելի զաւակներ՝ մենք կրնանք համարձակութեամբ աղաղակել. «Յաւերժ Տէրոջ վստահեցէք, քանի որ Տէրը՝ Եհովան յաւիտենական վէմ է» (Հմ. 4): Ինչո՞ւ: Որովհետեւ մեր Երկնաւոր Հայրը վստահելի է: Ան եւ Սուրբ Գրութիւնները երբէ՛ք չեն փոխուիր:

Երբ մենք մեր աչքերը կառչած պահենք Երկնաւոր Հօր վրայ, Ան մեր ոտքերը ամուր կը պահէ իր ձեռքերուն մէջ: Մենք կրնանք յոյս դնել իր վրայ, որ կը շարունակէ ըլլալ սիրառատ, հաւատարիմ եւ բարի՝ յաւիտեան:

**Աղօթք** - Հայր, շնորհակալ եմ, որ կը գործածես Սուրբ Գիրքը՝ յիշեցնելու ինծի Քու անփոփոխ սկարագիրիդ եւ յաւիտենական հաւատարմութեանդ մասին: Ամէն:

**Ինչպէ՞ս Աստուծոյ մասին քու մտքերդ պահելը՝ քեզի խաղաղաութիւն կու տայ: Ի՞նչ բան ըրած ես՝ ամբողջ օրուան ընթացքին՝ մտքերդ իր վրայ կեդրոնացնելու համար:**



Ահա՛ մեծ բազմութիւն մը կար, որ ո՛չ մէկը կրնար համրել, բոլոր ազգերէն, տոհմերէն, ժողովուրդներէն ու լեզուներէն: [Յայտ. 7. 9]

## ՍԻՐԵԼ ԱԶԳԵՐԸ

**Ո**րպէս կեդրոնական եւ հարաւային Ամերիկայի՝ երկու սիրող եւ աշխատասէր ծնողներու դուստրը՝ երախտապարտ եմ, որ անոնք քաջութիւնը ունեցան ըլլալու իրենց ընտանիքներուն մէջէն առաջինը, գաղթելու Միացեալ Նահանգներ՝ աւելի լաւ հնարաւորութիւններ ունենալու համար: Անոնք հանդիպեցան Նիւ Եօրքի մէջ՝ երիտասարդ տարիքի մէջ, ամուսնացան, ունեցան զիս եւ քոյրս եւ շարունակեցին իրենց գործը վարել:

Որպէս բնիկ Նիւ Եօրքի՝ ես մեծցած եմ՝ ընդունելով իմ Սպանական ժառանգութիւնս եւ հիացած եմ տարբեր ծագում ունեցող մարդոցմով: Օրինակի համար, ես քանի մը անգամ կիսեցի հաւատքիս պատմութեան մասին՝ բազմամշակութային եկեղեցիի երեկոյեան պաշտամունքի ընթացքին, որ տեղի կ'ունենայ Պրօտուէյի (Broadway) նախկին թատերասահին մէջ: Աստուծոյ սիրոյ մասին՝ բազմամշակութային խումբին հետ խօսիլը, միայն մէկ նշոյլ է՝ այն բանին, թէ ինչպէ՞ս կ'ըլլայ դրախտը, երբ մենք տեսնենք, որ տարբեր ազգերէ մարդիկ կը հաւաքուին՝ որպէ՛ս Քրիստոսի մարմինը:

Յայտնութեան գիրքին մէջ՝ Յովհաննէս՝ մեզի կու տայ դրախտի այս զարմանալի պատկերը. «Ահա՛ մեծ բազմութիւն մը կար, որ ո՛չ մէկը կրնար համրել, բոլոր ազգերէն, տոհմերէն, ժողովուրդներէն ու լեզուներէն: Անոնք կայնած էին գահին առջեւ եւ Գառնուկին առջեւ» (Յայտ. 7. 9): Աստուած՝ մեր Փրկիչը կը ստանայ «օրհնութիւն, գովասանք ու փառք» եւ շատ աւելին. Ան արժանի է անոնց «դարէ՛ դար» (Հմ. 12):

Այժմ մենք ընդամենը նշոյլ մը ունինք, թէ ինչպիսին պիտի ըլլայ դրախտի մէջ: Բայց օր մը մենք, որոնք կը հաւատանք Յիսուսի, կը միաւորուինք իր հետ եւ տարբեր երկիրներու, մշակոյթներու եւ լեզուներու մարդոց հետ: Քանի որ Աստուած կը սիրէ ազգերը, եկէ՛ք սիրենք նաեւ մեր համաշխարհային ընտանիքը՝ Քրիստոսով:

**Աղօթք** - Հայր կը խնդրեմ՝ օգնէ ինձի՝ լաւ սիրել ուրիշները: Ամէն: **Ինչպէ՞ս կրնանք սիրել ազգերը: Ինչպէ՞ս կրնանք յարգել ուրիշներ եւ անոնց մշակոյթը:**

Տերը իմ հովիւս է. ես ո՛չ մէկ բանի կարօտ պիտի ըլլամ:  
[Սաղմ. 23. 1]

## ՔԱՉՈՒԹԻՒՆ՝ ՀՈՎԻՒՆ

**Մ**արզադաշտ հաւաքուած մօտ 107,000 մարդ՝ կայնած կը սպասէր, թէ երբ Թէքսասի Ա. եւ Մ. (Texas A & M) Գոլֆֆֆի ֆուլթայօլի յարձակողական դիրքի վրայ խաղացող՝ Սէթ Սմոլ (Set Small) դուրս պիտի գար դաշտ՝ խաղի աւարտին հասնելու մնացած՝ ընդամէնը վերջին երկու վայրկեաններուն: Ա. եւ Մ.-ի հետ երկրի լաւագոյն խումբին բազմաթիւ տարիներու հօգորութեան դէմ, ո՛չ ոք 38-38-ով հաւասար մնացած էր: Դաշտային յաջորդ կօլը՝ պիտի նշանակէր դիւցազնային նեղացուցիչ յաղթանակ մը: Հանդարտ երեւոյթով՝ Սմոլ կեցաւ կեդրոնացած՝ գնդակը հարուածելու համար: Մարզադաշտը դիւային պոսթկոմով ժայթքեցաւ՝ երբ գնդակը անցաւ երկու ուղղաձիգ ձողներուն մէջէն՝ յաղթանակը հաստատելով:

Երբ լրագրողները հարցուցին, թէ ինչպէ՞ս ան պատրաստուեցաւ նման լարուած պահի մը համար. Սմոլ՝ ըսաւ, որ անընդհատ կը կրկներ իր մտքին մէջ Սաղմոս 23-ի առաջին տողը. «Տէրը իմ հովիւս է, ես ո՛չ մէկ բանի կարօտ պիտի ըլլամ»: Երբ Սմոլ ուժի եւ վստահութեան կարիքը ունեցաւ, ան կեդրոնացաւ Աստուծոյ՝ որպէս Հովիւ եղող խոր անձնական պատկերին վրայ:

Սաղմոս 23-ը՝ սիրելի Սաղմոս մըն է, որովհետեւ կը վստահեցնէ մեզի, որ մենք կրնանք խաղաղութեան մէջ ըլլալ կամ մխիթարուիլ, քանի որ ունինք սիրող եւ վստահելի հովիւ մը, որ գործնապէս հոգ կը տանի մեզի: Դաւիթ վկայեց դժուար եւ սաստիկ իրավիճակներու մէջ եղող վախի իրականութեան մասին, ու նաեւ՝ թէ ինչպէս Աստուած մխիթարութիւն կը շնորհէ (Հմ. 4): «Մխիթարութիւն» թարգմանուած բառը՝ կը փոխանցէ վստահութիւն կամ երաշխիք եւ կը հաստատէ քաջութիւն՝ շարունակելու մեր կեանքը Անոր առաջնորդող ներկայութեան մէջ:

Դժուար պարագաներու մէջ յիշենք, որ բարի Հովիւը՝ կը քալէ մեզի հետ:

**Աղօթք** - Երկնաւոր Հայր, կը խնդրեմ՝ օգնէ ինձի քաջութիւն ձեռք բերելու՝ իմանալով՝ որ Դուս սիրող Հովիւն ես: Ամէն:  
**Աստուած՝ սիրող, պաշտպանող եւ հոգացող Հովիւն է, ուստի եկէ՛ք վստահիւք Անոր՝ Իր տուած խնամքին ու հոգատարութեան համար:**

Ճշմարտախօս շրթունքը յաւերժ հաստատ կը մնայ, բայց ստախօս լեզուն միայն վայրկեան մը կը տեւէ: [Առ. 12. 19]

## ԳՐԵԹԷ ԵՒՇԴ՝ ՏԱԿԱԻՆ ՍԽԱԼ

**Շ**արժանկարչութի՞ւնը: Շատ լաւ էր: Չայնաւորո՞ւմը: Խոհական եւ հանդարտեցնող: Բովանդակութի՞ւնը: Հետաքրքրական եւ առնչակից: Պատրաստուած տեսաերիզը՝ կը ներկայացնէր հետազօտութիւն մը, ուր կը ներկայացուի Կարմրափայտ (Redwood) ծառերուն՝ եթիլամիւնի նման նիւթով մը սրսկուելը, որ պահէ զանոնք քնանալէ: Սակայն՝ սրսկուած ծառերը կը մեռնին, որովհետեւ անոնց թոյլ չտրուիր իրենց «ձմեռելու» շրջանը:

Տեսաերիզին պատգամը՝ ա՛յն էր, թէ՛ այդ նոյնը կրնայ նաեւ պատահիլ մեզի հետ, եթէ մենք միշտ զբաղած ըլլանք առանց հանգիստի եղանակներու: Եւ այդ կրնայ ճիշդ ըլլալ: Բայց տեսաերիզը՝ ճշգրիտ չէ՛ր: Նման ուսումնասիրութիւն մը երբէ՛ք չէ եղած: Կարմրափայտ ծառերը մշտադալար են եւ բնաւ չեն քնանար: Իսկ տեսաերիզին ծառերը՝ հսկայ Սէքուօեաս (Sequoias) ծառեր էին, ու ո՛չ թէ ծովեզերեայ Կարմրափայտ ծառեր: Որքա՛ն որ տեսաերիզը կը թուի ըլլալ լաւ մտածուած, այդ հիմնուած է՝ կեղծիքի վրայ:

Մենք կ'ապրինք դարաշրջանի մը մէջ, ուր մեր արուեստագիտութեան շնորհիւ՝ սուտը կը մեծնայ ու բազմապատկուի՝ մինչեւ, որ մեզի համոզէ, որ ատոնք ճշմարիտ են: Առակաց գիրքը՝ աստուածային իմաստութեան այդ համառօտութիւնը, յաճախ կը խօսի սուտի եւ ճշմարտութեան միջեւ եղած կտրուկ տարբերութեան մասին: «Ճշմարտախօս շրթունքը յաւերժ հաստատ կը մնայ, բայց ստախօս լեզուն միայն վայրկեան մը կը տեւէ» (12. 19): Եւ ճիշդ յաջորդ յաւելուած ասացուածքը մեզի կ'ըսէ. «Չարութիւն մտածողին սիրտին մէջ խաբէութիւն կ'ըլլայ, բայց խաղաղութեան համար խորհուրդ տուողները ուրախութիւն կ'ունենան» (Հմ. 20):

Անկեղծութիւնը՝ կը վերաբերի ամէն ինչի՝ Աստուծոյ պատուիրանքներէն՝ մինչեւ՝ ձմեռելու մասին տեսաերիզները: Ճշմարտութիւնը՝ «յաւիտեան կը մնայ»:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ տո՛ւր ինծի խոնարհութիւն, մինչեւ որ ես ամէն օր հետամուտ ըլլամ ճշմարտութեան: Ամէն: Ինչպէ՞ս կրնանք կասկածի տակ առնել մեր տեսածը, լսածը եւ փորձառութիւնը: Ինչպէ՞ս կը կատարենք ճշմարտութեան հանդէպ մեր հաւատարմութիւնը:

Կ'աղաչե՛մ Եւոզիայի ու կ'աղաչե՛մ Սիւնտիքի, որ ունենան միեւնոյն մտածումը Տերոջմով: [Փիլ. 4. 2]

## ՈՒՐԻՇ ՍԱՐԴՈՑ ԳՈՐԾԸ

**Մ**եր թոռնիկներէն չորսը՝ կը խաղային շոգեկառքի մանրանկար հաւաքածոյի մը հետ, իսկ երկու կրտսերները՝ կը վիճէին շարժակին մասին: Երբ մեր ութ տարեկան թոռնիկը սկսաւ միջամտել, անոր վեց տարեկան քոյրը ըսաւ. «Մի՛ անհանգստանար անոնց գործին համար»: Ասոնք՝ սովորաբար իմաստուն խօսքեր են բոլորիս համար: Բայց երբ վէճը վերածուեցաւ արցունքներու, մեծմայրիկը միջամտեց, բաժնեց եւ հանգստացուց վիճող երեխաներուն:

Լաւ է հեռու մնալ ուրիշներու գործերէն, երբ այդ կրնայ վատթարացնել մեր վիճակը: Բայց երբեմն՝ մե՛նք պէտք է աղօթքով միջամտենք: Փիլիպպեցիներուն ուղղած իր նամակին մէջ՝ Պօղոս առաքեալ օրինակ կու տայ, թէ ե՞րբ այդ բանը ընելու են: Հո՛ւ՛ ան կը խրարխուսէ երկու կիներու՝ Եւոզիայի եւ Սիւնտիքի, «ունենալու միեւնոյն մտածումը Տէրոջմով» (4. 2): Ըստ երեւոյթին, անոնց անհամաձայնութիւնը այնքա՛ն սրած էր, որ առաքեալը ստիպուած էր միջամտելու (Հմ. 3), թէեւ ան բանտն էր (1. 7):

Պօղոս գիտէր, որ կիներուն վէճը անմիաբանութիւն կ'առաջացնէր եւ ուշադրութիւնը կը հեռացնէր աւետարանէն: Այսպիսով, ան ազնուութեամբ խօսեցաւ ճշմարտութիւնը՝ յիշեցնելով, որ անոնց անունները գրուած են «կեանքի գիրքին մէջ» (4. 3): Պօղոս կը ցանկար, որ այս կիները եւ եկեղեցիին բոլոր անդամները՝ ապրին՝ որպէ՛ս Աստուծոյ ժողովուրդը՝ մտքերով եւ գործերով (Հմ. 4-9):

Երբ վստահ չենք, եթէ պէտք է միջամտենք, աղօթե՛նք վստահելով, որ «նաղաղութեան Աստուածը մեզի հետ պիտի ըլլայ» (Հմ. 9, տե՛ս Հմ. 7):

**Աղօթք** - Յայր, կը խնդրեմ՝ տո՛ւր ինծի իմաստութիւն, որպէսզի գիտնամ՝ թէ երբ պէտք է միջամտեմ եւ օգնե՛ ինծի ըսելու խօսքեր՝ բժշկութիւն եւ միասնութիւն բերելու համար: Ամէն:  
**Վեճերու եւ անհամաձայնութիւններու արդիւնքները շատ յաճախ արդիւնաւոր չեն ըլլար: Ուստի՝ փնտռենք Աստուծոյ առաջնորդութիւնը, որպէսզի գիտնանք թէ ինչպե՛ս վարուելու ենք՝ այդ պարագաներուն մէջ:**

Բայց ես քեզի՛ վստահեցայ, ո՛վ Տէր: ... Իմ ժամանակներս քու ձեռքդ են: [Սաղմ. 31. 14-15]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԺԱՄԱՆԱԿԸ

**Մ**էկ՝ (Mag) անհամբեր կը սպասէր իր ծրագրած այցելութեանը՝ ուրիշ երկիր մը: Բայց իր սովորութեան համաձայն, ան նա՛խ աղօթեց ատոր մասին: Ընկեր մը ըսաւ. «Այդ պարզապէ՛ս արձակուրդ մըն է: Ինչո՞ւ պէտք է Աստուծոյ հետ խորհրդակցիլ»: Մէկ՝ սակայն, կը հաւատար ամէն բան Աստուծոյ յանձնելու գաղափարին: Այս անգամ ան զգաց, որ Ան կը յուշէ չեղեալ նկատել իր ճամբորդութիւնը: Ան այդպէս ալ ըրաւ եւ աւելի ուշ, երբ ինք հոն պիտի ըլլար, համաճարակ մը սկսաւ այդ երկրին մէջ: Ան նշեց ըսելով. «Ես կը զգամ, որ կարծես Աստուած կը պաշտպանէր զիս»:

Նոյ՛ նոյնպէ՛ս կ'ապաւինէր Աստուծոյ պաշտպանութեան, երբ ան եւ իր ընտանիքը ջրհեղեղէն յետոյ՝ մօտ երկու ամիս սպասեցին տապանին մէջ: Աւելի քան տասը ամիս տապանին մէջ մնալէ ետք, ան հաւանաբար կը ցանկար դուրս գալ: Ի վերջոյ, «Ջուրերը երկրի վրայէն ցամքեցան» եւ «գետինին մակերեսը ցամքեցաւ» (Մն. 8. 13): Բայց Նոյ չէ՛ր ապաւիներ միայն իր տեսածին. փոխարէնը, ան ձգեց տապանը՝ միայն ա՛յն ատեն, երբ Աստուած ըսաւ իրեն՝ որ ձգէ (Հմ. 15-19): Ան վստահ էր, որ Աստուած հիմնաւոր պատճառներ ունէր՝ երկար սպասելու համար, գուցէ հողը տակաւին լիովին ապահով չէր:

Երբ կ'աղօթենք մեր կեանքի որոշումներուն մասին, օգտագործելով Աստուծոյ կողմէ մեզի տրուած ունակութիւնները եւ սպասելով Անոր առաջնորդութեանը, մենք կրնանք վստահիլ Անոր ժամանակին իմանալով, որ մեր իմաստուն Արարիչը գիտէ, թէ ի՞նչն է լաւագոյնը մեզի համար: Ինչպէ՛ս Սաղմոսերգուն յայտարարեց. «Բայց ես քեզի՛ վստահեցայ, ո՛վ Տէր: ... Իմ ժամանակներս քու ձեռքդ են» (Սաղմ. 31. 14-15):

**Աղօթք** - Դա՛յր, կը ինդրեմ, տո՛ւր ինծի իմաստութիւն եւ առաջնորդութիւն, որպէսզի շարժիմ ընու կամքիդ ու ծրագիրներուդ համաձայն, որովհետեւ կը վստահիմ քեզի իմ կեանքիս համար՝ ըն՛ւ ունեցած ծրագիրներուդ: Ամէն:  
**Ի՞նչ կը կարծես որ Աստուած կ'ըսէ քեզի քու որոշումներուդ մասին: Ինչպէ՞ս կրնաս Իրեն վստահիլ ու սպասել Անոր առաջնորդութեան:**



Քանի ձեզվե իւրաքանչիւրը ստացած է շնորհ մը, սպասարկեցէ՛ք զայն իրարու: [Ա. Պետ. 4. 10]

## ՄԻՐՈ՛Վ ԾԱՌԱՅԵԼ

**Ե**րբ Գրիսթալ (*Krystal*) առաջին անգամ ըլլալով սկսաւ աշխատիլ Վիրճինիայի (*Virginia*) սրճարանի մը մէջ, ան սպասարկեց Իպպի (*Ibby*) անունով յաճախորդի մը: Քանի որ Իպպի լսողութեան դժուարութիւն ունէր, իր պատուէրը ըրաւ՝ օգտագործելով իր հեռախօսի վրայ տպուած գրութիւնը: Իմանալով՝ որ Իպպի մնայուն յաճախորդ մըն էր, Գրիսթալ որոշեց աւելի լաւ ծառայելու համար անոր՝ սորվիլ բաւարարաչափ Ամերիկեան նշաններու լեզուն, որպէսզի Իպպի կարենայ սուրճ պատուիրել՝ առանց գրի առնելու:

Ձեռով մը Գրիսթալ ցոյց տուաւ Իպպիի, թէ Պետրոս՝ ինչպիսի սէր ցուցաբերելու գիրար եւ ծառայութիւն առաջարկելու՝ կը քաջալերէ մեզ բոլորիս: Յիսուսի հաւատացեալներուն ուղղուած իր նամակին մէջ, որոնք ցրուած եւ աքսորուած էին, առաքեալը կը նշէ, որ անոնք պէտք է «ջերմեռանդ սէր ունենան իրարու հանդէպ» եւ օգտագործեն իրենց պարգեւները «սպասարկեն զայն իրարու» (Ա. Պետ. 4. 8, 10): Անկախ անկէ՝ թէ ինչպիսի հմտութիւնով եւ կարողութիւնով Ան գինած է մեզ, ունինք պարգեւներ, որոնք կրնանք օգտագործել ուրիշներու օգտակար ըլլալու համար: Մինչ մենք կ'ընենք այս սպասարկութիւնը, մեր խօսքերն ու արարքները՝ կրնան պատիւ բերել Աստուծոյ:

Պետրոսի խօսքերը՝ յատկապէս կարեւոր էին անոնց համար, որոնց գրեց ան, քանի որ անոնք կ'ապրէին ցաւի եւ մեկուսացման մէջ: Ան խրախուսեց անոնց ծառայելու գիրար՝ նեղութեան ժամանակ, օգնելու անոնց դիմանալու իրենց կրած փորձութիւններուն: Թէեւ մենք կրնանք չզգիտնալ թէ հաստատ ի՞նչ ցաւ կ'ապրի ուրիշ մը, Աստուած կրնայ օգնել մեզի զբսեւորելու կարեկցութիւն, ինչպէս նաեւ ողորմութեամբ եւ ուրախութեամբ ծառայելու գիրար՝ մեր խօսքերով, ունեցածներով եւ կարողութիւններով:

**Աղօթք** - Յայր, կը խնդրեմ՝ օգնէ ինձի ծառայելու շրջապատիս՝ այն ամէն բաներով, ինչ որ Դուս տուած ես ինձի: Ամէն: Պետրոս կը քաջալերէ մեզի ըլլալ՝ հիւրընկալ, որպէսզի ծառայենք մեր շուրջ գտնուող մարդոց՝ խօսքով, հմտութիւնով եւ կարեկցութիւններով:

«Դու իմ տեսիլքիս մէջ երեւցած՝ Աստուածն ես», քանի որ [Յագար] ըսաւ. «Արդեօք ո՞ղջ եմ՝ հոս՝ իմ տեսիլքես՝ ետք»։ [Ծն. 16. 13]

## ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՏԵՍՆԷ ՔԵՉ

**Լ**նկերուհիս հաստատակամ ըսաւ իր որդիին, երբ ան բարձրացաւ եկեղեցիի նստարանին վրայ եւ շարժեց իր ձեռքերը. «Ի՛ջիր»։ Որդին անմեղ պատասխանեց. «Կ'ուզեմ որ հովիւը տեսնէ զի՛ս: Եթէ ես ոտքի չի՛ կենամ, ան ինծի չի տեսներ»:

Թէեւ շատ եկեղեցիներու մէջ՝ նստարաններու վրայ կենալը, հաւանաբար՝ քաջալերելի չէ՛, բայց ընկերուհիս որդիին լաւ միտք մը ունէր. նստարանին վրայ ելլելը եւ ձեռքերը թափահարելը, անշուշտ՝ տեսանելի ըլլալու եւ հովիւին ուշադրութիւնը գրաւելու ձեւերէն մէկն է:

Երբ մենք կը փորձենք գրաւել Աստուծոյ ուշադրութիւնը, պէտք չէ անհանգիստ ըլլանք Անոր կողմէ տեսանելի ըլլալու համար: Աստուած միշտ կը տեսնէ մեզմէ իւրաքանչիւրը: Ան նոյն Աստուածն է, որ բացայայտեց Ինքզինք Հագարին, երբ ան հաւանաբար կը գտնուէր իր կեանքի ամենացած, ամենէն աւելի առանձին եւ իր կեանքի ամենէն աւելի զարմացնող ժամանակին մէջ: Ան օգտագործուած էր որպէս գրաւական եւ տրուած էր Աբրամին՝ անոր կնոջ՝ Սարայի կողմէ, որպէսզի որդի ծնի (Ծն. 16. 3): Եւ երբ ան յղացաւ, Աբրամ թոյլ տուաւ իր կնոջ, որ վատ ձեւով վարուի Հագարի հետ. «Սարա տառապեցող զայն, Հագար անոր առջեւէն փախաւ» (Հմ. 6):

Փախստական ստրուկը՝ ինքզինք գտաւ միայնակ, յղի եւ թշուառ: Սակայն՝ անապատի իր յուսահատութեան մէջ, Աստուած կարեկցութեամբ զրկեց հրեշտակ մը, որ խօսի իր հետ: Հրեշտակը ըսաւ Հագարի, որ Աստուած «իր տառապանքը տեսաւ» (Հմ. 11): Ան պատասխանեց ու ըսաւ. «Դուն իմ տեսիլքիս մէջ երեւցած՝ Աստուածն ես» (Հմ. 13):

Որքա՛ն ալ դժուար ըլլան պարագաները, Աստուած կը տեսնէ քեզ:

**Աղօթք** - Հայր, շնորհակալ եմ որ կը տեսնես զի՛ս: Գիտե՛մ, որ Դուն ինծի հետ ես՝ նոյնիսկ իմ ամենածանր ժամանակներուս մէջ: Ամեն:

**Անապատային իրավիճակներու մէջ կրնանք ըլլալ, սակայն վստահ ըլլանք որ Աստուած կը տեսնէ մեզ եւ կ'օգնէ մեզի, որ կարենանք շարունակել յառաջ երթալ:**

Սիրեցե՛ք ձեր թշնամիները, ... եւ աղօթեցե՛ք անոց համար՝ որ կը պախարակեն ու կը հալածեն ձեզ: [Մատթ. 5. 44]

## ՍԻՐԵԼ ՄԵՐ ԹՇՆԱՄԻՆ

**Ե**րկրորդ Համաշխարհային Պատերազմի ժամանակ Միացեալ Նահանգներու Նաւատորմի ուժերու բժիշկ՝ Լինն Ուէսթըն (Lynne Weston) ծովափ ելաւ ծովային գորքին հետ, երբ անոնք ներխուժեցին թշնամիներու կողմէ գրաւուած կղզիներ: Անխուսափելիօրէն եղան սարսափելի գոհեր: Ան ամէն ինչ ըրաւ՝ վիրաւոր մարտիկներուն օգնելու եւ անհրաժեշտ բժշկական վիրահատութիւնները ընելու համար: Անգամ մը, իր ստորաբաժանումը բերին որովայնի վատ վէրքով հակառակորդի գինուոր մը: Անոր ունեցած վէրքի բնոյթին պատճառով, կարելի չէ՛ր անոր ջուր տալ: Զայն ողջ պահելու համար՝ Ուէսթըն ներարկեց՝ ներարկային ջրարիւն:

«Պահէ այդ ջրարիւնը մեր տղաներուն համար», գոռաց ծովայիններէն մէկը: Ուէսթըն անտեսեց զայն: Ան գիտէ՛ր, թէ Յիսուս ի՞նչ պիտի ընէր. «Սիրեցե՛ք ձեր թշնամիները» (Մատթ. 5. 44):

Յիսուս շատ աւելին ըրաւ, քան այդ մարտահրաւիրական խօսքերը: Ան ապրեցաւ զանոնք: Երբ թշնամի ամբոխ մը առին գինք ու տարին քահանայապետին մօտ, «այն մարդիկը՝ որ բռնած էին Յիսուսը, կը ծաղրէին զայն ու կը ծեծէին» (Ղուկ. 22. 63): Զարաշահումները շարունակուեցան՝ Անոր կեղծ դատավարութեան եւ մահապատիժի ընթացքին: Յիսուսի համար դիւրին չէր՝ տոկալ այդ բոլոր չարչարանքներուն: Եւ երբ Հռոմայեցի գինուորները խաչեցին գինք, Ան աղօթեց՝ անոնց ներումին համար (23. 34):

Կրնանք չհանդիպիլ բառացի թշնամիի մը, որ կը փորձէ սպաննել մեզ: Բայց բոլորը գիտեն, թէ ի՞նչ կը նշանակէ ծաղրանքին եւ արհամարհանքին դիմանալը: Մեր բնական արձագանգը՝ զայրոյթով արձագանգել է: Յիսուս բարձրացուց չափանիշը՝ երբ ըսաւ. «Աղօթեցէ՛ք ձեզ հալածողներուն համար» (Մատթ. 5. 44):

Այսօր՝ եկէ՛ք քալենք այդ տեսակի սիրով՝ Յիսուսի պէս:

**Աղօթք** - Երկնաւոր Դայ՛ր, կը խնդրեմ՝ օգնէ ինձի սիրելու ուրիշները՝ այնպէ՛ս, ինչպէ՛ս Դո՛ւն զիս կը սիրես: Ամէն:  
**Մարդիկ պիտի ըլլան, որոնք պիտի արհամարհեն ու սխալ հասկնան մեզ, սակայն Աստուած կ'ուզէ՝ որ մենք սեր ցուցաբերենք ու աղօթենք անոց համար:**

Տառապանքի մեծ փորձին մեջ՝ իրենց առատ ուրախութիւնը եւ իրենց ծանր աղքատութիւնը ճոխացան իրենց հարուստ առատաձեռնութեամբ: [Բ. Կորնթ. 8. 2]

## ԲՈՒՌ ՍԸ ԲՐԻՆՁ

Հնդկաստանի հիւսիս-արեւելեան շրջանը գտնուող՝ Միզորամ (Mizoram) նահանգը, կամաց-կամաց դուրս կու գայ իր աղքատութենէն: Հակառակ իրենց եկամուտներուն բացակայութեան, աւետարանը այս շրջանը հասնելէն ի վեր, Յիսուսի հաւատացողները սկսած են գործադրել տեղական աւանդութիւն մը, որ կը կոչուի «բուռ մը բրինձ»: Անոնք, որոնք ամէն օր կերակուր կը պատրաստեն, բուռ մը չեփած բրինձ մէկգի կը դնեն եւ կու տան եկեղեցիին: Միզորամի եկեղեցիները, որոնք աշխարհի չափանիշներով աղքատ են, միլիոններ տուած են առաքելութիւններու եւ զրկած են միսիոնարներ աշխարհի շուրջ, շատերու՝ Քրիստոսի գալու պատճառ հանդիսանալով:

Բ. Կորնթացիս 8-ին մէջ՝ Պօղոս կը նկարագրէ նմանատիպ մարտահրաւէրներ ունեցող եկեղեցի մը: Մակեդոնիայի մէջ եղող հաւատացեալները աղքատ էին, բայց այդ բանը չխանգարեց իրենց ուրախութեամբ եւ առատօրէն տալու (Հմ. 1-2): Անոնք իրենց տալը՝ որպէս առանձնաշնորհում տեսան եւ «իրենց կարողութենէն ալ աւելի յօժարութեամբ տուին» (Հմ. 3), Պօղոսի հետ համագործակցելու համար: Անոնք հասկցան, որ իրենք պարզապէս Աստուծոյ տուածներուն տնտեսներն էին: Տալը միջոց մըն էր՝ ցոյց տալու իրենց ունեցած վստահութիւնը Անոր հանդէպ, որ կ'ապահովէ մեր բոլոր կարիքները:

Պօղոս օգտագործեց Մակեդոնացիներուն՝ քաջալերելու համար Կորնթացիները, որ նոյն մօտեցումը ունենան տալու հարցին մէջ: Կորնթացիները կը գերազանցէին «հաւատքով, խօսքով, գիտութեամբ, ամբողջ փութաջանութեամբ եւ ... սիրով»: Այժմ անոնք պէտք է «ճոխանան այս (տալու) շնորհքով» (Հմ. 7):

Արտացոլացնենք մեր Հօր առատաձեռնութիւնը եւ մեր ունեցածէն տանք առատաձեռնութեամբ:

**Աղօթք** - Յայր, կ'աղօթեմ Միզորամի եկեղեցիներուն համար, քանի որ անոնք կը շարունակեն առատաձեռնօրէն տալ՝ Ըն գործիդ համար: Ամէն:

**Տեսած ըլլալու ենք զոհաբերութեան պարագաներ. ուստի՝ առատաձեռնութեամբ տանք՝ Աստուծոյ առատաձեռն նուիրումին ի պատասխան:**

Կարեկից մարդը իր անձին բարիք կ'ընէ: [Առ. 11. 17]

## ԱՆՉԱՓԵԼԻ ԲԱՐՈՒԹԻՒՆ

**Ե**րկու ընկերներ ելեկտրանային խանութ մը եկած էին գիրկի համակարգիչ (laptop) գնելու համար, երբ հանդիպեցան մեծ պասքէթպօլիստ Շէքիլ Օ'Նիլին (Shaquille O'Neal): Իմանալով, որ Օ'Նիլ՝ վերջերս ունեցած էր իր քրոջ, ինչպէս նաեւ նախկին խումբի անդամներէն մէկուն մահուան կորուստը, իրենց ցաւակցութիւնները յայտնեցին անոր: Երբ երկու ընկերները շարունակեցին իրենց զնուած ընելը, Շէքիլ մօտեցաւ անոնց եւ ըսաւ, որ ընտրեն լաւագոյն համակարգիչը: Յետոյ գնեց զայն իրենց համար, պարզապէ՛ս այն պատճառով, որ անոնք զինք կը տեսնէին որպէս մարդ մը, որ կ'անցնէր դժուար ժամանակներու մէջէն եւ զգացուած էր անոնց բարութենէն:

Այդ հանդիպումէն հազարամեակներ առաջ՝ Սողոմոն գրեց. «Կարեկից մարդը իր անձին բարիք կ'ընէ» (Առ. 11. 17): Երբ մենք նկատի առնենք ուրիշներու կարիքները եւ ընենք ա՛յն, ինչ որ կարող ենք ընել՝ օգնելու եւ քաջալերելու անոնց, որոնք պէտք ունին, մենք մեզ կը պարգեւատրենք: Այդ կրնայ ըլլալ ո՛չ համակարգիչով կամ նիւթական բաներով, բայց Աստուած ունի իր ձեւերը մեզ օրհնելու համար, որոնք այս աշխարհ չի կրնար չափել: Ինչպէս Սողոմոն բացատրեց աւելի առաջ՝ նոյն գլուխին մէջ. «Շնորհալի կինը պատիւ կը ստանայ, ու զօրաւոր մարդիկ հարստութիւն կը ստանան» (Հմ. 16): Կա՛ն Աստուծոյ տրուած պարգեւներ, որոնք շատ աւելի կ'արժեն՝ քան դրամը եւ Ան առատաձեռօրէն կը չափէ զանոնք իր կատարեալ իմաստութեամբ եւ ձեւով:

Բարութիւնն ու առատաձեռնութիւնը՝ Աստուծոյ նկարագրի-րին մէկ մասն են եւ Ան կը սիրէ տեսնել զանոնք արտայայտուած մեր սիրտերուն եւ կեանքերուն մէջ: Սողոմոն լաւ ամփոփեց հարցը. «Բարերար անձը պիտի պարարտանայ» (Հմ. 25):

**Աղօթք** - Յայր, կը սիրե՛մ Զու բարութիւնդ: Կը խնդրեմ՝ օգնէ ինձի աւելի շատ սմանելու Զեզի, որպէսզի կարենամ կիսել Զու սերդ գործնական ձեւերով: Ամէն:

**Աստուած զանազան բարիքներ տուած է մեզի իր սիրով: Եկէ՛ք՝ ցոյց տանք Անոր սերը ուրիշներուն:**



Պետք է ամեն ատեն աղօթել՝ առանձ ձանձրանալու:

[Ղուկ. 18. 1]

## ՅԱՐԱՏԵԻՆՆԵՐԻ ԱՂՕԹՔԻ ՄԷՉ

Հաց թխողի օգնական՝ Միլա (Mila), չափազանց անկարող զգաց ինզինք պաշտպանելու, երբ իր վերահսկիչը մեղադրեց զինք չամիչով հաց գողնալու համար: Անհիմն պնդումը եւ աշխատավարձի նուազումը, վերահսկիչին բազմաթիւ անօրինական վարմուքներէն ընդամէնը երկուքն էին: Միլան ամէն օր կ'աղօթէր. «Ո՛վ Աստուած, կը խնդրեմ օգնէ՛ ինծի: Անոր հսկողութեան ներքեւ աշխատիլը շատ դժուար է, բայց ինծի պէ՛տք է այս գործը»:

Յիսուս կը պատմէ այրի կնոջ մը մասին, որ նոյնպէս ինքզինք անօգնական կը զգար եւ կ'ողգէր «պաշտպանել իր իրաւունքը՝ ոսոխին դէմ» (Ղուկ. 18. 3): Ան դիմեց մէկու մը, որ իրաւասու էր լուծելու իր հարցը. դատաւորի մը: Հակառակ անոր, որ այդ դատաւորը անիրաւ ու անարդար էր, ան յարատեւեց թախանձելու անոր:

Դատաւորին՝ ի վերջոյ տուած պատասխանը (Հմ. 4-5) չափազանց կը տարբերէր մեր երկնաւոր Հօր պատասխանէն, որ շուտով կը պատասխանէ սիրով եւ պաշտպանութեամբ (Հմ. 7): Եթէ յարատեւելը կրնայ ստիպել անարդար դատաւորին նկատի առնելու այրի կնոջ հարցը, ապա՛ որքա՞ն աւելի կրնայ եւ կ'ընէ Աստուած, որ մեզի համար՝ մեր միակ արդար Դատաւորն է (Հմ. 7-9): Մենք կրնանք վստահիլ Անոր, որ «կը պաշտպանէ իր ընտրեալներուն իրաւունքները» (Հմ. 7) եւ աղօթքի մէջ յարատեւելը՝ մեր վստահութիւնը ցոյց տալու ձեւերէն մէկն է: Մենք կը յարատեւենք, քանի որ կը հաւատանք, որ Աստուած կատարեալ իմաստութեամբ կը պատասխանէ մեր հարցերուն:

Ի վերջոյ, Միլային վերահսկիչը՝ իր հրաժարականը տուաւ, երբ ուրի՛շ աշխատակիցներ գանգատ ներկայացուցին իր վարքագիծին մասին: Եկէ՛ք յարատեւենք աղօթքի մէջ, գիտնալով որ մեր աղօթքներու զօրութիւնը կը կայանայ իր մէջ:

**Աղօթք** - Սիրող Աստուած, կը խնդրեմ՝ յիշեցո՛ւր ինծի, թէ ո՞վ ես Դուն եւ օգնէ ինծի շարունակել աղօթել՝ անկախ ամէն ինչէ: Ամէն:

**Երբեմն կը հրաժարինք աղօթելէ, սակայն յիշենք՝ խորհիլ Աստուծոյ նկարագրին մասին ու շարունակենք յարատեւ աղօթել:**

Կեանքը ընտրե՛ որ ապրիս, դուս եւ քու զարմդ: [Բ. Օր. 30. 19]

## ԸՆՏՐԵ՛Լ ԿԵԱՆՔԸ

**Ն**էյթըն (*Nathan*) հասակ առաւ՝ Քրիստոսի հաւատացող ընտանիքի մը մէջ, սակայն ան սկսաւ շեղիլ իր մանկութեան հաւատքէն՝ որպէս գոլէճի ուսանող, տարուելով խմիչքով եւ խնճոյքներով: Ան ըսաւ. «Աստուած՝ զիս վերադարձուց իր մօտ, երբ ես արժանի չէի անոր»: Ժամանակի ընթացքին՝ Նէյթըն անցուց ամառ մը, կիսելով Յիսուսը՝ անձանօթ մարդոց հետ՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու մեծ քաղաքներուն փողոցներուն մէջ. ու այժմ կ'աւարտէ՝ իր եկեղեցիին մէջ Երիտասարդական Ծառայութեան դասընթացքը: Նէյթընի նպատակն է՝ օգնել երիտասարդներուն խուսափելու ժամանակ կորսնցնելէ՝ Յիսուսի համար չապրելու:

Նէյթընի պէ՛ս, Իսրայէլի առաջնորդ Մովսէսը՝ սէր ունէր յաջորդ սերունդին համար: Իմանալով, որ շուտով պիտի հրաժարի ղեկավարութենէն՝ ան փոխանցեց ժողովուրդին Աստուծոյ բարի կանոնները եւ ապա թուեց հնազանդութեան եւ անհնազանդութեան արդիւնքները. օրհնութիւն եւ կեանք՝ հնազանդութեան պարագային, իսկ մահ եւ անէծք՝ անհնազանդութեան պարագային: Ան ըսաւ. «Կեանքը ընտրէ՛ որ ապրիս, դուս եւ քու զարմդ, ... որովհետեւ ան է քու կեանքդ» (Բ. Օր. 30. 19-20): Մովսէս յորդորեց անոնց որ սիրեն Աստուած, «անոր խօսքը մտիկ ընելով ու անոր յարելով» (Հմ. 20):

Մեղքը ընտրելը՝ հետեւանքներ ունի: Բայց երբ մենք դարձեալ յանձնենք մեր կեանքը Աստուծոյ, Ան անպայման կ'ողորմի մեզի (Հմ. 2-3) եւ կը վերականգնէ մեզ (Հմ. 4): Այս խոստումը կատարուեցաւ Իսրայէլի ժողովուրդի ամբողջ պատմութեան ընթացքին, բայց նաեւ խաչին վրայ՝ Յիսուսի վերջին սիրոյ արարքով, մեզ Աստուծոյ հետ հաշտեցնելու եւ հաղորդակցութեան մէջ դնելու: Մենք նո՛յնպէս ունինք ընտրութիւն այսօր եւ ազատ ենք կեանք ընտրելու հարցին մէջ:

**Աղօթք** - Սիրելի Յիսու՛ս, շնորհակալ եմ, որ ճամբայ բացած ես՝ հաղորդակցութեան մէջ դնելու զիս՝ Զեզի հետ: Ամեն Երբեմն դժուար թուի մեզի հետեւելու Աստուծոյ ճամբաներուն, սակայն կարելի է խրախուսուիլ եւ խրախուսել ուրիշները՝ որ ընտրեն կեանքը:



Ընու ծառայդ պիտի երթայ եւ Փղշտացիին հետ կռուի:  
[Ա. Թագ. 17. 32]

## ՕԳՆՈՒԹԻՒՆ ՅԱՍՑԸՆԵԼ

**Ե**րբ Հէտըր (*Heather*) գնաց Թիմի (*Tim*) տունը՝ իր ապսպրած ճաշը տանելու համար, ան խնդրե՛ց որ Հէտըր օգնէ իրեն՝ քակելու ճաշի տոպրակին հանգոյցը: Թիմ՝ քանի մը տարիներ առաջ կաթուածահար եղած էր եւ այլ հնարաւորութիւնը չունէր առանձին քակելու: Հէտըր հրճուանքով քակեց հանգոյցը: Օրուան մնացեալ ժամանակին՝ Հէտըրի միտքը յաճախ վերադարձաւ Թիմին եւ ներշնչուեցաւ՝ խնամքի ծրար մը պատրաստելու անոր համար: Երբ ետքը Թիմ գտաւ տաք հնդընկոյզն (գազառ)՝ ու կարմիր ծածկոցը, որ Հէտըր ձգած էր անոր դռան մօտ՝ յուսադրող գրութիւնով մը, Թիմ գգացուեցաւ եւ լացաւ:

Հէտըրի ճաշի մատակարարումը շատ աւելի նշանակալից եղաւ, քան ինչ որ նախապէ՛ս ան կ'ակնկալէր: Նոյնը պատահեցաւ, երբ Յեսսէ զրկեց իր պատանի որդին՝ Դաւիթը, որպէսզի իր եղբայրներուն ուտելիք մատակարարէ, այն ատեն երբ Իսրայէլացիները «Փղշտացիներուն դէմ պատերազմելու համար շարուեցան» (Ա. Թագ. 17. 2): Երբ Դաւիթ եկաւ հացով ու պանիրով՝ իմացաւ, որ Գողիաթ իր ամէնօրեայ ծաղրանքով՝ վախ կը սերմանէր Աստուծոյ ժողովուրդին մէջ (Հմ. 8-10, 16, 24): Դաւիթ բարկացաւ, որովհետեւ Գողիաթ «ապրող Աստուծոյն զօրասիւնները կը նախատէ» (Հմ. 26) եւ մղուեցաւ պատասխանելու՝ ըսելով Սաւուղ թագաւորին. «Անոր պատճառով ո՛չ մէկուն սիրտը թող կոտրի. քու ծառայ պիտի երթայ եւ այդ Փղշտացիին հետ կռուի» (Հմ. 32):

Աստուած երբեմն կ'օգտագործէ մեր առօրեայ կեանքի պարագաները՝ մեզ այնպիսի վայրերու մէջ դնելու համար, ուր Ան կը ցանկայ գործածել մեզ: Եկէ՛ք բաց պահենք մեր աչքերը (եւ սիրտերը) տեսնելու, թէ ո՞ւր Ան կը ցանկայ օգտագործել մեզ: Եկէ՛ք բաց պահենք մեր աչքերը (եւ սիրտերը)՝ տեսնելու, թէ ո՞ւր եւ ինչպէ՛ս Ան կրնայ ցանկալ, որ մենք ծառայենք՝ ոեւէ մէկուն:

**Աղօթք** - Յայր, կը խնդրեմ՝ բա՛ց աչքերս, որպէսզի տեսնեմ՝ թէ ո՞ւր կրնաս գործածել զիս այսօր: Ամեն:

**Աստուած կը հոգայ մեր կարիքները, երբեմն մարդո՛ց միջոցով: Սա- կայն՝ Ան նաեւ կը ցանկայ մեզ գործածել ուրիշներու կեանքին մէջ:**



Դուև քեզ վարժեցուր բարեպաշտութեան: [Ա. Տիմ. 4. 7]

## ՀՈԳԵՒՈՐ ՄԱՐԶԱՆՔ

**Թ**րէ (Tre) կանոնաւոր կը յաճախէ մարգարան եւ յստակ էր այդ, որովհետև ան ունի լայն ուսեր, բացայայտ մկանները, իսկ ձեռքին վերի մասը՝ իմ ազդրերուս չափ է: Անոր Ֆիզիքական վիճակը դրդեց զիս՝ սկսելու իր հետ հոգեւոր խօսակցութիւն մը: Հարցուցի իրեն՝ եթէ իր նուիրուածութիւնը Ֆիզիքական ճկունութեան կերպով մը կ'արտացոլայ առողջ յարաբերութիւն մը Աստուծոյ հետ: Թէեւ մենք շատ չի խորացանք նիւթին մէջ, Թրէ ըսաւ թէ ընդունած է «Աստուած իր կեանքին մէջ»: Մեր խօսակցութեան ընթացքին ան ինծի ցոյց տուաւ իր ո՛չ պիտանի եւ անառողջ տարբերակին լուսանկարը, երբ ինք կը կշռէր 180 ք.կ.: Անոր ապրելակերպի փոփոխութիւնը՝ Ֆիզիքապէս հրաշքներ գործած էր:

Ա. Տիմոթէոս 4. 6-10-ին մէջ Ֆիզիքական եւ հոգեւոր մարզումները ուշադրութեան կեդրոնն են: Պօղոս կը գրէ. «Դուև քեզ վարժեցուր բարեպաշտութեան, որովհետև մարմինին վարժութիւնը օգտակար է քիչ բանի, բայց բարեպաշտութիւնը օգտակար է ամէն բանի, ունենալով թէ՛ ներկայ եւ թէ՛ ապագայ կեանքին խոստումը» (Հմ. 7-8): Մարդուն արտաքին մարզուած վիճակը՝ սրտի հարց է: Կը սկսի Յիսուսի հաւատալու որոշումով, որու միջոցով՝ ներում կը ստանանք: Այդ պահէն կը սկսի աստուածապաշտ ապրելակերպի ուսուցումը: Այս կը ներառէ՝ «սնելով խօսքերով հաւատքին եւ բարի վարդապետութեան» (Հմ. 6) եւ Աստուծոյ զօրութեամբ, ապրիլ կեանք մը, որ պատիւ կը բերէ մեր Երկնաւոր Հօր:

**Աղօթք** - Երկնաւոր Հայր, կը խնդրեմ՝ ներէ՛ ինծի, երբ չափազանց կեդրոնանամ արտաքինին վրայ: Օգնէ՛ ինծի որ մասնակցիմ հոգեւոր մարզանքներու, ինչպէս Սուրբ Գիրքի ընթերցանութիւն, աղօթք եւ ուրիշներ սիրելու եւ ծառայելու: Ամէն:  
**Եթէ սկսած ենք մեր ճամբորդութիւնը Յիսուսի հետ, ինչպէ՞ս կը գնահատենք մեր հոգեւոր առողջութիւնը եւ ի՞նչ բան ապացոյց է այդ բանին:**

Եթե մեկը սիրե գիս՝ պիտի պահե իմ խօսքս: [Յովհ.14.23]

## ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆԸ՝ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՄԸՆ Է

Հոլանտայի ձմեռները՝ հազուադէպ կը բերեն շատ ձիւն, բայց կրնայ այնքան ցուրտ ըլլալ, որ սառոյց ըլլայ ջրանցքներու երեսը: Երբ ամուսինս՝ Թամ (Tom), հոն կը մեծնար, իր ծնողները ընտանեկան կանոն մը ունէին. «Հեռու մնացէք սառոյցէն, մինչեւ որ այնքան հաստատ ըլլայ, որ կարենայ ձիու մը ծանրութիւնը պահել»: Որովհետեւ ձիերը իրենց ետին կը ձգէին իրենց ներկայութեան ապացոյց, Թամ եւ իր ընկերները որոշեցին՝ քիչ մը ձիու աղբ հաւաքել փողոցներէն ու նետել բարակ սառոյցին վրայ, որպէսզի դուրս գան սառոյցին վրայ: Ո՛չ մէկ վնաս չհասաւ անոնց, ո՛չ ալ յայտնաբերուեցաւ անոնց ա՛յս ըրածը, բայց անոնք իրենց սիրտին մէջ գիտէին թէ իրենք անհնազանդ եղած են:

Հնազանդութիւնը միշտ չէ՛, որ բնականաբար գայ: Հնազանդելու կամ չհնազանդելու ընտրութիւնը կրնայ առաջանալ պարտքի զգացումէն կամ պատիժի վախէն: Բայց մենք կրնանք նաեւ ընտրել հնազանդիլ մեր վրայ եղած իշխանութիւն ունեցողներուն սիրով եւ յարգանքով:

Յովհաննու 14-ին մէջ Յիսուս մարտահրաւէր տուաւ իր աշակերտներուն ըսելով. «Եթէ մէկը սիրէ գիս՝ պիտի պահէ իմ խօսքս: ... Ա՛ն որ չսիրեր գիս՝ չի պահեր իմ խօսքերս» (Հմ. 23-24): Հնազանդիլը միշտ ալ դիւրին ընտրութիւն մը չէ, բայց մեր ներսը ապրող Հոգիին գորութիւնը՝ մեզի կու տայ Անոր հնազանդելու ցանկութիւնն ու կարողութիւնը (Հմ. 15-17): Անոր տուած կարողութիւնով՝ մենք կրնանք շարունակել հետեւիլ իր պատուիրանքներուն, որ կը սիրէ մեզ՝ ո՛չ թէ պատիժի վախէն, այլ սիրով:

**Աղօթք** - Սիրող Աստուած, կը խնդրեմ՝ կակուղցուր իմ յամառ սիրտս, որպէսզի լսե՛մ Զու ցուցմունքներդ: Օգնե՛ ինձի մէկ կողմ դնել իմ սեփական օրակարգս եւ հաւատարիմ հնազանդիմ Զեզի: Ամէն:

**Երբեմն գիտակցաբար անհնազանդ կ'ըլլանք Աստուծոյ: Սակայն կարելոր է մեզի համար հնազանդիլ Աստուծոյ, նոյնի՛սկ երբ դժուար է կամ անյարմար:**

Երկուքը մեկն լաւ է, որովհետեւ իրենց աշխատանքը լաւ վարձք ունի: [Ժող. 4. 9]

## ՀՉՕՐ ԱՁԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ՔՐԻՍՏՈՍՈՎ

**Լ**ոնտոնի Մարաթոն վազքի մասնակից մը զգաց, թէ ինչո՞ւ կարեւոր է չվազել մեծ մրցավազքը՝ առանձին: Ամիսներ շարունակ ձանձրացուցիչ պատրաստութենէ ետք՝ մարզը կը ցանկար մրցավազքին աւարտին հասնիլ ուժեղ: Բայց երբ ան սայթաքեցաւ եւ ինկաւ վերջնագիծին չհասած, ինքզինք գտաւ կրկնապատիկ յոգնած վիճակի մէջ եւ փլուզումի եզրին: Գետին իյնալէ առաջ, երկու այլ վազողներ բռնեցին իր ձեռքերը՝ մէկը ձախ կողմէն, միւսը՝ աջ կողմէն եւ օգնեցին պայքարող մրցորդին՝ աւարտելու ընթացքը:

Այդ վազողին նման, Ժողովողի գիրքին հեղինակը կը յիշցնէ մեզի քանի մը կարեւոր առաւելութիւններու մասին, որոնք կու գան երբ ուրիշներ մեզի հետ կը վազեն կեանքի մրցավազքը: Սողոմոն կը նշէ այն սկզբունքը, որ «Երկուքը մէկէն լաւ է» (Ժող. 4. 9): Ան ուշադրութեան կը յանձնէ համատեղ եղած ջանքերու եւ փոխադարձ աշխատանքի առաւելութիւնները: Ան նաեւ գրեց, որ գործի ընկերակցութեամբ եղած աշխատանքը «լաւ վարձք ունի» (Հմ. 9): Դժուարութեան ժամանակ ուղեկիցը հոն է, որպէսզի «վերցնէ» (Հմ. 10): Երբ գիշերները մութ են եւ ցուրտ, ընկերները կրնան հաւաքուիլ միասին՝ «տաք մնալու» համար (Հմ. 11): Եւ վտանգի ժամանակ երկուքը «կրնան ընդիմանալ» (Հմ. 12): Անոնք, որոնց կեանքերը միահիւստեամբ են, կրնան մեծ ուժ ունենալ:

Մեր բոլոր տկարութիւններով եւ թուլութիւններով՝ մենք կարիքը ունինք Յիսուսի հաւատացողներուն, համայնքի հզօր աջակցութեան եւ ապահովութեան: Եկէ՛ք շարունակենք միասին, մինչ Ան կ'առաջնորդէ մեզ:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինձի կառուցանելու առողջ համայնք մը՝ Յիսուսով: Ամէն:  
**Յիսուսի հաւատացողներուն հետ մեր ընկերակցութիւնը կարեւոր է, որ կը զօրացնէ մեզ եւ կը բարելաւէ մեր հաւաքական որակը:**

Կ'աղերեսմ քեզի, արտօնե՛ ինծի՝ որ խօսիմ ժողովուրդին:  
[Գործք 21. 39]

## ԽՕՍԻՐ ՄԱՐԴՈՑ՝ ՅԻՍՈՒՍԻ ՄԱՍԻՆ

**Պ**օղոս տաճար գացած էր Հրէական մաքրագործման արարողութեան համար (Գործք 21. 26): Բայց որոշ գրգռողներ, որոնք կը կարծէին, որ ան կ'ուսուցանէ Օրէնքին դէմ, փորձեցին խլել անոր կեանքը (Հմ. 31): Հոռմայեցի զիւղորները շատ արագ միջամտեցին եւ ձերբակալեցին Պօղոսը, կապեցին անոր եւ տարին տաճարին տարածքէն՝ մինչ ամբոխը կը գոռար. «Վերցո՛ւր զայն» (Հմ. 36):

Ինչպէ՞ս առաքեալը պատասխանեց իր դէմ եղած այս սպառնալիքին: Ան խնդրեց գօրքերու հրամանատարէն. «Խօսիլ ժողովուրդին հետ» (Հմ. 39): Երբ արտօնութիւն տուաւ Հոռմայեցի առաջնորդը, Պօղոս՝ արիւնահոս եւ վիրաւորուար վիճակի մէջ, դարձաւ զայրացած ամբոխին եւ կիսեց Յիսուսի հանդէպ իր ունեցած հաւատքը (22. 1-16):

Այդ դէպքը երկու հազար տարի առաջ էր՝ Աստուածաշունչի հին պատմութիւն մը, որու հետ մենք կրնանք դժուարութիւն ունենալ վերաբերելու: Վերջերս՝ Փիթըր (Peter) անունով մարդ մը ձերբակալուեցաւ, երբ կ'այցելէր բանտարկուած ընկեր մը, որ կը հաւատար Յիսուսի՝ երկրի մը մէջ, ուր հաւատացեալները պարբերաբար կը հալածուէին: Աչքերը կապելով՝ հարցաքննեցին Փիթըրին, ապա նետեցին մութ բանտախցիկի մը մէջ: Երբ բացին անոր աչքերը, ան տեսաւ չորս զիւղորներ, որոնք իրենց գէնքերը ուղղած էին իր վրայ: Ի՞նչ եղաւ Փիթըրի պատասխանը: Ան այս վիճակը յարմար սեպեց, կիսելու իր հաւատքը:

Պօղոս եւ Փիթըր՝ կը նշեն ծանր ու կենսական ճշմարտութիւն մը: Եթէ նոյնիսկ Աստուած թոյլ կու տայ մեզի՝ ապրիլ դժուար ժամանակներ եւ հալածանք, մեր կոչը կը մնայ. «Աւետարանը քարոզեցէք» (Մար. 16. 15): Ան կ'ըլլայ մեզի հետ եւ կու տայ մեզի իմաստութիւն եւ զօրութիւն՝ կիսելու համար մեր հաւատքը:

**Աղօթք** - Սիրելի Յիսո՛ւս, կը խնդրեմ տո՛ւր ինծի քաջութիւնը՝ ներկայացնելու Քեզ սիրով եւ իմաստութեամբ: Ամէն:  
**Ակնկալելի է հալածանքի ենթարկուիլ՝ Զրիստոսի հանդէպ մեր ունեցած հաւատքին համար: Սակայն մեր սրբազան պարտականութիւնն է՝ «Յռչակել աւետարանը» այսօր:**

Մարդոց վերապահուած է մէկ անգամ մեռնիլ՝ իսկ անկէ ետք՝ դատաստանը: [Եբ. 9. 27]

## ԺԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ

22 Նոյեմբեր 1963-ին՝ մահացան Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահ՝ Ժան Ֆ. Գէնէտի (*John E. Kennedy*), փիլիսոփայ եւ գրող Ալտուս Հաքսլի (*Aldous Huxley*) եւ Քրիստոնեայ ջատագով՝ Ք. Ս. Լուիս (*C. S. Lewis*): Երեք յայտնի մարդեր՝ արմատապէս տարբեր աշխարհայեացքով: Հաքսլի՝ անգիտական, տակաւին զբաղուած արեւելեան խորհրդապաշտութեան մէջ, Գէնէտի թէեւ Հռոմէական Կաթողիկէ, սակայն հաւատարիմ իր մարդասիրական փիլիսոփայութեան, իսկ Լուիս՝ նախապէս անաստուած մարդ մը, որպէս Անկլիքան՝ բարեկարգեալ դարձաւ Յիսուսի անկեղծ հաւատացեալ: Մահը՝ յարգանք չունի անձին, քանի որ այս երեք յայտնի մարդերն ալ նո՛յն օրը ունեցան իրենց ժամադրութիւնը՝ մահուան հետ:

Աստուածաշունչը կ'ըսէ, որ մահը մտաւ մարդկային փոճառութեան մէջ, երբ Ադամ եւ Եւա չհնազանդեցան Աստուծոյ (Ծն. 3), տխուր իրականութիւն մը, որ նշանաւորեց մարդկային պատմութիւնը: Մահը մեծ հաւասարեցնողն է՝ կամ, ինչպէս մարդ մը ըսաւ, ժամադրութիւն մը՝ որ ո՛չ մէկը կրնայ խուսափիլ անկէ: Սա՛ Երրայեցիս 9. 27-ին պարզած կէտն է, ուր մենք կը կարդանք. «Մարդոց վերապահուած է մէկ անգամ մեռնիլ՝ իսկ անկէ ետք՝ դատաստանը» (Եբ. 9. 27):

Ո՛ւր յոյս կը գտնենք՝ մահուան հետ մեր ունեցած ժամադրութեան համար եւ ի՞նչ կը յաջորդէ անոր: Հռոմայեցիս 6. 23-ը կը նկարագրէ այս ճշմարտութիւնը: «Մեղքին վարձատրութիւնը մահ է, բայց Աստուծոյ շնորհը՝ յաւիտենական կեանք է, Յիսուս Քրիստոսի՝ մեր Տէրոջ միջոցով»: Ինչպէ՞ս՝ Աստուծոյ այս պարգեւը հասանելի դարձաւ: Յիսուս՝ Աստուծոյ Որդին, մեռաւ՝ մահը ոչնչացնելու եւ յարութիւն առաւ գերեզմանէն՝ մեզի յաւիտենական կեանք տալու համար (Բ. Տիմ. 1. 10):

**Աղօթք** - շնորհակալ եմ Զու Որդիդ ուղարկելուդ համար, որ վճարէ իմ մեղքերուս գինը եւ մեռնի ի՛մ տեղս: Շնորհակալ եմ՝ որ ինձի յաւիտենական կեանք կ'առաջարկես: Ամէն:

**Ի՞նչ է զգացումդ՝ մահուան մասին խորհրդածելու՝ ինչպէս նաեւ մեր սեփական անխուսափելի հանդիպումին մասին:**

Քու խօսքդ իմ ոտքերու ճրագ է: [Սաղմ. 119. 105]

## ԻՄԱՍՏՈՒՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԱՌՆԵԼ

**Վ**աճառե՞լ հանգուցեալ մօրս տունը: Այդ որոշումը ծանրաբեռնեց սիրտս՝ իմ սիրելի այրի մօրս մահէն ետք: Զգացողութիւնը կը մղէր զգացումներս: Այսուհանդերձ, քոյրս ու ես՝ երկու տարիներ տրամադրեցինք մաքրելու եւ վերանորոգելու դատարկ տունը եւ հրաժարեցանք զայն՝ վաճառելէ: Ա՛յս՝ 2008-ին էր եւ համաշխարհային անկումը՝ մեզ ձգեց առանց գնողի: Շարունակեցինք իջեցնել գինը, բայց առաջարկներ չստացանք: Յետոյ, երբ առաւօտ մը կը կարդայի Աստուածաշունչը, այս հատուածը գրաւեց ուշադրութիւնս. «Ուր արջառ չկայ, մսուրը մաքուր կը մնայ. իսկ բերքին առատութիւնը եզին ոյժով կ'ըլլայ» (Առ. 14. 4):

Առակը կը խօսէր հողագործութեան մասին, բայց ինծի հետաքրքրեց անոր ուղերձը: Զբնակուած կրպակը կոկիկ կը մնայ, բայց միայն բնակիչներու «խառնաչփոթի» դէպքին բերք կու տայ: Կամ, բնականաբար, արժէքաւոր եւ ընտանեկան ժառանգութեան բերք: Զանգահարելով քրոջս՝ հարցուցի. «Իսկ եթէ մենք պահենք մօրս տունը, կրնանք վարձու տալ»:

Ընտրութիւնը մեզ զարմացուց: Մենք մտադիր չէինք մօրս տունը շահագործումի վերածել: Սակայն Աստուածաշունչը, որպէս հոգեւոր ուղղեցոյց, կ'առաջարկէ նաեւ գործնական իմաստութիւն ունենալ: Ինչպէս Դաւիթ կ'աղօթէր. «Ո՛վ Տէր, ցուցո՛ւր ինծի քու ճամբաներդ, սորվեցուր ինծի քու ուղիներդ» (Սաղմ. 25. 4):

Մեր ընտրութեամբ՝ քոյրս եւ ես՝ օրհնուած ենք վարձու տալով մօրս տունը՝ շատ սիրելի ընտանիքներու: Այս հարցով՝ սորվեցանք նաեւ այս կեանքը փոխող ճշմարտութիւնը. Աստուածաշունչը կ'օգնէ առաջնորդելու մեր որոշումները: Մաղմոսեբզուն գրեց. «Քու խօսքդ իմ ոտքերուս ճրագ է, ու շաւիղներուս՝ լոյս»: (Սաղմ. 119. 105): Թո՛ղ որ մենք քալենք Աստուծոյ լոյսին մէջ:

**Աղօթք** - Սիրելի Աստուա՛ծ, երբ ես որոշումներ կայացնեմ՝ առաջնորդէ զի՛ս Քու խօսքիդ լոյսով: Ամէն:

**Ի՛նչ տեսակ դժուարութիւններ կը դիմագրաւես: Ինչպես՞ կրնայ Աստուածաշունչը պատասխաններ տալ:**

Խաղաղութիւնը ուզեցեք՝ ուր ձեզ փոխադրեր եմ: [Եր. 29. 7]

## ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼ

2015-ին, Գոլորատո (Colorado) նահանգի՝ Գոլորատո Սըրինկզի (Colorado Springs) տեղական նախարարութիւնները միաւորուեցան, ծառայելու քաղաքին եւ ծնունդ առաւ COSILoveYou-ն: Ամէն աշնան, CityServe խումբը՝ զուրս կը ղրկէ հաւատացեալներ՝ համայնքին ծառայելու համար:

Քանի մը տարիներ առաջ՝ երեխաներս ու ես նշանակուեցանք քաղաքի կեդրոնական նախակրթարան դպրոցի մը՝ CityServe-ի ժամանակ: Մենք մաքրեցինք, մոլախոտեր քաշեցինք եւ աշխատեցանք արուեստի ծրագիրի մը վրայ՝ գունաւոր ժապաւէններ դնելով՝ շղթայակապ ցանկապատին վրայ, այնպէս մը փակցնելով, որ նմանի լեռներու: Պարզ, սակայն զարմանալիօրէն գեղեցիկ բան մը:

Ամէն անգամ՝ երբ ինքնաշարժով անցնիմ դպրոցին մօտէն, մեր խոնարհ արուեստի ծրագիրը ինծի կը յիշեցնէ՝ Երեմիա 29-ն: Հոն՝ Աստուած Իր ժողովուրդին պատուիրեց բնակութիւն հաստատելու եւ ծառայելու այն քաղաքին մէջ, ուր անոնք կը գտնուին: Ան հրամայեց այդ, թէեւ անոնք աքսորի մէջ էին եւ չէին ուզեր հոն ըլլալ: Մարգարէն ըսաւ. «Այն քաղաքին խաղաղութիւնը ուզեցէք՝ ուր ձեզի փոխադրեր եմ, եւ անոր համար Տէրո՛ջ աղօթեցէք, որովհետեւ անոր խաղաղութեամբ ձեզի խաղաղութիւն պիտի ըլլայ» (հմ. 7): Այստեղ՝ խաղաղութիւն բառը՝ Եբրայերէն շալօմ (shalom) բառն է: Եւ ան կը ներառէ ամբողջականութեան եւ ծաղկումի գաղափարը, որ կրնայ բերել միայն Աստուծոյ բարութիւնն ու փրկութիւնը:

Աստուած կը հրաւիրէ մեզ ըլլալու Շալօմի Իր գործակալները՝ ճիշդ այնտեղ, ուր մենք ենք եւ ստեղծելու գեղեցկութիւն եւ կիրառելու փրկութիւն պարզ ու հաստատ ձեւերով:

**Աղօթք** - Հայր, շնորհակալ եմ, որ զիս հրաւիրեցիր ըլլալու Զուօրիութեան գործակալը: Կը խնդրեմ՝ օգնէ ինծի տեսնելու, թէ ինչպէ՞ս կրնամ ծառայել իմ համայնքիս: Ամէն:

**Եթէ տեսած ենք Շալօմի վերականգնումը, օգտագործենք մեր ժամանակը, տաղանդները եւ կարելիութիւնները՝ մեր համայնքին օգնելու համար:**



Փութաջանութեամբ անելցուցէ՛ք ձեր հաւատքին վրայ  
առաքիլութիւն: [Բ. Պետ. 1. 5]

## ՆԿԱՐԱԳԻՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

**Ը**նտանիքը հաւաքուեցաւ՝ տասնեօթներորդ դարու քերականագէտ՝ մահամերձ Տօմինիք Պուհուրգի (*Dominiique Bouhours*) մահիճին շուրջ: Իր վերջին շունչը առնելով՝ ան ըսաւ. «Ես կը պատրաստուիմ - կամ պատրաստ եմ - մեռնելու: Երկու արտայայտութիւններն ալ շիտակ են»: Ո՞վ կը մտածէր քերականութեան մասին՝ մահուան մահիճին մէջ: Միայն՝ ան որ քերականութեան մասին մտածեց իր ամբողջ կեանքին ընթացքին:

Մինչ կը հասնինք ծերութեան, մեծապէս խրուած կ'ըլլանք մեր ճամբաներուն: Մենք ամբողջ կեանք մը ունեցած ենք, որ մեր ընտրութիւնները վերածենք սովորութիւններու, որոնք կը վերածուին նկարագիրի՝ լաւ կամ վատ: Մենք ա՛ն ենք, որ ընտրած ենք դառնալ: Աւելի դիւրին է աստուածահաճոյ սովորութիւններ զարգացնել, մինչ մեր նկարագիրը երիտասարդ եւ ճկուն է: Պետրոս կը յորդորէ. «Ամբողջ փութաջանութեամբ անելցուցէ՛ք ձեր հաւատքին վրայ՝ ժուժկալութիւն, ժուժկալութեան վրայ՝ համբերութիւն, համբերութեան վրայ՝ բարեպաշտութիւն, բարեպաշտութեան վրայ՝ եղբայրսիրութիւն, ու եղբայրսիրութեան վրայ՝ սէր» (Բ. Պետ. 1. 5-7): Կիրառէք այս առաքիլութիւնները եւ «արդարեւ ա՛յսպէս է որ ճոխութեամբ պիտի հայթայթուի ձեզի մեր Տէրոջ ու Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի յաւիտենական թագաւորութեան մուտքը» (Հմ. 11):

Պետրոսի ցուցակին ո՞ր նկարագրի գիծերը՝ անելի կենդանի են մեր մէջ: Ո՞ր յատկանիշները տակաւին պէտք է զարգանան: Մենք չենք կրնար իսկապէս փոխել, թէ մենք ո՞վ դարձած ենք, բայց Յիսուս կրնայ: Խնդրենք Անոր, որ փոխակերպէ եւ զօրացնէ մեզ: Այդ փոխակերպումը կրնայ ըլլալ դանդաղ ու դժուար ճանապարհորդութիւն, բայց Յիսուս մասնագիտացած է ապահովելու ճիշդ ա՛յն՝ ինչ որ մեզի պէտք է: Խնդրենք Իրմէ, որ փոխակերպէ մեր նկարագիրը, որպէսզի անելի ու անելի իրեն նմանինք:

**Աղօթք** - Սիրելի Յիսուս, կը խնդրեմ՝ զի՛ս անելի Զեզի նման դարձուր, որպէսզի ուրիշներ պարգապէ՛ս իմ մէջս տեսնեն Զե՛գ: Ամէն: **Վստա՛հ ունինք նկարագրի գիծեր, զոր կ'ուզենք փոխել: Խնդրենք Աստուծոյ զօրութիւնն ու տրամադրութիւնը եւ սկսինք փոխուիլ:**



Ստե՛ք անոր դռները շնորհակալութեամբ, եւ անոր գաւիթները՝ գովաբանութեամբ. շնորհակա՛լ եղէք անկէ, օրհնաբանեցէ՛ք անոր անունը: [Սաղմ. 100. 4]

## ՇՆՈՐՀԱԿԱԼ ԸԼԼԱԼ՝ ԶԱԿԱՌԱԿ ՓՈՐՃՈՒԹԻՆՆԵՐՈՒ

**Ե**ս կը հետեւիմ եւ կ'աղօթեմ ընկեր գրողի մը համար, որ առցանց գրառումներ կ'ընէ քաղցկեղի իր դժուարին ճամբորդութեան մասին: Ան հերթական կը բաժնեկցի իր Ֆիզիքական ցաւին եւ մարտահրաւէրներուն մասին տեղեկութիւններ տալով, ինչպէս նաեւ աղօթքի խնդրանքներով՝ կը բաժնեկցի Աստուածաշունչի հատուածներով եւ կը փառաբանէ Աստուած: Գեղեցիկ է տեսնել անոր խիզախ ժպիտը անկախ անկէ, որ ան հիւանդանոց է եւ կը սպասէ բուժումի, թէ տունը՝ գլխուն կեղծ ծամ դրած, որովհետեւ իր մագերը կը թափէին: Իւրաքանչիւր մարտահրաւէրի ժամանակ՝ ան երբէ՛ք չի զլանար ուրիշներու խրախուսելէ, որ փորձութիւններու ժամանակ Աստուծոյ վստահին:

Երբ մենք դժուարութիւններու մէջէն անցնինք, կրնայ ըլլալ որ մեզի համար դժուար ըլլայ երախտագիտութիւն յայտնել եւ Աստուած փառաբանելու պատճառներ գտնել: Սակայն՝ 100-րդ Սաղմոսը մեզի պատճառ կու տայ ուրախանալու եւ Աստուած փառաբանելու անկախ մեր վիճակներէն: Սաղմոսերգուն կ'ըսէ. «Գիտցէ՛ք թէ Եհովան է միակ Աստուածը. Ա՛ն ստեղծեց մեզ, եւ ո՛չ թէ մենք: Մենք անոր ժողովուրդն ու անոր արօտին ոչխարներն ենք» (Հմ. 3): Ան կ'աւելցնէ. «Որովհետեւ Տէրը բարի է, Անոր կարեկցութիւնը յաւիտենական է ու անոր հաւատարմութիւնը՝ սերունդէ սերունդ» (Հմ, 5):

Ի՞նչ ալ ըլլան մեր փորձութիւնները, կրնանք մխիթարուիլ՝ անով որ Աստուած մօտ է մեր կոտորուած սիրտերուն (34. 18): Որքա՛ն շատ ժամանակ անցընենք Աստուծոյ հետ, այնքան աւելի կրնանք «մտնել անոր դռները շնորհակալութեամբ եւ Անոր գաւիթները գովաբանութեամբ» եւ «շնորհակա՛լ ըլլալ անկէ, օրհնաբանել անոր անունը» (100. 4):

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնե՛ր ինծի փառաբանել Ըե՛զ, նոյնիսկ իմ փորձութիւններուս ժամանակ: Ամէն:  
**Ի՛նչ բանի համար շնորհակալ ըլլալու ենք:** Ի՛նչ բաներու համար Աստուած փառաբանելու ենք ճիշդ հիմա:

Դո՛ւք տուեք ատուց՝ որ ուտեն: [Մարկ. 6. 37]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԶԵՏ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

**Ե**րբ ընկերուհիս եւ իր ամուսինը՝ կը մաքառէին յղանալու, բժիշկները խորհուրդ տուին՝ բժշկական միջոցառումներ ընել: Բայց ընկերուհիս կը տատամաէր. «Արդե՞օք աղօթքը բաւարար չէ՞ մեր խնդիրը լուծելու համար: Իսկապէ՞ս պէ՞տք է այդ միջոցառումը կատարեմ»: Ան կը փորձէր պարզել թէ ի՞նչ դեր ունի մարդկային արարքը՝ տեսնելու, որ Աստուած գործի վրայ է:

Տէր Յիսուսի ամբոխին կերակրելու պատմութիւնը՝ կրնայ օգնել մեզի այստեղ (Մարկ. 6. 35-44): Մենք կրնանք իմանալ, թէ ինչպէ՞ս պատմութիւնը կ'աւարտի. երբ հազարաւոր մարդիկ հրաշքով կը կերակրուին՝ ընդամենը հինգ հացով եւ երկու ձուկով (Հմ. 42): Բայց նկատի առնենք թէ ո՞վ է կերակրողը ամբոխին: Աշակերտները (Հմ. 37): Ի՛սկ ո՞վ կ'ապահովէ ուտելիքը: Անոնք կ'ընեն (Հմ. 38): Ո՞վ կը բաժնէ ուտելիքը եւ կը մաքրէ վերջը: Աշակերտները (Հմ. 39-43): Յիսուս ըսաւ. «Դո՛ւք տուեք ատուց՝ որ ուտեն» (Հմ. 37): Յիսուս ըրաւ հրաշքը, բայց այդ պատահեցաւ՝ երբ աշակերտները ըրին իրենց տրուած պատուէրը:

Լաւ բերքը Աստուծոյ պարգեւն է (Մաղմ. 65. 9-10), բայց հողագործը տակաւին պէտք է աշխատի հողին վրայ: Յիսուս՝ Պետրոսին խոստացաւ «Ձուկ որսալ». բայց ձկնորսը՝ Պետրոս՝ տակաւին պէտք է իր ցանցը նետէր ձուկ որսալու համար (Ղուկ: 5. 4-6): Աստուած կրնայ խնամել երկիրը եւ հրաշքներ գործել առանց մեզի, բայց սովորաբար Ան կ'ընտրէ աշխատիլ աստուածա-մարդկային համագործակցութեան մէջ:

Ընկերուհիս ըրաւ բժշկական միջոցառումը եւ աւելի ուշ դացաւ: Թէ՛եւ այս հրաշքի բանաձեւ մը չէ՛, սակայն դաս մըն մեզի համար: Աստուած յաճախ կ'ընէ իր հրաշագործ աշխատանքը՝ այն ձեւերով, որ Ան դրած է մեր ձեռքերուն մէջ:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ, որ զիս ընդգրկեցիր Քու հիանալի գործիդ մէջ: Կը խնդրեմ՝ ա՛ն իմ ձեռքերուս մէջ եղածը եւ հրաշքներ գործէ անոր միջոցով: Ամէն:

**Երբեմն կը փորձուինք աղօթելու՝ առանց քայլ առնելու: Աստուած կ'ուզէ որ մենք մեր բաժինը ընենք՝ մի՛նչ Ինք կ'ընէ Իրը՝ մեզի հետ գործակցաբար:**

Աստուած լոյս է: [Ա. Յովհ. 1. 5]

## ՔՐԻՍՏՈՍԻ ԼՈՅՍԸ՝ ԿԸ ՓԱՅԼԻ ՊԱՅԾԱՌ

**Ե**րբ մարեցին Միչիկըն (Michigan) նահանգի՝ Հայլենտ Բարդ (Highland Park) քաղաքի փողոցներուն լոյսերը, լոյսի մէկ այլ աղբիւրի՝ արեւի հանդէպ սէրը աւելցաւ: Մաքարող քաղաքը պէտք եղած նիւթականը հունէր վճարելու՝ ելեկտրականութեան ընկերութեան: Ընկերութիւնը՝ անջատեց փողոցի բոլոր լոյսերը եւ հանեց 1400 լոյսի ձողերուն վրայէն լամբարները: Այդ ձգեց քաղաքի բնակիչներուն անապահով եւ մթութեան մէջ: Բնակիչ մը ըսաւ լրատուական խումբի մէկ անդամին. «Ահա՛ քանի մը երեխաներ կու գան հիմա՛ որոնք դպրոց երթալու իրենց ճամբուն վրայ են: Լոյսեր չկան: Անոնք պարզապէս պէ՛տք է վտանգը յանձն առնեն՝ քայլելու համար դէպի դպրոց»:

Այդ փոխուեցաւ, երբ ո՛չ հասութեամբ ընկերակցութիւն մը ստեղծուեցաւ՝ քաղաքի արեւի ճառագայթով գործող փողոցի լոյսեր տեղադրելու համար: Միասին աշխատելով՝ մարդասիրական այս կազմակերպութիւնը՝ խնայեց քաղաքի՝ դրամները ելեկտրական հոսանքին համար վճարելու՝ միաժամանակ ապահովելով լոյսի աղբիւր մը, որ օգնե՛ց բաւարարել բնակիչներուն կարիքները:

Քրիստոսով մեր կեանքին մէջ՝ մեր յուսալի լոյսի աղբիւրը՝ Յիսուս է: Ինչպէս որ գրած է Յովհաննէս առաքեալ. «Աստուած լոյս է, եւ անոր մէջ բնաւ խաւար չկայ» (Ա. Յովհ. 1. 5): Յովհաննէս նշեց նաեւ. «Եթէ լոյսի մէջ ընթանաք, ինչպէս ան լոյսի մէջ է, հաղորդութիւն կ'ունենաք իրարու հետ, եւ անոր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի արիւնը կը մաքրէ մեզ ամէն մեղքէ» (Հմ. 7):

Յիսուս՝ Ինք յայտարարեց. «Ե՛ս եմ աշխարհի լոյսը. ան որ կը հետեւի ինծի՝ պիտի չքալէ խաւարի մէջ, հապա պիտի ունենայ կեանքի լոյսը» (Յովհ. 8. 12): Երբ Աստուծոյ Սուրբ Հոգին կ'առաջնորդէ մեր իւրաքանչիւր քայլը, մենք երբէ՛ք չենք քայլեր խաւարի մէջ: Անոր լոյսը միշտ կը փայլի պայծառ:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, թո՛ղ Զու լոյսդ շողայ՝ պայծառ՝ կեանքիս իւրաքանչիւր անկյունին մէջ: Ամէն:

**Եթէ զգացած ենք Յիսուսի լոյսը մեր կեանքերուն մէջ, մենք կրնանք ուրիշներու պատմել անոր մասին:**

Եզգի պէս Աստուած ո՞վ կայ, որ անօրէնութիւնը կը ներէ:  
[Միք. 7. 18]

## ԱՍՏՈՒԾՍԷ ՆԵՐՈՒԱԾ

**Գ** ոհաբանութեան տօնին առիթով՝ Ամերիկայի Միացեալ Նահազներու Նախագահը՝ Սպիտակ Տան մէջ կ'ողջունէ երկու հնդկահաւեր՝ նախքան անոնց նախագահական ներուժ շնորհելը: Այդ հնդկահաւերը Գոհաբանութեան օրուայ աւանդական կերակուրի հիմնական ճաշատեսակ ծառայելու փոխարէն՝ ապահով կ'ապրին իրենց կեանքի մնացեալ օրերը՝ ազարակի մը մէջ: Թէեւ հնդկահաւերը չեն կրնար ըմբռնել իրենց տրուած ազատութիւնը, անսովոր ամէնամեայ այս աւանդութիւնը՝ կ'ընդգծէ ներման կենսատու ուժը:

Միքիա մարգարէն հասկցաւ ներուժի նշանակութիւնը, երբ խիստ նախազգուշացում գրեց տակաւին Երուսաղէմ գտնուող Իսրայէլացիներուն: Իրաւական բողոքի ձեւով՝ Միքիան արձանագրեց, որ Աստուած վկայութիւն կու տայ ազգին դէմ՝ (Միք. 1. 2) չարիք ցանկանալու եւ ազահութեան, անազնուութեան եւ բռնութեան իրենց տրուելուն համար (6. 10-15):

Հակառակ այս ապստամբ արարքներուն, Միքիա կ'աւարտէ՝ յոյսով, որ հիմնուած է այն խոստումին վրայ, որ Աստուած յաւիտեան բարկացած չի մնար, այլ փոխարէնը «կը ներէ անօրէնութիւնը» (7. 18): Որպէս բոլորին Արարիչն ու Դատաւորը՝ Աստուած կրնայ հեղինակութեամբ յայտարարել, որ Ա՛ն մեր ըրած չարագործութիւնները մեզի դէմ չի բռներ՝ Աբրահամին տուած Իր խոստումին պատճառով (Հմ. 20), որ ի վերջոյ իրականացաւ Յիսուսի մահով եւ յարութեամբ:

Այն բոլոր ուղիներէն, որոնցմով մենք չենք կրնար ապրիլ Աստուծոյ չափանիշներուն համապատասխան, ներուժ ստանալը՝ անարժան պարգեւ է, որ կը բերէ մեծ ու սքանչելի օրհնութիւններ: Երբ մենք աւելի ու աւելի ըմբռնենք Անոր լիակատար ներուժին օգուտները, եկէ՛ք արձագանգենք գովաբանութեամբ եւ երախտագիտութեամբ:

**Աղօթք** - Ողորմած Յայր, թո՛ղ որ ապրիմ՝ երախտագիտութեամբ Զու տուած ներումիդ համար: Ամէն:

**Որո՞նք են Աստուծոյ առաջարկած ներումին օգուտները: Ինչպէ՞ս այդ՝ կը յիշեցնէ մեզի երախտագետ ըլլալու:**

Կը բաղձամ Աստուծո՛յ հետ վիճաբանիլ: [Յոթ 13. 3]

## ԶՍՊՈՂ ՀՐԱՄԱՆ

**Ռ**ատարանին մէջ՝ մարդը Աստուծոյ դէմ զսպումի հրամանի դիմում կատարեց՝ պնդելով, որ Ան «յատկապէս անբարիացական» եղած է իրեն հանդէպ եւ ցոյց տուած է «լուրջ բացասական վերաբերմունք»: Նախագահող դատաւորը՝ մերժեց ընդունիլ դիմումը, ըսելով թէ մարդը օգնութեան պէտք ունի, ո՛չ թէ դատարանէն՝ այլ իր հոգեկան առողջութեան համար: Իրական պատմութիւն մը. գուարճալի՝ բայց նոյն ատեն՝ տխուր:

Բայց միթէ՞ մենք այդքա՛ն տարբեր ենք: Չե՞նք ուզեր երբեմն ըսել. «Կանգնի՛ր, Աստուած, կը խնդրեմ, ես բաւարար ցաւ ու նեղութիւն ունիմ»: Յոբ այդպէս ըրաւ: Ան՝ դատի կանչեց Աստուծոյ: Անբեւեակայելի անձնական ողբերգութիւններուն դիմանալէ ետք, Յոբ ըսաւ. «Կը բաղձամ Աստուծոյ Հետ վիճաբանիլ» (Յօբ 13. 3) եւ մտածեց «Աստուծոյ դատարան տանիլ» (9. 3): Ան նոյնիսկ զսպումի հրաման ուզեց. «Ձեռքդ վրայէս հեռացո՛ւր ու քու երկիւղդ զիս թող չզարհուրեցնէ» (13. 21): Յոբի մեղադրական փաստարկը՝ ո՛չ թէ իր անմեղութիւնն է, այլ ա՛յն ինչ որ կը համարէ Աստուծոյ անհիմն կոպիտութիւնը. «Հաճելի՞ է քեզի՞ զիս հարստահարել» (10. 3):

Երբեմն մե՛նք ալ կը զգանք, որպէս թէ Աստուած անարդար է: Իրականութեան մէջ, Յոբի պատմութիւնը բարդ է եւ հեշտ պատասխաններ չի տար մեր հարցերուն: Աստուած ի վերջոյ կը վերականգնէ Յոբի Ֆիզիքական հարստութիւնը, բայց այդ միշտ ալ իր ծրագիրը չէ՛ մեզի համար: Թերեւս Յոբի վերջին խոստովանութեան մէջ՝ մենք կը գտնենք անկեղծութեամբ տրուած դատավճիռ մը. «Արդարեւ ես խօսեցայ՝ առանց հասկնալու ինձի համար սքանչելիքներուն մասին, որոնց գիտակից չէի» (42. 3): Կէտը՝ այստեղ՝ այն է, որ Աստուած պատճառներ ունի, որոնց մասին մենք ո՛չ ինչ գիտենք եւ անոր մէջ հիանալի յոյս կա՛յ:

**Աղօթք** - Հայր, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի, որ բողոքներս Զեզի բերեմ ու Զեզմէ շնորհք խնդրեմ: Ամէն

**Շատ անգամ մենք ալ կարծես կ'ուզենք «Աստուծոյ՝ դատարան տանիլ»:** Սակայն պա՛րզ է, մենք հարցեր ունինք Աստուծոյ տանելիք, բայց վստահինք Անոր հոգատարութեան ու խնամքին:



[Դանիել] շարունակեց ծնրադրելով աղօթել եւ իր Աստուծո՛ւն շնորհակալ ըլլալ՝ իր վաղեմի սովորութեանը պէս: [Դան. 6. 10]

## ԵՐԱԽՏԱԳԷՏ ՊԱՏԱՍԽԱՆ

**Հ** ում **Ձուկ եւ Անձրեւի Զուր:** Թիմըթի (Timothy) անունով Աւստրալացի նաւաստի մը՝ երեք ամիսներ գոյետեւեց միայն այդ պաշարով: Յամաքէն 1200 մղոն հեռաւորութեան վրայ՝ Խաղաղական Ովկիանոսի ջուրերուն մէջ՝ փոթորիկէն վնասուած իր նաւուն վրայ անօգնական՝ ան կորսնցուց իր յոյսը: Բայց յետոյ Մէքսիքական ձկնորսներու նաւի մը անձնակազմը՝ նկատեց անոր չախճախուած նաւը եւ փրկեց զինք: Աւելի ուշ, նիհարցած եւ ովկիանոսի դժուարութիւններէն վնասուած մարդը յայտարարեց. «Ես պարզապէս շնորհակալ եմ՝ նաւապետին եւ ձկնորսներուն, որոնք փրկեցին կեանքս»:

Թիմըթի շնորհակալութիւն յայտնեց իր կրած չարչարանքէն ետք, բայց Դանիէլ մարգարէն բացայայտեց երախտապարտ սիրտ մը՝ ճգնաժամէն առաջ, ընթացքին եւ յետոյ: Այլ Հրեաներու հետ Յուդայի երկիրէն՝ Բաբելոն աքսորուելով (Դան. 1. 1-6), Դանիէլ բարձրացած էր իշխանութեան գլուխը միայն այն պատճառով, որ իրեն սպառնան ան՝ յառաջնորդներ, որոնք կը ցանկային կը մահը (6. 1-7): Անոր թշնամիները՝ ստիպեցին Բաբելոնի թագաւորին՝ ստորագրել հրամանգիր մը, ուր կ'ըսուէր, որ ո՛վ որ աղօթէր իրմէ՛զ գատ «ոեւէ աստուծոյ, առիւծներու գուրը նետուի» (Հմ. 7): Ի՞նչ պիտի ընէր Դանիէլ. մարդ մը, որ կը սիրէր ու կը ծառայէր միակ ճշմարիտ Աստուծոյ: Ան «շարունակեց ծնրադրելով աղօթել եւ իր Աստուծո՛ւն շնորհակալ ըլլալ՝ իր վաղեմի սովորութեանը պէս» (Հմ. 10): Ան շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ եւ անոր երախտապարտ սիրտը վարձատրուեցաւ, քանի որ Աստուած խնայեց անոր կեանքը եւ պատիւ բերաւ անոր (Հմ. 26-28):

Թո՛ղ Աստուած օգնէ մեզի «ամէն բանի մէջ շնորհակալ ըլլալու» (Ա. Թեա. 5. 18): Մեր երախտապարտ հոգին կը պատուէ Աստուծոյ եւ կ'օգնէ մեր հաւատքը պահպանելու:

**Աղօթք** - Հայր, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի շնորհակալութիւն յայտնելու Զեգի՝ նոյնիսկ այն ժամանակ՝ երբ կեանքը դժուար է: Ամէն: **Կարեւոր է կանոնաւորաբար շնորհակալութիւն յայտնել Աստուծոյ եւ այդ ընելով աւելի կը զարգացնենք մեր երախտապարտ հոգին:**

Ձեր լոյսը այնպես թող փայլի մարդոց առջեւ, որ տեսնեն ձեր բարի գործերը եւ փառաբանեն ձեր Յայրը՝ որ երկինքն է: [Մատթ. 5. 16]

## ԲԱՐԻ ՀԱՄԲԱԷ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԱՐ

**Տ**լօրիտայի Պետական Համալսարանի մէջ ուսանող եղած տարիներուն, Չարլի Ուորտ (Charlie Ward) երկու տարբեր տեսակի խաղերու մարզիկ էր: 1993-ին, պաշտպանողական դիրքի վրայ խաղացող երիտասարդ մարզիկը՝ շահեցաւ Հէյսմըն (Heisman) բաժակը՝ որպէս գոլէճի լաւագոյն Ամերիկացի Ֆուլթայօլիստը, ինչպէ՛ս նաեւ դարձաւ պասքէթպօլի աստղ մը:

Օր մը, խաղէն առաջ եղած գրոյցի ընթացքին, պասքէթպօլի մարզիչը՝ աղտոտ լեզու եւ արտայայտութիւններ օգտագործեց, երբ կը խօսէր իր խաղացողներուն հետ: Ան նկատեց, որ Չարլի «անհանգիստ էր», հետեւաբար ըսաւ. «Չարլի, ի՞նչ կա՛յ»: Ուորտ ըսաւ. «Մարզի՛չ, գիտե՛ս որ Ֆուլթայօլի մարզիչ Մարզիչ Պաուտըն (Bowden), չի գործածեր նման աղտոտ լեզու ու տակաւին կը ստիպէ մեզի՝ ահաւոր կերպով լաւ խաղալ»:

Չարլիի Քրիստոսանման նկարագիրը, թոյլ տուաւ անոր՝ ազնիւ կերպով խօսելու իր պասքէթպօլի մարզիչին հետ՝ ա՛յս հարցին շուրջ: Իրականութեան մէջ, մարզիչը լրագրողի մը ըսաւ. «Կարծե՛ս թէ հրեշտակ մը կը նայի քեզի», երբ ան կը խօսէր Չարլիի հետ:

Անհաւատներու մօտ՝ բարի համբաւը եւ Քրիստոսի հաւատարիմ վկայութիւնը՝ դժուար է պահպանել: Բայց միեւնոյն ժամանակ, Յիսուսի հաւատացողները կրնան աւելի շատ նմանիլ Անոր, երբ Ան կ'օգնէ ու կ'առաջնորդէ անոնց: Տիտ. 2-ին մէջ, երիտասարդները ինչպէս նաեւ բոլոր հաւատացեալները, կանչուած են ըլլալու «խոհեմ» (Հմ. 6) եւ ցոյց տալու «իբր տիպար բարի գործերու ... ողջամիտ եւ անպարսաւելի խօսք» (Հմ. 7-8):

Երբ մենք այդպէ՛ս ապրինք Քրիստոսի զօրութեամբ, մենք ո՛չ միայն կը պատուենք զինք, այլ նաեւ բարի համբաւ կը կերտե՛նք: Ապա, երբ Աստուած կու տայ մեզի անհրաժեշտ իմաստութիւնը, մարզիկ պատճառ կ'ունենան լսելու մեր ըսածները:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը խնդրե՛մ՝ օգնէ ինծի ածիլ այնպիսի նկարագիրով մը, որ կ'արտացոլացնէ Զե՛ն ու կը պատուէ: Ամէն:  
**Բա՛րի համբաւը կ'օգնէ՛ լաւ ազդեցութիւն ձգելու ուրիշներու վրայ: Ո՛ւստի կերտե՛նք Քրիստոսանման նկարագիր մը:**

Բառնաբաս՝ կը յորդորեր բոլորն ալ՝ որ յարին Տէրոջ սիրտով:  
[Գործք 11. 23]

## ՔԱՉԱԼԵՐՈՂ ՍԱՐԴԻԿ

«Քացարձակ քաջալերանք»: Սա՛՛ էր այն արտայայտութիւնը, որ կ'օգտագործէ Ճ. Ռ. Ռ. Թոլքին (J. R. R. Tolkien) նկարագրելու՝ այն անձնական շահկցութիւնը, որ իր ընկեր եւ գործակից՝ Ք. Ս. Լուիս (C. S. Lewis) ցուցաբերեց իրեն, երբ ան գրեց իր նշանաւոր «Մատանիներու Տէրը» (The Lord of the Rings) գիրքին՝ երե՛ք հատորները: Այս շարունակական հատորներու վրայ Թոլքինի աշխատանքը տքնաջան ու խստապահանջ էր եւ ան անձամբ տպագրած էր երկար ձեռագիրները՝ աւելի քան երկու անգամ: Երբ ան զանոնք ուղարկեց Լուիսին, Լուիս պատասխանեց ըսելով. «Այն բոլոր երկար տարիները, որ սպառեցիր անոր վրայ՝ արդարացուած են»:

Աստուածաշունչի լաւագոյն քաջալերողը, հաւանաբար՝ Կիպրոսէն եղող Յովսէսն էր, որ աւելի ծանօթ է Բառնաբաս անունով, որ կը նշանակէ «մխիթարութեան որդի» կամ «քաջալերանքի որդի», այն անունը՝ որ առաքեալները տուին անոր (Գործք 4. 36): Բառնաբասն էր, որ ջատագովեց Պօղոս առաքեալին (Գործք 9. 27): Աւելի ուշ՝ երբ ո՛չ Հրեայ հաւատացեալներ՝ սկսան հաւատալ Յիսուսի, Ղուկաս կ'ըսէ մեզի, որ ան «կը յորդորէր բոլորն ալ՝ որ յարին Տէրոջ սիրտով» (11. 23): Ղուկաս կը նկարագրէ զինք որպէս «բարի մարդ մը ու հաւատքով լեցուն» ու աւելցուց ըսելով «մեծ բազմութիւն մը աւելցաւ Տէրոջ եկեղեցիին թիւին վրայ» (Հմ. 24):

Կարելի չէ՛ չափել խրախուսական ու մխիթարական խօսքերու արժէքը: Երբ հաւատքի եւ սիրոյ խօսքեր կ'առաջարկենք ու կը բաժնեկցինք Աստուծոյ տուած «յաւիտենական մխիթարութիւն»ը (Բ. Թես. 2. 16) ուրիշներու հետ, միջոց կ'ըլլանք անոնց կեանքերը փոխակերպելու ու քաջալերելու զիրենք: Թո՛ղ Ան օգնէ մեզի այսօր, որ առաջարկենք մէկու մը «բացարձակ քաջալերանք»:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինծի այսօր, որ քաջալերանք ըլլամ՝ մէկու մը: Ամէն:

**Որո՞ւ կը ցանկաս քաջալերել այսօր: Ինչպէ՞ս կրնաս բաժնեկցիլ Աստուծոյ սերը անոնց հետ՝ բարի գործով կամ խօսքով:**



Ո՛վ Տէր, զիս հետազօտեցիր ու ճանչցար: [Սաղմ. 139. 1]

## ԱՍՏՈՒԱԾ ԳԻՏԷ՛ ԶԻՍ

**Ե**րբ քոյրս գտաւ մեր մանկութեան պատմութեան գիրքերէն մէկը, մայրս, որ այժմ եօթանասուն տարեկան է, շատ ուրախացա՛ւ: Ան յիշե՛ց այն բոլոր զուարճալի մանրամասնութիւնները՝ արջի մը մասին, որ գողցած ըլլալով մեզը՝ հետապնդուած էր զայրացած մեղուներու հոյով մը: Նաեւ յիշեց, թէ ինչպէ՛ս քոյրս եւ ես կը ծիծաղէինք, երբ կը սպասէինք արջին փախուստին մասը: «Շնորհակալ եմ, որ մանկութեան տարիներուն՝ մեզի միշտ պատմութիւններ կը պատմէիր», ըսի մօրս: Ան գիտէ իմ ամբողջ պատմութիւնս, ներառեալ այն թէ ինչպիսին էի ես, որպէս փոքր երախայ: Հիմա՛, երբ ես չաբահաս եմ, ան տակաւին գիտէ եւ կը հասկնայ զի՛ս:

Աստուած ալ մեզ կը ճանչնայ՝ աւելի խոր՝ քան ռեւէ մարդ, ներառեալ մենք: Դաւիթ կ'ըսէ, որ Ան կը «հետազօտէ» մեզ (Սաղմ. 139. 1): Իր սիրով կը քննէ եւ կատարելապէս կը հասկնայ: Աստուած գիտէ մեր միտքերը՝ հասկնալով մեր ըսածներուն ետին եղած պատճառները եւ իմաստները (Հմ. 2, 4): Ան մօտէն ծանօթ է մեր իւրաքանչիւր մանրամասնութեան եւ կը գործածէ այս գիտելիքը մեզի օգնելու համար (Հմ. 2-5): Ան, որ մեզ ամենաշատը կը ճանչնայ, չի՛ շեղիր զզուելով, այլ կը հասնի մեզի՝ Իր սիրով եւ իմաստութեամբ:

Երբ մենք կը զգանք միեակ, անտեսանելի կամ մոռցուած, կրնանք ապահով ըլլալ՝ այն ճշմարտութեան մէջ, որ Աստուած միշտ մեզի հետ է, կը տեսնէ մեզ եւ կը ճանչնայ մեզ (7-10): Ան գիտէ մեր բոլոր կողմերը, որոնք ուրիշներ չեն գիտեր եւ աւելին ալ գիտէ: Դաւիթի նման՝ մենք ալ կրնանք վստահօրէն ըսել. «Զիս ճանչցար ... Հո՛ն ալ քու ձեռքդ զիս պիտի առաջնորդէ, եւ քու աջ ձեռքդ զիս պիտի բռնէ» (Հմ. 1, 10):

**Աղօթք** - Սիրելի Աստուած, Դո՛ն զիս ամենալաւը կը ճանչնաս եւ ամենէն աւելի կը սիրես: Այնքա՛ն երախտապարտ եմ քու ձեռքիդ համար, որ ունիս իմ կեանքիս վրայ: Ամէն:

**Ինչպէ՛ս կը քաջալերուիս՝ իմաստուն եւ սիրող Աստուածով մը, որ քե՛զ մօտէն կը ճանչնայ: Ինչպէ՛ս կրնաս բաժնեկցիլ Անոր սիրառատ ներկայութիւնը՝ ուրիշներու հետ:**



Կեանքը յայտնուեցաւ, մենք տեսանք զայն, եւ կը վկայենք:  
[Ա. Յովհ. 1. 2]

## ԵՐԲ ԿԵԱՆՔԸ ՅԱՅՏՆՈՒԵՑԱԲ

1986 թուականին՝ Ուքրաինայի (Ukraine) մէջ՝ Չէրմոպիլի (Chernobyl) միջուկային մեծ աղէտը՝ ծանր գերակշռեց աշխարհի ուշադրութեան: Երբ աղէտի մեծութիւնը ակնյայտ դարձաւ, պաշտօնակատարները յաղթահարեցին ճառագայթումը զսպելու կարեւորագոյն խնդիրը: Բարձր շողարձակ բեկորներէն ելլող մահացու կամա ճառագայթները կը շարունակէին ոչնչացնել մարդ-մեքենաները (robot), որոնք տեղադրուած էին մաքրելու համար աւերը:

Ուստի, անոնք ստիպուած եղան օգտագործել «կենսամարդ-մեքենաներ» մարդ էակներ: Հազարաւոր հերոս մարդեր՝ դարձան «Չէրմոպիլի լուծարողներ», հեռացնելով վտանգաւոր նիւթերը՝ ինխուսն վայրկեաններու «հերթափոխութեամբ»: Մարդիկ ըրին ա՛յն, ինչ որ չկրցաւ արուեստագիտութիւնը ընել՝ մեծ անձնական վնասներով:

Դարեր առաջ՝ Աստուծոյ դէմ մեր ապստամբութիւնը բերաւ մեծ աղէտ մը, որ պատճառ դարձաւ միւս բոլոր աղէտներուն (տե՛ս Ծնն. 3): Ադամի եւ Եւայի միջոցով՝ մենք որոշեցինք բաժնուիլ մեր Արարիչէն եւ այդ ընթացքին մէջ՝ մեր աշխարհը թունաւոր խառնաշփոթ դարձուցինք՝ աղտեղութիւնով: Մենք երբէ՛ք չենք կրնար ինքնուրոյն մաքրել զայն:

Սա՛ է Սուրբ Ծնունդի ամբողջ իմաստը: Յովհաննէս առաքեալ՝ Յիսուսի մասին գրեց. «Արդարեւ կեանքը յայտնուեցաւ, մենք տեսանք զայն, եւ կը վկայենք ու կը պատմենք ձեզի այդ յաւիտենական կեանքին մասին, որ Հօրը քով էր եւ յայտնուեցաւ մեզի» (Ա. Յովհ. 1. 2): Ապա՛ Յովհաննէս յայտարարեց. «Անոր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի արիւնը կը մաքրէ մեզ ամէն մեղքէ» (Հմ. 7):

Երբ մենք կը հաւատանք Յիսուսի, ան կը վերականգնէ մեզ՝ շիտակ յարաբերութիւն ունենալու Հօրը հետ:

**Աղօթք** - Սիրող Աստուած, շնորհակալութիւն, որ ղրկեցիր Որդիդ այս աշխարհ՝ մաքրելու մեր աղտեղութիւնը: Ամէն:  
**Ինչպե՛ս կրնանք փորձել մաքրել մեր աղտեղութիւնը: Ինչպե՛ս յանձնելու ենք մեր պայքարը՝ Տէր Յիսուսի:**

Յայր, եթե փափաքիս՝ հեռացո՛ւր այս բաժակը ինձմէ. բայց ո՛չ թէ ի՛մ կամքս՝ հապա քո՛ւկդ թող ըլլայ: [Ղուկ. 22. 42]

## ԱՂՕԹՔ ՄԸ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔԻՆ ՅԱՄԱՐ

**Ո**րպէս հաւատացեալ, վերցուցի Աստուածաշունչս եւ կարդացի հետեւեալը. «Խնդրեցէ՛ք՝ ու պիտի տրուի ձեզի» (Մատթ. 7. 7): Մեկնաբանութեան գիրքը՝ կը բացատրէր, որ իրականութեան մէջ՝ մենք պէտք է խնդրենք Աստուծմէ, որ մեր կամքը համընկնի Իր կամքին: Խնդրելով՝ որ Իր կամքը կատարուի, մենք վստահ կ'ըլլանք, թէ կը ստանանք այն՝ ինչ որ կը խնդրենք: Այդ բանը՝ ինծի համար նոր գաղափար մըն էր. եւ ես աղօթեցի, որ Աստուծոյ կամքը կատարուի՝ իմ կեանքիս մէջ:

Աւելի ուշ, նոյն օրը, զարմանալիօրէն ոգեւորուեցայ աշխատանքի հնարաւորութիւնով մը, որ արդէն մերժած էի մտքիս մէջ եւ յիշեցի աղօթքիս մասին: Թերեւս՝ ինչ որ ես չէի կարծեր՝ թէ կը ցանկայի ունենալ, իրականութեան մէջ, Աստուծոյ կամքին մէկ մասն էր՝ իմ կեանքիս համար: Շարունակեցի աղօթել եւ ի վերջոյ՝ ընդունեցի աշխատանքը:

Շատ աւելի խորը եւ յաւիտենական նշանակալից պահու մը մէջ, Յիսուս ձեւաւորեց ա՛յս՝ մեզի համար: Նախքան Իր դաւաճանութիւնն ու ձեռքակալութիւնը, որը յանգեցաւ Իր խաչելութեան, Ան աղօթեց. «Հայր, եթէ փափաքիս՝ հեռացո՛ւր այս բաժակը ինձմէ. բայց ո՛չ թէ ի՛մ կամքս՝ հապա քո՛ւկդ թող ըլլայ» (Ղուկ. 22. 42): Քրիստոսի աղօթքը լեցուած էր տառապանքով եւ ցաւով, երբ Ան դիմագրաւեց Փիզիքական եւ զգացական ցաւ (Հմ. 44): Տակաւին՝ Ան կարող էր «ջերմութեամբ» աղօթել, որ Աստուծոյ կամքը կատարուի:

Աստուծոյ կամքը իմ կեանքիս մէջ դարձած է իմ վերջնական աղօթքը: Սա՛ կը նշանակէ, որ ե՛ս կրնամ ցանկալ բաներ, որոնք նոյնիսկ չեմ գիտեր՝ թէ կ'ուզեմ կամ եթէ անոր կարիքը ունիմ: Այն աշխատանքը, սկիզբէն չէի ուզեր, դարձաւ Քրիստոնէական հրատարակութեան իմ ճամբորդութեանս սկիզբը: Այսօր ետ նայելով, կը հաւատա՛մ, որ Աստուծոյ կամքը կատարուած է:

**Աղօթք** - Երկնաւոր Յայր, կը խնդրեմ՝ առաջնորդէ զիս՝ կատարելու Քու կամքդ: Ամէն:

**Ի՞նչ աղօթքի խնդրանք կայ՞ քու սիրտիդ մէջ: Ի՞նչ բանի համար կը կարծես, որ Աստուած քեզի կո՛չ կ'ընէ այսօր:**

Ճշմարտապես կը յայտարարեմ ձեզի. «Քանի իմ այս եղբայրներուս փոքրագոյններէն մէկուն ըրիք՝ ինծի՛ ըրիք»:  
[Մատթ. 25. 40]

## ԾՆՈՒՆԴԻ ՈԳԻՆ

**Մ**իջազգային հիւրերու մշակոյթը նշելու համար՝ մեր եկեղեցիին մէջ կազմակերպուած Սուրբ Ծննդեան ընթրիքի ժամանակ՝ ե՛ս ուրախ ծափահարեցի՝ տրպաքէի (դմբուկի տեսակ մը) եւ ուտի (կիթարի նման լարայի գործիք մը) հնչիւններուն համընթաց, երբ խումբը կը նուագէր աւանդական Միջին Արեւելեան Ծնունդի երգ մը, «Լէյլըդ Էլ-Միլէտ»։ Խումբին երգիչը բացատրեց, որ վերնագիրը կը նշանակէ «Ծննդեան Գիշեր»։ Երգին բառերը յիշեցուց մտիկ ընողներուն, որ Սուրբ Ծննդեան ոգին կը յայտնաբերուի՝ ուրիշներուն ծառայելու մէջ, ինչպէ՛ս օրինակի համար՝ ծարաւին ջո՛ւր առաջարկելով կամ լացողին՝ մխիթարութիւն։

Այս երգը, հաւանաբար, կը բխի առակէ մը, ուր Յիսուս կը գովէ՝ Իրեն հետեւողները՝ այն գործերուն համար, որոնք անոնք ըրած են՝ Իրեն համար. ուտելիք տալ՝ երբ Ինք անօթի էր, ջուր տալ՝ երբ ծարաւ էր եւ ընկերակցութիւն եւ հոգատարութիւն, երբ հիւանդ ու միւսակ էր (Մատթ. 25. 34-36)։ Յիսուսի գովասանքը ուղղակի ընդունելու փոխարէն, առակին մէջ նշուած մարդիկը կը զարմանան՝ մտածելով, որ իրականութեան մէջ այս բաները չեն ըրած Քրիստոսի համար։ Ան պատասխանեց ըսելով. «Քանի իմ այս եղբայրներուս փոքրագոյններէն մէկուն ըրիք՝ ինծի՛ ըրիք» (Հմ. 40)։

Տօնական եղանակի ընթացքին՝ Սուրբ Ծնունդի ոգիին մէջ մտնելու խրախուսանքը յաճախ կը մղէ՝ տօնական վերաբերմունք արտայայտելու համար։ «Լէյլըթ Էլ-Միլէտ»ը կը յիշեցնէ մեզի, որ մենք կրնանք կեանքի կոչել Սուրբ Ծննդեան իսկական ոգին՝ հոգալով ուրիշներուն։ Եւ զարմանալիօրէն, երբ մենք այդ բանը կ'ընենք, մենք ո՛չ միայն կը ծառայե՛նք ուրիշներուն, այլեւ՝ Յիսուսի։

**Աղօթք** - Սիրելի Յիսու՛ս, օգնէ ինծի՛ արտացոլացնելու Սուրբ Ծննդեան ոգին, որ Դո՛ւն ցոյց տուիր երկիր գալով, ո՛չ թէ ծառայութիւն ընդունելու, այլ ծառայութիւն ընելու։ Ամէն։

**Ինչպէ՞ս հասկցած ես Սուրբ Ծնունդի ոգին։ Ինչպէ՞ս կրնաս այս եղանակին մէջ ծառայել ուրիշներուն։**

Աստուած հաւատարիմ է, եւ պիտի չթոյլատրէ որ փորձուիք ձեր կարողութենէն աւելի, հապա փորձութեան հետ ելք մըն ալ պիտի տայ, որպէսզի կարենաք կրել: [Ա. Կորնթ. 10. 13]

## ՓՈՐՁՈՒԿԵ ԲՆՆՈՒԿ

**Սթէնլի (Stanley)** կը սիրէ ազատութիւնն ու ճկունութիւնը, որ կու տայ իր աշխատանքը՝ որպէս ինքնաշարժներու անձնական վարձու վարորդ: Այլ բաներու կողքին, ան կրնայ ուզած ատեն սկսիլ եւ դադրիլ աշխատանքէ եւ պարտաւոր չէ՛ տեւէ մէկուն հաշիւ տալ՝ իր ժամանակին ու շարժումներուն համար: Սակայն՝ իրողութեան մէջ՝ ամենէն դժուար բանն է այս: Սթէնլի անկեղծութեամբ ընդունեց եւ ըսաւ. «Այս գործին մէջ՝ այնքա՛ն դիւրին է ամուսնութենէն դո՛ւրս՝ ուրիշ յարաբերութիւն մը սկսիլ: Ես ամէն տեսակի ուղեւորներ տեղ կը հասցնեմ, բայց ո՛չ ոք, ներառեալ կինս, գիտէ՛ թէ ուր եմ այսօր»: Ան բացատրեց թէ փորձութեան դիմադրելը հեշտ չէ՛ եւ իր վարորդներէն շատերը՝ տեղի տուած են փորձութեան: Ան աւելցոց եւ ըսաւ. «Ինծի կեցնողը՝ խորհիլն է, թէ ի՞նչ կը մտածէ Աստուած եւ կինս ի՞նչ պիտի գգայ»:

Մեր Աստուածը, որ ստեղծած է մեզմէ իւրաքանչիւրը, գիտէ՛ մեր տկար կողմերը, ցանկութիւնները եւ թէ որքա՛ն դիւրաւ կը սայթաքինք: Բայց ինչպէ՞ս Ա. Կորնթացիս 10. 11-13-ը կը յիշեցնէ մեզի, որ մենք կրնանք օգնութիւն խնդրել Աստուծմէ: Պօղոս կ'ըսէ. «Աստուած հաւատարիմ է, եւ պիտի չթոյլատրէ որ փորձուիք ձեր կարողութենէն աւելի, հապա փորձութեան հետ ելք մըն ալ պիտի տայ, որպէսզի կարենաք կրել» (Հմ. 13): Այդ «ելք»ը՝ կրնայ ըլլալ առողջ վախ մը՝ փորձութեան հետեւանքներէն, խղճի խայթ, յիշել Աստուածաշունչը, ճիշդ ժամանակին շեղում, կամ ուրիշ բան մը: Երբ մենք Աստուծմէ ուժ խնդրե՛նք, Հոգին կը շրջէ մեր աչքերը՝ այն ամէն բաներէն, ինչ որ կը փորձէ մեզ եւ կ'օգնէ մեզի՝ նայելու ելքին, որ Ան տուած է մեզի:

**Աղօթք** - Յայր, Դո՛ւն գիտես իմ տկար կողմերս: Կը խնդրեմ՝ տո՛ւր ինծի ուժ, դիմադրելու փորձութեան եւ քալելու քեզի հետ՝ Ըու սուրբ եւ կեանք տուող ճամբաներուդ մէջ: Ամէն:  
**Ինչպի՛սի փորձութիւններ կը դիմագրաւես այսօր: Ի՞նչ ելք կրնայ տալ Աստուած քեզի, Իր սուրբ եւ շիտակ ճամբան պահելու համար:**

Ապաշխարեցէ՛ք, ու ձեզմէ իւրաքանչիւրը թող մկրտուի Յիսուս Զրիստոսի անունով՝ մեղքերու ներումիս համար: [Գործք 2. 38]

## ՆՈՐ ԿԵԱՆՔ՝ ՅԻՍՈՒՍՈՎ

**Մ**իասին հասակ առնելով՝ Կեղերոնական Ասիայի մէջ՝ Պահիր (Baheer) եւ Մէտէթ (Medet) լաւագոյն բարեկամներ էին: Բայց երբ Պահիր դարձաւ Յիսուսի, ամէն բան փոխուեցաւ: Մէտէթ տեղեկացնելէ ետք՝ կառավարական իշխանութիւններուն, Պահիր՝ տանջալից խոշտանգումներու ենթարկուեցաւ: Պահակը մոռնաց. «Այս բերանը այլեւս երբէ՛ք պիտի չի խօսի Յիսուսի անունը»: Թէեւ արիւնաթաթախ, Պահիր յաջողեցաւ ըսել, որ անոնք կրնան խանգարել զինք խօսելու Քրիստոսի մասին, բայց անոնք երբէ՛ք «չեն կրնար փոխել, ա՛յն ինչ որ Տէրը ըրած է սիրտիս մէջ»:

Այդ խօսքերը մնացին Մէթէտին հետ: Քանի մը ամիսներ ետք, հիւանդութիւն եւ կորուստ կրելով, Մէթէտ ճամբորդեց գտնելու Պահիրին, որ ազատ արձակուած էր բանտէն: Հրաժարելով իր հպարտութենէն՝ խնդրեց Պահիրէն, որ զինք ծանօթացնէ Յիսուսի:

Մէթէտ գործեց Սուրբ Հոգիին համոզմունքով, ինչպէս Պենտեկոստէի տօնին՝ Պետրոսի շուրջ հաւաքուածները «փշրեցին իրենց կարծր սիրտերը», երբ ակնատես եղան Աստուծոյ շնորհքին հեղեղումին եւ լսեցին Պետրոսի վկայութիւնը՝ Քրիստոսի մասին (Գործք 2. 37): Պետրոս կոչ ըրաւ մարդոց՝ ապաշխարելու եւ մկրտուելու Յիսուսի անունով եւ մօտ երեք հազար հոգիներ՝ ըրին: Ինչպէս անոնք ձգեցին իրենց հին ապրելակերպը, այնպէ՛ս ալ Մէթէտ ապաշխարեց եւ հետեւեցաւ Փրկիչին:

Յիսուսով նոր կեանքի պարգեւը, հասանելի է բոլոր անոնց, որոնք կը հաւատան Անոր: Ի՛նչ որ ալ ըրած ենք, կրնանք վայելել մեր մեղքերուն ներումը, երբ վստահինք Իրեն:

**Աղօթք** - Փրկող Յիսու՛ս, շնորհակալութիւն՝ խաչին վրայ մեռնելուդ եւ նոր կեանքով յարութիւն առնելուդ համար: Ես կը վստահիմ Զեզի: Ամէն:

**Ի՛նչ կը կարծէ՛ք՝ Պահիր զգաց, երբ Սէթտ խնդրեց իրմէ՛ զինք Յիսուսի ծանօթացնելու: Ինչպէ՛ս մեր յարաբերութիւնը Իր հետ, կ'օգնէ մեզի փորձութեան ժամանակ:**

Երբ ջուրերէն անցնիս, ես քեզի հետ պիտի ըլլամ: [Ես. 43. 2]

## ՔԱՉԱԼԵՐՈՒԱԾ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԷՆ

**Ե**րկար օր մըն էր՝ հիւանդանոցը: Թերեւս՝ պատասխաններ չկան այն հիւանդութեան մասին, որ կը տառապեցնէր երիտասարդ ու փայլուն տասն ինը տարեկան երիտասարդը: Տուն հասնելով, ընտանիքը յուսահատ զգաց: Ի զարմանք իրենց, սանդուխին վրայ դրուած էր գեղեցիկ՝ զարդարուած տուփ մը, որու առջեւը տպուած էր Եսայի 43. 2 համարը: Տուփին մէջ դրուած էր Աստուածաշունչի խրախուսիչ համարներ, որոնք իր ընկերները՝ ձեռագիր գրած էին: Յաջորդ ժամը անցաւ՝ քաջալերուած Սուրբ Գիրքէն եւ ընտանիքին ընկերներուն խոհուն ժեստէն:

Դժուար ժամանակներու կամ ընտանեկան խնդիրներու մէջէն անցնող մարդիկ, մի՛շտ կրնան գործածել սրտագին խթանում մը: Սուրբ Գիրքը մեծ մաս մը կա՛մ պարզապէս հատուած մը, ընկեր մը կամ ընտանիքի անդամ մը՝ կրնայ քաջալերել քեզ: Եսայի 43-ը լեցուն է՝ խրախուսանքի փոքր կտորներով, որոնք ստացուած անհատապէս կամ ամբողջութեամբ: Նկատի ա՛ն քանի մը ընտրելի մտքեր. Աստուած «ստեղծած է քեզ», «ձեւաւորած», «փրկագնած է քեզ» եւ «կոչած է քեզ անունով» (Հմ. 1): Աստուած «քեզի հետ պիտի ըլլայ» (Հմ. 2), Ան՝ «Խորայէլի Սուրբն է» եւ մեր «Փրկիչն» է (Հմ. 3):

Երբ դուն նկատի կ'առնես Աստուծոյ խոստումները, թող անոնք քաջալերեն քեզ: Եւ քանի որ Ան կ'ապահովէ՝ այն, ինչ որ քեզի պէտք է, դուն կրնաս քաջալերել ուրիշի մը: Համարներով լեցուն տուփը՝ շատ սուղ չարժեք, բայց ատոր ազդեցութիւնը անգին է: Նոյնիսկ հինգ տարի ետք, այդ համարներուն քարտերէն մի քանին՝ տակաւին գգուալի են ընտանիքին համար:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ քեզի, որ Սուրբ Գրութիւնները՝ լեցուն են խոստումներով, որ կարենամ քաջալերուիլ, նոյնիսկ մէկ համարով՝ ճիշդ ժամանակին: Ամէն:  
**Ի՞նչ այլ խոստումներ կրնաս գտնել Եսայի 43-ին մէջ: Որո՞ւ հետ կրնաս բաժնեկցիլ խոստումի քարտ մը, հատուած մը կամ Ե-նամակ մը:**

Արծաթ ու ոսկի չունիմ, հապա ինչ որ ունիմ՝ զայն կու տամ քեզի: [Գործք 3. 6]

## ԿԱՏԱՐԵԱԼ ՊԱՐԳԵԻԸ

**Մ**ի՛նչ կարճ ժամկէտով միսիոնարական ուղեւորութեան էի՝ Փերու (Peru), երիտասարդ մը՝ ինձմէ խնդրեց գումար մը: Անվտանգութեան նկատառումներով, իմ խումբիս ցուցմունք տրուած էր՝ գումար չտալ. ուստի՛ ինչպէս կարելի էր օգնել անոր: Յետոյ յիշեցի Պետրոս եւ Յովհաննէս առաքեալներու տուած պատասխանը՝ կաղ մարդուն՝ Գործք 3-ին մէջ: Ես բացատրեցի անոր, որ չեմ կրնար դրամ տալ, բայց կրնամ Աստուծոյ սիրոյ բարի լուրը յայտնել իրեն: Երբ ան ըսաւ, որ որբ է. ես ըսի, որ Աստուած կ'ուզէ ըլլալ իր Հայրը: Այդ խօսքս՝ անոր աչքերուն արցունքներ բերաւ: Ծանօթացուցի զինք՝ մեզ Հիւրընկալող եկեղեցիի անդամի մը հետ, որ իր հետ կապ ստեղծէ:

Երբեմն մեր խօսքերը կրնան անբաւարար թուիլ, բայց Սուրբ Հոգին կրնայ զօրացնել մեզ, երբ մենք բաժնեկցինք Յիսուսը՝ ուրիշներու հետ:

Երբ Պետրոս եւ Յովհաննէս հանդիպեցան այդ մարդուն՝ տաճարի գաւիթին մէջ, անոնք զիտցան՝ թէ Քրիստոսը բաժնեկցիլը, մեծագոյն պարգեւն է: «Պետրոս ըսաւ. 'Արծաթ ու ոսկի չունիմ, հապա ինչ որ ունիմ՝ զայն կու տամ քեզի. Նագովրեցի Յիսուս Քրիստոսի անունով՝ ոտքի ելիր ու քալէ'» (Հմ. 6): Այդ օր՝ մարդը փրկութիւն եւ բժշկութիւն ստացաւ: Աստուած կը շարունակէ օգտագործել մեզ՝ կորսուածներուն իր մօտ քաշելու համար:

Երբ կը փնտռենք կատարեալ նուէրներ՝ այս Սուրբ Ծնունդի առիթով տալու համար, եկէ՛ք յիշենք, որ ճշմարիտ պարգեւը՝ Յիսուսի ճանչնալն է եւ յաւիտենականութեան պարգեւը, որ Ան կ'առաջարկէ: Շարունակենք ձգտիլ, որ Աստուած գործածէ մեզ՝ մարդիկ Փրկիչին առաջնորդելու համար:

**Աղօթք** - Երկնաւոր Դայր, շնորհակալ եմ Յիսուսի պարգեւին համար: Ամէն:

**Որո՞ւ համար կրնաք աղօթել այս Սուրբ Ծննդեան եղանակին: Որո՞ւ հետ կրնաք կիսուիլ Քրիստոսը:**



Դուք ինձի պիտի գոչեք, պիտի երթաք եւ ինձի աղօթեք, ու ձեզի մտիկ պիտի ընեմ: [Եր. 29. 12]

## ԱՍՏՈՒԱԾ ՊԻՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԷ

**Ե**րբ հովիւ Թիմոթի (Timothy) իր հոգեւորական տարազը հազած եւ քարոզչական օձիքը դրած կը ճամբորդէ, յաճախ օղակայանը՝ անձանօթ մարդիկ կ'ըսեն իրեն. «Կը խնդրեմ՝ աղօթէ ինձի համար»: Վերջերս թուիչքի ժամանակ՝ կին մը ծուռնկի եկաւ անոր աթոռին մօտ, երբ նկատեց զինք եւ աղաչելով ըսաւ. «Դուն հովիւ ես: Կ'աղօթե՞ս ինձի համար»: Եւ հովիւ Թիմոթի աղօթեց:

Երեմիայի մէկ հատուածը՝ լոյս կը սփռէ թէ ինչո՞ւ կը հասկնանք, որ Աստուած կը լսէ եւ կը պատասխանէ մեր աղօթքին. Աստուած կը սիրէ մեզ: Ան վատահեցուց իր սիրելի, բայց մեղաւոր ու արքայութեամբ ժողովուրդին. «Զեզի համար մտածած ծրագիրներս գիտեմ, կը պատգամէ Տէրը, անոնք բարօրութեան ծրագիրներ են, ո՛չ թէ չարիքի, ձեզի ապագայ մը ու յոյս մը տալու համար» (29. 11): Աստուած կ'ակնկալէր ժամանակ մը, թէ ե՞րբ անոնք կը վերադառնան Իրեն: Ան ըսաւ. «Դուք ինձի պիտի գոչեք, պիտի երթաք եւ ինձի աղօթէք, ու ձեզի մտիկ պիտի ընեմ: Զիս պիտի փնտռէք եւ պիտի գտնէք, որովհետեւ ձեր ամբողջ սիրտով զիս պիտի որոնէք» (Հմ. 12-13):

Մարգարէն այս եւ աւելին իմացաւ աղօթքի մասին, երբ բանտն էր: Աստուած վատահեցուց իրեն. «Ինձի՛ գոչէ, ու քեզի պատասխանեմ. քեզի մեծ եւ խորհրդաւոր բաներ յայտնեմ՝ որ չես գիտեր» (33. 3):

Յիսուս ալ կը յորդորէ մեզ՝ աղօթելու. «Զեր Հայրը գիտէ ձեր պէտքերը՝ դեռ դուք չխնդրած իրմէ» (Մատթ. 6. 8): Ուստի՛, «խնդրեցէ՛ք», «փնտռեցէ՛ք» եւ «բախեցէ՛ք» աղօթքով (7. 7): Իւրաքանչիւր խնդրանք՝ մեզ աւելի կը մօտեցնէ՛ պատասխանողին: Մենք պէտք չէ՛ օտար ըլլանք Աստուծոյ՝ աղօթքի մէջ: Ան կը ճանչնայ մեզ եւ կ'ուզէ լսել մեզմէ: Մենք կրնանք ճի՛շդ հիմա Իրեն տանիլ՝ մեր բոլոր մտահոգութիւնները:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, հոգատարութիւնդ ու իմ մասիս Զու ունեցած գիտելիքներդ, կը ոգեշնչե՞ն իմ աղօթքներս: Շնորհակալ եմ պատասխանելուդ համար: Ամեն:

**Որբա՞ն յաճախ կ'աղօթես: Ի՞նչ պիտի ըսե՞ս Աստուծոյ՝ այսօր:**

Խանձարուրով փաթեց գայն ու մտուրին մէջ պառկեցուց, որովհետեւ իջեւանին մէջ տեղ չկար: [Ղուկ. 2. 7]

## ՏԵՂ ՅԻՍՈՒՍԻ ՅԱՄԱՐ

**Ի**նծի համար հաճելի էր, շաբաթավերջը անցընել՝ Նոր Օրլիանցի (*New Orleans*) մէջ, շքերթի ժամանակ՝ Ֆրանսական թաղամասին մէջ, այցելելով Երկրորդ Համաշխարհային Պատերազմի Ազգային Թանգարանը եւ փորձել՝ խորոված ոստրեններ: Բայց երբ քունի անցայ՝ ընկերոջս ազատ եղած սենեակը, կարօտցայ կնոջս ու զաւակներուս: Կը վայելեմ քարոզելու առիթը ունենալու հնարաւորութիւնները, բայց ամենէն աւելի ինծի հաճելի պիտի ըլլայ՝ տունը ըլլալ:

Յիսուսի կեանքէն մէկ երեւոյթ մը, որ երբեմն կ'անտեսուի, այն է՝ թէ Անոր ամենակարեւոր իրադարձութիւններէն քանի հատը՝ տեղի ունեցած է ճամբուն վրայ: Աստուծոյ Որդին՝ մեր աշխարհը մտաւ Բեթլեհէմի մէջ, անհաշուելի հեռաւորութեան վրայ՝ Իր երկնային տունէն եւ հեռու Իր ընտանիքի հայրենի քաղաքէն՝ Նազարէթէն: Բեթլեհէմը՝ մարդահամարի համար՝ լեցուն էր մեծ թիւով ընտանիքներով, ուստի Ղուկաս կ'ըսէ, որ նոյնիսկ աւելորդ սենեակ մը կամ գաղալիմա (*katalyma*) «հիւրասենեակ» մը չկար (Ղուկ. 2. 7):

Այն, ինչ որ կը բացակայէր Յիսուսի ծննդեան ժամանակ, յայտնուեցաւ Իր մահուան ատեն: Երբ Յիսուս Իր աշակերտները Երուսաղէմ կը տանէր, Պետրոսին եւ Յովհաննէսին ըսաւ, որ պատրաստեն իրենց համար Պասէքի ընթրիքը: Անոնք պէտք է հետեւին սափոր կրող մարդուն՝ տուն գացած ատեն եւ տիրոջմէ խնդրեն գաթալիման՝ հիւրասենեակը, ուր Քրիստոս եւ Իր աշակերտները կրնային ուտել Վերջին Ընթրիքը (22. 10-12): Հո՛ն, փոխ առնուած տարածքին մէջ, Յիսուս հաստատեց ա՛յն, ինչ որ կը կոչուի Հաղորդութիւն, որ նախանշումն էր Իր մօտալուտ խաչելութեան (Հմ. 17-20): Մենք կը սիրենք տունը, բայց եթէ կը ճամբորդենք Յիսուսի Հոգիով, նոյնիսկ հիւրասենեակը կրնայ ըլլալ Անոր հետ հաղորդակցելու վայրը:

**Աղօթք** - Յիսու՛ս, տունէն հեռու եղող ճամբորդին ընկերը, կը խնդրեմ՝ օգնէ ինծի յիշելու, որ Դո՛ւս միշտ ինծի հետ ես: Ամէն: **Ո՛ր եղած են ամենէն իմաստալի պահերը եւ ի՞նչ բան զանոնք յիշարժան ըրած են:**

Ան ապրող Աստուած է ... Ինք կը փրկէ եւ կ'ազատէ:  
[Դան. 6. 26-27]

## ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՅՊԱՆՈՂ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Նայելով երկրորդական դպրոցիս տարեգիրքին՝ թոռնիկներս Տիագան լուսանկարներուն մէջ տեսնուած մագի յարգարումներուն, հագուստներուն եւ «Տին» ինքնաշարժներուն: Ես տեսայ՝ ուրիշ բան մը. նախ՝ Տին ընկերներու ժպիտները, որոնցմէ ոմանք տակաւին ընկերներ են: Սակայն անոնցմէ աւելի՝ տեսայ Աստուծոյ պահող զօրութիւնը: Անոր ազնիւ ներկայութիւնը՝ շրջապատեց զի՛ս դպրոցի մը մէջ, ուր կը պայքարէի յարմարուելու համար: Անոր պահապան բարութիւնը կը հսկէր իմ վրաս. Ան բարութիւն կը շնորհէ բոլոր անոնց, որոնք կը փնտռեն զինք:

Դանիէլ գիտէր՝ Աստուծոյ պահպանող ներկայութեան մասին: Բաբելոնի մէջ՝ իր աքսորի ժամանակ՝ ան աղօթեց իր վերնատան մէջ որու «պատուհանները դէպի Երուսաղէմ կը բացուէին» (Դան. 6. 10), հակառակ թագաւորին հրամանին՝ այդ բանը չընելու (Հմ. 7-9): Դանիէլ կը յիշէ՝ Աստուծոյ, որու ներկայութիւնը կը պահպանէր զինք, լսելով եւ պատասխանելով իր աղօթքներուն: Ուստի, Աստուած կը լսէ, կը պատասխանէ եւ կը պահէ զինք:

Հակառակ նոր օրէնքին, Դանիէլ տակաւին կը փնտռէր Աստուծոյ ներկայութիւնը՝ անկախ անկէ, թէ ի՞նչ կրնայ պատահիլ իրեն: Եւ այսպէս, Ան աղօթեց ճիշդ այնպէս, ինչպէ՛ս նախապէս շատ անգամներ ըրած էր (Հմ. 10): Մինչ առիւծներու գուբին մէջ էր, Տէրոջ հրեշտակը պաշտպանեց Դանիէլին եւ իր հաւատարիմ Աստուածը ազատեց զինք (Հմ. 22):

Ներկայի փորձութիւններու ժամանակ, մեր անցեալին նայիլը, կրնայ օգնել մեզի յիշելու Աստուծոյ հաւատարմութիւնը: Ինչպէս Դարեհ թագաւոր ըսաւ Աստուծոյ մասին. «Ինք կը փրկէ ու կ'ազատէ» (Հմ. 27): Աստուած լաւ էր այդ ժամանակ, եւ հիմա ալ լաւ է: Անոր ներկայութիւնը պիտի պահէ քեզ:

**Աղօթք** - Սիրելի Յայր, ե՛տ նայելով՝ կը տեսնեմ Զու բարի աջակցող ներկայութիւնդ: Շնորհակալ եմ, որ հիմա կը պահես զիս: Ամէն:

**Անցեալ ո՞ր փորձառութիւնը փորձեց քեզ: Ինչպէ՛ս Աստուած բարիացական աջակցեցաւ քեզի:**

Արդարեւ սերը մահուան պէս զօրեղ է: [Երգերու Երգը 8. 6]

## ՄԱՅՈՒԱՆ ՊԷՍ ԶՕՐԵՂ ՍԵՐ

**Ե**թէ քալես Հոլանտայի Ռօմօնտ (Roemond) քաղաքի՝ Բողոքականներու եւ Կաթողիկէներու գերզմանատուներու միջեւ գտնուող աղիւսէ սեւ պատի երկայնքին, պիտի յայտնաբերես հետաքրքիր տեսարան մը: Պատին երկու կողմը, միահիւսուած՝ երկու նոյնանման բարձրադիր տապանաքարեր կան, մէկը Բողոքական ամուսինին եւ միւսը՝ Կաթողիկէ տիկնոջ համար: 19-րդ դարու մշակութային կանոնները կը պահանջէին, որ անոնք թաղուէին առանձին՝ գերեզմանատուներու մէջ: Անոնք, սակայն՝ չընդունեցին այդ կարգադրութիւնը: Անոնց անսովոր տապանաքարերը բաւական բարձր են, որպէսզի հասնին ցանկապատէն աւելի վեր, որպէսզի վերեւը ըլլայ ընդամենը՝ մօտ մէկ կամ երկու ոտնաչափ օդ, որ զանոնք իրարմէ կը բաժնէ: Իւրաքանչիւրին վերը քանդակուած ձեռքը կը հասնի միւսին եւ իւրաքանչիւրը կը սեղմէ՝ միւսին ձեռքը: Զոյգը մերժած է բաժնուիլ, նոյնիսկ մահուան պարագային:

Երգերու Երգը՝ կը բացատրէ՝ սիրոյ զօրութիւնը: Սողոմոն կ'ըսէ. «Սէրը մահուան պէս զօրեղ է, ու նախանձախնդրութիւնը՝ դժոխքի պէս անգուլթ» (8. 6): Իսկական սէրը հզօր է ու կատաղի: «Անոր կայծերը սաստիկ բոցավառ կրակի կայծեր են» (Հմ. 6): Իսկական սէրը՝ երբէք չի՝ յանձնուիր, չի՝ լուեր եւ չի՝ կրնար կործանուիլ: Սողոմոն կը գրէ. «Յորդառատ ջուրերը չեն կրնար սէրը մարել, ու գետերը զայն չեն ընկղմեր» (Հմ. 7):

«Աստուած սէր է» (Ա. Յովհ. 4. 16): Մեր ամենաուժեղ սէրը միայն մեր հանդէպ՝ Անոր կատաղի սիրոյ մէկ փոքր արտացոլումն է: Ան որեւէ իսկական սիրոյ գերագոյն աղբիւրն է, որեւէ սէր՝ որ ամուր է:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, ինծի պէտք է Զու սերդ, որ աւելի զօրեղ է՝ քան մահը, զօրեղ է՝ քան չարը, զօրեղ է՝ քան իմ անյաջողութիւններս: Շնորհակալ եմ՝ Զու զօրեղ սիրոյդ համար:  
Ամէն:

**Ինչպե՞ս զգացած ես Աստուծոյ զօրեղ սերը: Ինչպե՞ս Ան բացայայտած է՝ Իր զօրեղ սերը քեզի հանդէպ:**

Երբ կը մտաբերեմ քու մէջդ եղած անկեղծ հաւատքը, որ նախ բնակեցաւ մեծ մօրդ՝ Լաւողիայի ու մօրդ՝ Եւնիկէի մէջ, եւ համոզուած եմ թէ քու մէջդ ալ կայ: [Բ. Տիմ. 1. 5]

## ՄԵԾՄՕՐ ՄԸ ՍԷՐԸ

**Մ**ենք նստած էինք ճաշի սեղանին շուրջ, երբ իմ ինը տարեկան թոռնիկս՝ ժպտելով ըսաւ. «Ես մեծ մամային նման եմ, կը սիրեմ կարդալ»: Անոր խօսքերը ուրախութիւն բերին սիրտիս մէջ: Ես յիշեցի նախորդ տարին, երբ ան հիւանդ էր, տունը մնաց եւ չկրցաւ դպրոց յաճախել: Երկար քուն մը քաշելէ ետք, մենք քով քովի նստեցանք ու կարդացինք: Ես ուրախ էի, որ փոխանցեցի սիրառատ գիրքերու ժառանգութիւնը, որ ստացած էի մօրմէս:

Բայց այդ ամենակարեւոր ժառանգութիւնը չէ՛, որ ես կ'ուզեմ փոխանցել թոռնիկիս: Ես կ'աղօթեմ, ձգտելով փոխանցել զաւակներուս՝ այն հաւատքի ժառանգութիւնը, որ ստացած եմ ծնողներէս, օգնելու համար թոռնիկներուս՝ իրենց հաւատքի ճամբորդութեան մէջ:

Տիմոթէոս ունէր աստուածապաշտ մօր մը եւ մեծ մօր մը ժառանգութիւնը եւ հոգեւոր դաստիարակ մը՝ Պօղոս առաքեալը: Առաքեալը գրեց. «Կը մտաբերեմ քու մէջդ եղած անկեղծ հաւատքը, որ նախ բնակեցաւ մեծ մօրդ՝ Լաւողիայի ու մօրդ՝ Եւնիկէի մէջ, եւ համոզուած եմ թէ քու մէջդ ալ կայ» (Բ. Տիմ. 1. 5):

Մենք կրնանք մտածել, որ մեր կեանքը բաւականաչափ գրական եղած չէ՛ ուրիշներու լաւ օրինակ ըլլալու համար: Գուցէ՛ մեզի փոխանցուած ժառանգութիւնը լաւ չէ՛: Բայց երբէ՛ք ուշ չէ՛ մեր զաւակներուն, թոռնիկներուն կամ ոեւէ երեխայի կեանքին մէջ հաւատքի ժառանգութիւն կառուցելու համար: Աստուծոյ օգնութեամբ մենք հաւատքի սերմեր կը ցանենք: Ան կ'ածեցնէ հաւատքը (Ա. Կորնթ. 3. 6-9):

**Աղօթք** - Երկնաւոր Յայր, շնորհակալ եմ՝ զիս քու մօտդ բերիր: Կը խնդրեմ՝ օգնէ ինձի աստուածային օրինակ ըլլալ ուրիշներու համար: Ամէն:

**Ի՞նչ հոգեւոր ժառանգութիւն ձգած եմ քեզի՝ քու ծնողները կամ մեծ ծնողները: Ինչպե՞ս կը ցանկաս հաւատքի ժառանգութիւն կառուցանել՝ քեզի համար սիրելիի մը կեանքին մէջ:**



Ուստի յորդորեցէ՛ք զիրար եւ շինեցէ՛ք զիրար, ինչպէս արդէս կ'ընէք: [Ա. Թես. 5. 11]

## ՔՐԻՍՏՈՍՈՎ ՅՈՐԴՈՐՈՒԻԼ

**Ի**նտիանայի (Indiana) դպրոցի ուսուցիչ մը՝ աշակերտներուն առաջարկեց քաջալերական եւ ոգեշնչող նօթեր գրել իրենց ընկերներուն: Օրեր ետք, երբ երկրի մէկ այլ մասի մը մէջ դպրոցական ողբերգութիւն մը տեղի ունեցաւ, անոնց նօթերը ոգեւորեցին իրենց համադպրոցականներուն, երբ անոնք յաղթահարեցին առաջացած վախն ու ցաւը, որ կրնայ որեւէ բան պատահիլ իրենց հետ:

Պօղոսի մտքին մէջ քաջալերանք եւ փոխադարձ մտահոգութիւն կար, երբ ան գրեց Թեսաղոնիկէի հաւատացեալներուն: Անոնք կորսնցուցած էին ընկերներ եւ Պօղոս պատուիրեց անոնց յոյս դնել՝ Տէր Յիսուսի խոստացուած վերադարձին վրայ՝ իրենց սիրելիներուն դաձեալ կեանքի կոչելու համար (Ա. Թես. 4. 14): Թէեւ անոնք չէին գիտեր, թէ երբ այդ տեղի կ'ունենայ, ան յիշեցուց անոնց, որ՝ որպէս հաւատացեալներ՝ պէտք չէ՛ վախնան Աստուծոյ դատաստանէն, երբ Ան վերադառնայ (5. 9): Փոխարէնը, անոնք կրնան վստահութեամբ սպասել, Անոր հետ իրենց ապագայ կեանքին եւ միեւնոյն ժամանակ «յորդորեն զիրար եւ շինեն զիրար» (հմ. 11):

Երբ մենք կը զգանք ցաւալի կորուստներ կամ անիմաստ ողբերգութիւններ, դիւրին է յաղթահարուիլ վախով եւ տխրութիւնով: Պօղոսի խօսքերը այսօր օգտակար են մեզի համար, ճիշդ այնպէս՝ ինչպէս որ էին՝ գրուած ատեն: Եկէ՛ք սպասենք յոյսով, որ Քրիստոս կը վերականգնէ ամէն ինչ: Եւ միեւնոյն ժամանակ, կրնանք յորդորել զիրար՝ գրաւոր նօթերով, բերանացի ըստւած խօսքերով, ծառայութեան գործողութիւններով կամ պարզ գրկախարնութեամբ:

**Աղօթք** - Յարութիւն առած Յիսո՛ւս, հակառակ խառնուած աշխարհի մէջ իմ ունեցած ցաւերուս, կը խնդրեմ՝ օգնէ ինծի՝ յոյսով եւ հաւատքով սպասելու Քեզի եւ քաջալերելու զիս շրջապատողները, մինչեւ Դուն դարձեալ գաս: Ամէն:  
**Ինչպէ՛ս քաջալերուած ես մէկու մը կողմէ: Ինչպէ՛ս կրնաս այսօր քաջալերել մէկու մը:**

Ան պիտի ծնանի որդի մը, եւ անոր անունը Յիսուս պիտի կոչես, քանի որ ան պիտի փրկէ իր ժողովուրդը իրենց սեղեքերէն: [Մատթ. 1. 21]

## ՅԻՍՈՒՄ՝ ՄԵՐ ԱԶԱՏԱՐԱՐԸ

Ա՛յն, ինչ որ սկսաւ որպէս սովորական պարանոզիի ճեմ՝ Բագիստանեան (Pakistani) հովիտի մը վրայ, վերածուեցաւ սարսափելի չարչարանքի: Ուղեւորութիւնը սկսելէն կարճ ժամանակ մը ետք, երկու հենարանի պարանները կոտորուեցան, որու հետեւանքով ութը ուղեւորներ, անոնց մէջ՝ դպրոցական աշակերտներ, կախուած մնացին օդին մէջ՝ հարիւրաւոր ոտնաչափ բարձրութեան վրայ: Ստեղծուած իրավիճակը՝ Բագիստանցի զինուորականներու՝ տասներկու ժամ դժուարին ազատարար գործողութեան պատճառ դարձաւ, որոնք օգտագործեցին՝ zipline-ներ, ուղղաթիռներ եւ աւելին՝ ազատելու համար վտանգուած ուղեւորները:

Այդ լաւ պատրաստուած ազատարարները՝ արժանի են ամէն գովասանքի, բայց անոնց աշխատանքը ոչի՛նչ է՝ Յիսուսի յաւիտենական աշխատանքին համեմատելով, որու առաքելութիւնն էր՝ ազատել ու փրկել մեզ՝ մեղքէն ու մահէն: Յիսուսի ծնունդէն առաջ, հրեշտակը պատուիրեց Յովսէփին, որ Մարիամը իր քովը առնէ, քանի որ անոր մէջ յղացուածը «Սուրբ Հոգիէն է» (Մատթ. 1. 18, 20): Յովսէփի նաեւ ըսուեցաւ, որ որդին անուանէ Յիսուս, քանի որ Ան «պիտի փրկէ իր ժողովուրդը իրենց մեղքերէն» (ՏՄ. 21): Թէեւ այս անունը տարածուած էր առաջին դարուն, միայն այս մանուկը որակաւորուած էր որպէս Փրկիչ (Ղուկ. 2. 30-32): Քրիստոս եկաւ ճիշդ ժամանակին՝ կնքելու եւ ապահովելու յաւիտենական փրկութիւնը՝ բոլոր անոնց, որոնք կ'ապաշխարեն եւ կը հաւատան Իրեն:

Մենք բոլորս թակարդուած ենք՝ մեղքի եւ մահուան պարանոզիին կառքին մէջ կախուած Աստուծոյ յաւիտանապէս բաժնուած ըլլալու հովիտին վրայ: Սակայն՝ իր սիրով եւ շնորհքով՝ Յիսուս եկաւ մեզ փրկելու եւ ապահով տուն բերելու մեր Երկնաւոր Հօր մօտ: Ուստի՝ գովաբանե՛նք զԻնք:

**Աղօթք** - Սիրելի Յիսուս, կը ինդրեմ՝ օգնէ՛ ինձի ուրախանալու այն իրողութեան մէջ, որ թէեւ ատեն մը կորսուած էի, բայց այժմ կրնամ գտնուիլ՝ Քու շնորհքիդ շնորհիւ: Ամէն:  
**ի՞նչ կը նշանակէ քեզի համար՝ Յիսուսի ապահոված փրկութիւնը:**



Տերը՝ քու Աստուածդ՝ է քու եղբայրներուդ մէջէն՝ ինծի նման մարգարտ մը պիտի հանէ քեզի: Անո՛ր մտիկ ըրէք: [Բ. Օր. 18. 15]

## ՈՐՈ՞Ւ ԿԸ ԼՍԵ՛ՆՔ

«Պէտք է արտակարգ դրութիւն յայտարարեմ: Օղաչուս՝ մեռած է»։ Տակ Ուայթ (Doug White) ջղագրգիռ՝ այդ խօսքերը ըսաւ՝ հսկիչ աշատարակին, որ կը հսկէր իր թռիչքին: Թռիչքէն քանի մը վայրկեաններ ետք, յանկարծամահ եղաւ Տակի ընտանիքին կողմէ վարձուած անձնական ինքնաթիռի՝ օղաչուն: Տակ՝ մտաւ օղաչուններու խցիկը՝ ընդամենը եռամսեայ ուսուցման հետեւած ըլլալով՝ աւելի քիչ բարդ ինքնաթիռներով թռչելով: Ապա՝ ան ուշադիր լսեց տեղական օդակայանի վերահսկիչներուն, որոնք անոր հետ խօսեցան՝ ինքնաթիռը ապահով վայրէջք կատարելու մասին: Աւելի ուշ՝ Տակ ըսաւ. «Անոնք փրկեցին ընտանիքս, գրէթէ անկասկած կրակոտ մահէն»:

Մենք ունինք մէկը, որ մինա՛կը կրնայ օգնել մեզի՝ նաւարկելու համար կեանքի մարտահրաւէրներուն մէջ: Մովսէս՝ խօսելով Իսրայէլացիներուն հետ, ըսաւ. «Տէրը՝ քու Աստուածդ է քու եղբայրներուդ մէջէն՝ ինծի նման մարգարտ մը պիտի հանէ քեզի: Անո՛ր մտիկ ըրէք» (Բ. Օր. 18. 15): Այս խոստումը կը մատնանշէր մարգարէներու յաջորդականութիւնը, որ Աստուած տուած էր իր ժողովուրդին, բայց այդ նաեւ կը խօսէր Մեսիային մասին: Թէ՛ Պետրոս եւ թէ՛ Ստեփանոս՝ յետագային յայտարարեցին, որ այս գերագոյն մարգարէն՝ Յիսուս էր (Գործք 3. 19-22, 7. 37, 51-56): Ան մինակ եկաւ՝ մեզի ըսելու Աստուծոյ սիրառատ եւ իմաստուն հրահանգները (Բ. Օր. 18. 18):

Քրիստոսի կեանքի ընթացքին՝ Հայր Աստուած ըսաւ. «Ա՛յս իմ սիրելի Որդիս է, անո՛ր մտիկ ըրէք» (Մար. 9. 6): Այս կեանքին մէջ իմաստուն ապրելու եւ արկածներէն ու այրուելէ հետո մնալու համար, եկէ՛ք լսենք Յիսուսի, երբ Ան կը խօսի Աստուածշունչի եւ Սուրբ Հոգիին միջոցով: Անոր լսելը՝ մեծ տարբերութիւն կ'ընէ:

**Աղօթք** - Սիրելի Յիսուս, կը խնդրե՛մ՝ օգնէ ինծի որ լսե՛մ եւ հնազանդի՛մ Քու ձայնիդ: Ամէն:

**Երբեմն դժուար է այս աշխարհին մէջ լսել Քրիստոսի ձայնը, ո՛ւստի կարելի է աւելի լաւ հետեւիլ՝ Անոր իմաստուն եւ սիրառատ խօսքերուն այսօր:**



Եւ Աստուած տեսաւ թէ բարի էին: [Ծն. 1. 10]

## ԱՍՏՈՒԾՈՅ ՏԵՍԱԿԵՏԸ ՄԵՐ ՄԱՍԻՆ

1968 թուականն էր, երբ Ամերիկան խրուած էր Վիէթնամի (Vietnam) հետ պատերազմի մէջ, քաղաքները կը պոռթկային՝ ցեղային բռնութիւններով, եւ երկու հասարակական գործիչներ՝ սպաննուեցան: Տարի մը առաջ, կրակը խլած էր՝ երեք տիեզերազնացներու կեանքը՝ արձակման հարթակին վրայ եւ Լուսին երթալու գաղափարը կարծես երազ էր: Հակառակ այդ բոլորին, Աբոլլո 8-ն (Apollo 8) յաջողեցաւ արձակուիլ՝ Սուրբ Ծնունդէն քանի մը օր առաջ:

Այդ եղաւ՝ Լուսինին շուրջ պտտուող առաջին մարդատար առաքելութիւնը: Թոնիչքի անձնակազմը՝ Պօրմըն (Borman), Էնտրըզ (Anders) եւ Լօվելլ (Lovell), երեք հաւատացեալ մարդեր, սփռեցին ուղերձ մը՝ Սուրբ Ծնունդի նախօրեակին եւ ըսին. «Սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց» (Ծն. 1. 1): Այդ օրերուն, աշխարհի մէջ ամենաշատ դիտուող հեռուստացուցային իրադարձութիւնն էր եւ միլիոնաւոր մարդիկ կիսեցին՝ Աստուծոյ աչքով երկրի տեսարանը, այժմ դարձած խորհրդանշական լուսանկար մը: Ֆրէնք Պօրմըն (Frank Borman) աւարտեց ընթերցումը. «Եւ Աստուած տեսաւ թէ բարի է» (Հմ. 10):

Երբեմն դժուար է նայիլ մենք մեզի ու բոլոր դժուարութիւններուն, որոնց մէջ խրուած ենք ու տեսնել լաւ բաներ: Բայց մենք կրնանք վերադառնալ արարչագործութեան պատմութեան եւ տեսնել Աստուծոյ տեսակէտը՝ մեր մասին. «Աստուած իր պատկերով ստեղծեց մարդը» (Հմ. 27): Եկէ՛ք զայն գոյգենք՝ մէկ այլ աստուածային հայեացքի մը հետ. «Որովհետեւ Աստուած ա՛յնպէս սիրեց աշխարհը» (Յովհ. 3. 16): Այսօր յիշենք, որ Աստուած ստեղծած է քեզ, կը տեսնէ լաւը, հակառակ մեղքին եւ կը սիրէ քեզ՝ Իր ստեղծածը:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, այս օրերուն կը պայքարիմ: Օգնէ՛ ինձի տեսնելու ա՛յն, ինչ որ Դո՛ւն կը տեսնես իմ մէջ: Դուն Աստուծոյ աչքին տեսարանն ես: Ամէն:

**Դժուարութիւններու եւ մեղքերու մէջ թաղուած կրնաս ըլլալ այսօր, սակայն՝ յիշէ՛ որ դուն ստեղծուած ես՝ Աստուծոյ պատկերով:**

Խոտը կը չորնայ, ծաղիկը կը թառամի, բայց մեր Աստուծոյն խօսքը յաւիտեան կանգուն պիտի մնայ: [Ես. 40. 8]

## ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԲՆԱ՛Ի ԶԻ ՓՈԽՈՒԻՐ

**Ե**րբ փոքր էր, որդիս Զավիէր (*Xavier*) ու ես, կարդացինք առասպելական պատմութիւն մը՝ տղայի մը մասին, որ ապստամբեցաւ իր ուսուցիչին դէմ՝ երբ շինծու անունով մը մատնանշեց գրիչ մը: Ան համոզեց իր հինգերորդ դասարանի՝ դասընկերներուն, գործածելու ստեղծած նոր անունը՝ գրիչներու համար: Տղային ստեղծած փոխարինող բառին լուրը՝ տարածուեցաւ ամբողջ քաղաքին մէջ: Ի վերջոյ, ամբողջ երկրին մէջ մարդիկ փոխեցին գրիչներու նկատմամբ իրենց վերաբերմունքը, պարզապէս այն պատճառով, որ միւսները ընդունեցին՝ տղայի մը յօրինած իրականութիւնը, որպէս յամբնդհանուր ճշմարտութիւն:

Պատմութեան ընթացքին՝ արատաւոր մարդիկ ընդունած են ճշմարտութեան անընդհատ փոփոխուող տարբերակները կամ անձնական նախընտրելի իրողութիւնները՝ իրենց ցանկութիւններուն համապատասխան: Սակայն՝ Աստուածաշունչը կը մատնաչէ մէկ ճշմարտութիւն, մէկ ճշմարիտ Աստուած եւ մէկ փրկութեան ճանապարհ՝ Մեսիան, որու միջոցով «Տէրջը փառքը կը յայտնուի» (Ես. 40. 5): Եսայի մարգարէն հաստատեց, որ մարդիկ, ինչպէս բոլոր ստեղծուած բաները, ժամանակաւոր են, սխալական եւ անվստահելի (Հմ. 6-7): Ան ըսաւ. «Խոտը կը չորնայ, ծաղիկը կը թառամի, բայց մեր Աստուծոյն խօսքը յաւիտեան կանգուն պիտի մնայ» (Հմ. 8):

Գալիք Մեսիային մասին՝ Եսայի մարգարէութիւնը կու տայ յուսալի հիմք, ապահով ապաստան եւ ստոյգ յոյս: Մենք կրնանք վստահիլ Աստուծոյ խօսքին, քանի որ Յիսուս Ինքն է խօսքը (Յովհ. 1. 1): Յիսուսի՝ ճշմարտութիւնն է, որ երբէ՛ք չի փոխուիր:

**Աղօթք** - Սիրելի Յիսուս, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինծի ապրելու այնպէ՛ս, որ ցոյց տայ՛, որ ես կը հաւատամ՝ թէ Աստուածաշունչը այն ճշմարտութիւնն է, որ երբէ՛ք չի փոխուիր: Ամէն:

**Կը փորձուիք մերծել Աստուածաշունչին ըսածը, պարզապէս՝ անոր համար, որ ուրիշներ մէկ այլ տեսակետ մը ընդունած են՝ որպէս ճշմարտութիւն: Սակայն իմանալը՝ որ Յիսուս է խօսքը եւ Աստուծոյ տուած բոլոր խուստումներուն կատարումը՝ կը մխիթարէ մեզ:**

Յոն ա՛լ գիշեր պիտի չըլլայ. անոնք պէտք չունին ճրագի, ո՛չ ալ արեւի լոյսի, քանի որ Տէր Աստուած պիտի լուսաւորէ զանոնք: [Յայտ. 22. 5]

## ՊԱՏՈՒՅԱՆ ԴԷՊԻ ՅՐԱՇԱԼԻՆ

**Լ**ուսանկարիչ՝ Ռան Մըրէյ (*Ron Murray*) կը սիրէ ցուրտ եղանակ: Բացատրելով կ'ըսէ. «Յուրա՛ կը նշանակէ մաքուր երկինք: Եւ այդ կ'ըլլայ՝ պատուհան բանալով դէպի հիանալիք»:

Ռան՝ կը հայթայթէ Ալասգական (*Alaskan*) լուսնկարչական շրջագայութիւններ՝ նուիրուած երկրի ամենահիասքանչ լոյսի ցուցադրութիւնը՝ բեւեռափայլ հիւսիսայգը (*aurora borealis*) (հիւսիսային լոյսերը): Մըրէյ կը խօսի այդ փորձառութեան մասին, որպէս «շատ հոգեւոր»: Եթէ երբեւէ տեսած ես երկինքի այս երանգաւոր պարը, ապա կը հասկնաս թէ ինչո՞ւ:

Բայց լոյսերը միայն հիւսիսային երեւոյթ չեն: Բեւեռային աւստրալիսը (*aurora australis*), որ գրեթէ նոյնանման է հիւսիսայինին, տեղի կ'ունենայ միաժամանակ հարաւը՝ նոյն տեսակի լոյսերով:

Աշակերտ Յովհաննէսի՝ Սուրբ Ծննդեան պատմութեան մէջ, ան զանց կ'առնէ ախոռն ու հովիւները եւ անմիջապէս կ'երթայ Անոր մօտ, որ «մարդոց լոյսն է» (Յովհ. 1. 4): Երբ Յովհաննէս կը գրէ աւելի ուշ՝ երկնաւոր քաղաքին մասին, ան կը նկարագրէ զայն որպէս, լոյսի աղբիւրը: Այս «քաղաքը պէտք չունի արեւի, ո՛չ ալ լուսինի, որ լուսաւորեն զայն. որովհետեւ Աստուծոյ փառքը կը լուսաւորէ զայն, եւ Գառնուկն է անոր ճրագը» (Յայտ. 21. 23): Այս լոյսի աղբիւրը՝ Յիսուս է, նոյն աղբիւրը, որ կը յիշատակուի Յովհաննու 1-ին մէջ: Եւ անոնց համար, որոնք կ'ապրին այս ապագայ բնակարանին մէջ, «հոն ա՛լ գիշեր պիտի չըլլայ. անոնք պէտք չունին ճրագի, ո՛չ ալ արեւի լոյսի, քանի որ Տէր Աստուած պիտի լուսաւոր զանոնք» (22. 5):

Երբ մեր կեանքը կ'արտացոլացնէ աշխարհի լոյսը՝ ան, որ ստեղծած է բեւերափայլը եւ աւստրալիսը, մենք պատուհան կը բանանք՝ դէպի իսկապէ՛ս հրաշալիքն:

**Աղօթք** - Սիրելի տիեզերքի Արարիչ, թող գիշերային երկինքի գեղեցկութիւնը յիշեցնէ ինձի, որ Դուն ես աշխարհի իսկական լոյսը: Ամէն:

**Մեզի շլացնող բնութեան հրաշքները՝ մեր ուշադրութիւնը ուրիշ բանի կը դարձնեն՝ Աստուծոյ փոխարէն: Ուստի՝ զգուշ ըլլալ պէտք է:**



Մենք կը սիրենք զայն, որովհետեւ նախ ան սիրեց մեզ:  
[Ա. Յովհ. 4. 19]

## ՇՈՇԱՓԵԼԻ ՄԷՐ

**Ն**ստած ընկերոջս՝ Մարկրէթի (Margaret) կողքին, որ պառկած էր հիւանդանոցի մահիճին մէջ, տեսա՛յ միւս հիւանդներուն, բժշկական կազմին եւ այցելուներուն եռուզեռն ու աշխատանքը: Երիտասարդ կին մը, որ նստած էր մօտիկը՝ իր հիւանդ մօր հետ, հարցո՛ւց Մարկրէթին. «Ո՞վ են՝ այն մարդիկը, որոնք յաճախ կ'այցելեն քեզ»: Ան պատասխանեց. «Անոնք իմ եկեղեցիի ընտանիքին անդամներն են»: Երիտասարդ կինը նկատեց, որ ինք երբէ՛ք նման բան տեսած չէր. ան զգաց՝ որ բազմաթիւ այցելուներ «նման՝ շօշափելի սէր կը թափէին»: Մարկրէթը պատասխանեց՝ ժպտալով. «Այդ ամէնը կու գայ Աստուծոյ Հանդէպ մեր սէրէն, որ ունինք՝ իր Որդիին՝ Յիսուսի Բրիստոսի միջոցով»:

Իր պատասխանին մէջ՝ Մարկրէթ կրկնեց աշակերտ Յովհաննէսին խօսքերը, որ իր վերջին տարիներուն մէջ գրեց՝ սիրով լեցուն երեք նամակներ: Իր առաջին նամակին մէջ ան ըսաւ. «Աստուած սէր է. ան որ կը բնակի սիրոյ մէջ՝ կը բնակի Աստուծոյ մէջ, եւ Աստուած՝ անոր մէջ» (Ա. Յովհ. 4. 16): Այսինքն, անոնք, որոնք կ'ընդունին «որ Յիսուս Աստուծոյ Որդին է» (Հմ. 15), Աստուած կ'ապրի անոնց մէջ «Իր Հոգիին» միջոցով (Հմ. 13): Ինչպէ՞ս կրնանք սիրով հոգ տանիլ ուրիշներուն: «Մենք կը սիրենք զայն, որովհետեւ նախ ան սիրեց մեզ» (Հմ. 19):

Աստուծոյ սիրոյ պարզեւին պատճառով՝ Մարկրէթին այցելելը՝ ինծի կամ եկեղեցիի միւս անդամներուն համար՝ դժուար չի թուիր: Ես ստացա՛յ՝ քան ինչ որ տուի, ո՛չ միայն Մարկրէթէն, այլեւ անոր ազնիւ վկայութիւնը տեսնելով՝ իր Փրկիչին՝ Յիսուսի մասին: Ինչպէ՞ս կրնայ Աստուած սիրել ուրիշներուն այսօր՝ քո՛ւ միջոցով:

**Աղօթք** - Սիրող Աստուած, կը սիրե՛մ, որովհետեւ նախ Դո՛ւն զիս սիրեցիր: Կը խնդրե՛մ՝ շարունակե՛ աւելցնել սէրս, որպէսզի Զու Յոգիդ փայլի իմ մէջս: Ամէն:

**Ե՞րբ գարմացած ես, երբ մէկը նկատած է Աստուծոյ սէրը քու մէջդ: Ինչպէ՞ս Անոր սէրը կը մղէ քեզ ծառայելու ուրիշներուն:**

Ուշադիր ըլլանք գիրար հրահրելու սիրոյ եւ բարի գործերու:  
[Եբ. 10. 24]

## ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՓԱՌԱՍԻՐՈՒԹԻՒՆ

**Գ**րիգոր Նազիանզոս (Gregory Nazianzus) եւ Կեսարացի Պասիլ (Basil of Caesarea), 4-րդ դարու եկեղեցական նշանաւոր առաջնորդներ էին ու նաեւ մտերիմ ընկերներ: Անոնք առաջին անգամ հանդիպեցան՝ որպէս փիլիսոփայութեան ուսանողներ, իսկ աւելի ուշ՝ Գրիգոր ըսաւ, որ անոնք դարձան «երկու մարմին՝ մէկ հոգիով»:

Նմանօրինակ ասպարէզներու ուղիներ ունենալով, Գրիգորի եւ Պասիլի միջեւ կրնար մրցակցութիւն առաջանալ: Բայց Գրիգոր բացատրեց, որ անոնք խոսսափեցան այս փորձութենէն՝ դարձնելով՝ հաւատքով, յոյսով եւ բարի գործերով կեանքը՝ իրենց «միակ փառասիրութիւնը», ու ապա «մղելով զիրար»՝ միւսին աւելի յաջողակ դարձնելով այս նպատակին, քան թէ անհատապէս: Որպէս արդիւնք, երկուքն ալ աճեցան հաւատքի մէջ եւ բարձրացան ղեկավարութեան բարձր մակարդակներու՝ առանց մրցակցութեան:

Եբրայեցիներու գիրքը գրուած է, որպէսզի օգնէ՝ մեզի ամուր մնալ հաւատքի մէջ (Եբ. 2. 1), քաջալերելով մեզ՝ կեդրոնանալու «յոյսին դաւանութեան վրայ» եւ «գիրար հրահրելու սիրոյ ու բարի գործերու» (10. 23-24): Մինչ այս պատուիրանը կը տրուի եկեղեցիի ժողովուրդի կապակցութեամբ (Հմ. 25), կիրառելով իրենց բարեկամութեան, Գրիգոր եւ Պասիլ ցոյց տուին՝ թէ ինչպէ՞ս ընկերներ կրնան խրախուսել զիրար աճելու եւ խոսսափելու «դառնութեան արմատներէ», օրինակի համար՝ մրցակցութենէ, որ կրնայ աճիլ իրենց միջեւ (12. 15):

Իսկ եթէ մենք հաւատքը, յոյսը եւ բարի գործերը դարձնենք սեփական բարեկամութեան փառասիրութիւնը, ապա խրախուսուած մեր ընկերները աւելի յաջողակ կ'ըլլան այս նպատակին մէջ, քան մենք անհատապէս:

**Աղօթք** - Տէր Յիսուս, կը խնդրեմ՝ իմ բարեկամութիւնս ըլլայ հարուստ՝ լի հաւատքով, յոյսով եւ բարի գործերով: Ամէն:

**Ի՞նչ յատկանիշներ կը տեսնես Գրիգորի եւ Պասիլի բարեկամութեան մէջ: Ինչպէ՞ս կրնաս խրախուսել քու ընկերներդ, որ աճին հաւատքով, յոյսով եւ բարի գործերու մէջ:**

Երբ տեսան աստղը, չափազանց ուրախացան: [Մատթ. 2. 10]

## ՔՐԻՍՏՈՍԻ ԼՈՅՍԸ

**Ա**մուսինս եւ ես՝ միշտ հաճոյք կը ստանանք մեր եկեղեցիի Սուրբ Ծննդեան գիշերուայ պաշտամունքին ներկայ ըլլալով: Մեր ամուսնութեան առաջին տարիներուն՝ մենք յատուկ աւանդութիւն ունէինք, պաշտամունքէն ետք՝ տաք հագուստներ հագնելու, որպէսզի բարձրանանք մօտակայ բլուրը, ուր բարձր ձողերէն ցցուած էին 350 փայլուն լոյսեր՝ աստղի տեսքով: Հո՛ն, յաճախ ձիւնի մէջ, մենք կը փսփսայինք մեր մտքերը՝ Յիսուսի հրաշք ծննդեան մասին, մինչ կը նայէինք քաղաքին: Մինչ այդ, քաղաքին մէջ շատ մարդեր, կը նայէին ներքեւի հովիտէն եկող պայծառ՝ լարային աստղին:

Այդ աստղը՝ կը յիշեցնէր մեր Փրկիչին ծննդեան մասին: Աստուածաշունչը կը պատմէ «արեւելքէն» եկող մոգերուն մասին, որոնք եկան Երուսաղէմ՝ փնտռելով «ա՛ն, որ ծնաւ իբր Հրեաներու թագաւորը» (Մատթ. 2. 1-2): Անոնք կը դիտէին երկինքը եւ տեսած էին աստղը «արեւելքի մէջ» (Հմ. 2): Անոնց ճամբորդութիւնը՝ Երուսաղէմէն առաջ՝ տարաւ Բեթլեհէմ, որովհետեւ «աստղը՝ որ տեսէր էին արեւելքի մէջ, կ'երթար անոնց առջեւէն՝ մինչեւ որ եկաւ ու կեցաւ մանուկին եղած տեղին վրայ» (Հմ. 9): Հո՛ն անոնք «իյնալով երկրպագեցին» (Հմ. 11):

Քրիստոս՝ լոյսի աղբիւրն է մեր կեանքի մէջ եւ՝ փոխաբերական իմաստով (որպէսզի ա՛ն՝ որ մեզ կ'առաջնորդէ), եւ տարացիօրէն որպէս՝ ա՛ն որ ստեղծած է արեւը, լուսինը եւ աստղերը երկինքի մէջ (Կող. 1. 15-16): Ինչպէ՛ս մոգերը, որոնք «չափազանց ուրախացան», երբ տեսան Անոր աստղը (Մատթ. 2. 10), մեր ամենամեծ հաճոյքը զիւնք ճանչնալ է՝ որպէս Փրկիչ, Ա՛ն, որ իջաւ երկինքէն՝ բնակելու մեր մէջ: «Դիտեցինք անոր փառքը» (Յովհ. 1. 14):

**Աղօթք** - Տէր Յիսո՛ւս, շնորհակալ եմ, որ Դո՛ւն իմ կեանքիս լոյսն ես: Ամէն:

**Ինչպէ՞ս Յիսուս լոյս բերած է՝ քու կեանքիդ մէջ: Որո՞ւ հետ կրնաս զայն բաժնեկցիլ այսօր**

Երեխայ մը պիտի գտնէք՝ խանձարուրով փաթթուած ու մսուրին մէջ պառկած: [Ղուկ. 2. 12]

## ԲԱՐԻ ԵԿԱՐ՝ ՅԻՍՈՒՍ ՄԱՆՈՒԿ

**Ա**յնպէս զգացի, որպէ՛ս թէ մենք անդո՛ւլ կը սպասէինք այն լուրին, որ մեր յղի դրացին՝ ունեցած է իր առաջին երեխան: Երբ վերջապէս՝ անոնց տան առջեւ ցուցանակ մը տեսնուեցաւ, որ կը նշէր. «Աղջի՛կ է», մենք տօնեցինք անոնց դուստրին ծնունդը եւ հաղորդագրութիւն ուղարկեցինք՝ ընկերներուն, որոնք գո՛ւցէ տեսած չէին ցուցանակը:

Մեծ ոգեւորութիւն մըն է՝ սպասել մանուկի մը գալուստը: Մինչեւ Յիսուսի ծնունդը, Հրեայ ժողովուրդը՝ ո՛չ միայն քանի մը ամիս սպասեցին, այլ սերունդներ շարունակ՝ կը փափաքէին՝ Մեսիայի՝ Իսրայէլի սպասած փրկարարին ծնունդը: Ես կը պատկերացնեմ, որ տարիներու ընթացքին՝ հաւատարիմ հրեաները կը մտածէին, թէ իրենց կեանքի ընթացքն մէջ, արդեօ՞ք պիտի տեսնեն այս խուստուամին իրականացումը:

Գիշեր մը՝ երկար սպասուած լուրը ցուցադրուեցաւ երկիրքի մէջ, երբ հրեշտակ մը յայտնուեցաւ Բեթլեհէմի հովիւներուն՝ յայտնելով, որ Մեսիան վերջապէս ծնած է: Ան ըսաւ. «Եւ սա՛՛ ձեզի նշան մը պիտի ըլլայ. երեխայ մը պիտի գտնէք՝ խանձարուրով փաթթուած ու մսուրին մէջ պառկած» (Ղուկ. 2. 12): Երբ հովիւները տեսան Յիսուսը, փառաբանեցին Աստուած եւ «խօսքը տարածեցին» (Հմ. 17) Յիսուս Մանուկին մասին:

Աստուած կ'ուզէ, որ հովիւները իմանան, որ երկար սպասուած մանուկը՝ եկած է, որպէսզի կարենան ուրիշներուն պատմել անոր մասին: Մենք տակաւին կը նշենք Յիսուսի ծնունդը, քանի որ Անոր կեանքը կը փրկէ աշխարհի կոտորուածութենէն՝ բոլոր անոնք, որոնք կը հաւատան: Մենք այլեւս պէտք չունինք սպասելու, որպէսզի ունենանք խաղաղութիւն եւ զգանք ուրախութիւն, որ բարի լուր մըն է ու կ'արժէ յայտարարել:

**Աղօթք** - Տէր Յիսու՛ս, կ'ուզենք որ բոլորը իմանան՝ Զու ծննդեանդ բարի լուրը: Ամէն:  
**Ի՞նչ կը խորհիս, ինչպէ՞ս զգացիս հովիւները՝ երբ լսեցին Յիսուսի ծննդեան լուրը:** Ինչպէ՞ս կրնաս բաժնեկցիլ Յիսուսի ծննդեան բարի լուրը:

Երբ ըսիր. ‘Երեսս փնտռեցեք’: Իմ սիրտս քեզի ըսաւ. ‘Քու երեսդ պիտի փնտռեմ, ո՛վ Տէր’»: [Մաղմ. 27. 8]

## ԱՁԱ՛Տ ԺԱՄԱՆԱԿ ԱՍՏՈՒԾՈՅ ԶԵՏ

2022 թուականը շատ իւրայատուկ էր՝ տիկնոջս եւ ինծի համար: Այն տարին էր, երբ ծնաւ մեր թոռնուհին՝ Սօֆիա Էշլին (Sophia Ashley)՝ մեր ութը թոռնիկներէն՝ միակ թոռնուհին: Սօֆիայի մեծմայրիկն ու մեծհայրիկը՝ չե՛ն դադրիր ժպտալէ: Երբ մեր որդին՝ զանգէ տեսաերիզով, մեր խանդավառութիւնը կ’աւելնայ: Տիկինս ու ես՝ կրնանք տարբեր սենեակներու մէջ ըլլալ, բայց անոր ուրախ գոռգոռալը՝ ցոյց կու տայ, որ ան կը տեսնէ Սօֆիային: Հեռուէն տեսնել անոնց, որոնց կը սիրենք, այժմ միայն հեռախօսի զանգով կամ կոճակի սեղմումով մը՝ հեռու են:

Այն անձը, որու հետ կը խօսինք հեռախօսով, տեսնելու կարելիութիւնը՝ համեմատաբար նոր է, բայց Աստուծոյ հետ երեսի-ժամանակ (face-time) անցընելը, այսինքն՝ աղօթել՝ Իր ներկայութեան ըլլալու գիտակցութեամբ, նոր չէ՛: Դաւիթի աղօթքը՝ Մաղմոս 27-ին մէջ, որ հնչած է՝ հակառակութեան մէջ՝ օգնութեան խնդրանքով, կը գերազանցէր մարդկային ամենամօտ դաշնակիցներու հետ հաղորդակցելու հնարաւորութիւնները (Հմ. 10-12), կը ներառէ հետեւեալ խօսքերը. «Երբ ըսիր. ‘Երեսս փնտռեցէք’: Իմ սիրտս քեզի ըսաւ. ‘Քու երեսդ պիտի փնտռեմ, ո՛վ Տէր’» (Հմ. 8):

Դժուար ժամանակները՝ արդարացիօրէն կը ստիպեն մեզի՝ «փնտռելու Անոր երեսը» (Հմ. 8): Բայց այդ միակ ժամանակը չէ՛, որ մենք կրնանք կամ պէտք է դէմ առ դէմ շփուիլ Իր հետ, որու «երեսին առջեւ ուրախութեան յագեցում կայ, Անոր աջ կողմը ընդմիշտ հաճոյքներ կան» (16. 11): Եթէ ուշադիր մտիկ ընենք, որեւէ ժամանակ՝ կրնանք լսել, որ Ան կ’ըսէ. «Եկո՛ւր եւ խօսիր ինծի հետ»:

**Աղօթք** - Երկնաւոր Յայր, կը գովաբանեմ Զեզ՝ Զեզի հետ հանդիպելու արտօնութեան համար: Կը խնդրե՛մ՝ օգնէ ինծի միշտ պատարաստ ըլլալու՝ Զեզի հետ աղօթքով ժամանակ անցընելու: Ամէն:

**Օրուան ընթացքին՝ որ պահուն՝ ամենէն աւելի կը զգաս թէ սիրտդ ներդաշնակ է Աստուծոյ հետ: Ինչպէ՞ս Իր հետ կանոնաւոր հաղորդակցութիւնը՝ կը պատրաստէ քեզ՝ «փորձանքի օրուան» համար:**



Մի՛ գարնէր ... Անոնց առջեւ հաց ու ջուր դիր, որպէսզի ուտեն  
եւ խմեն: [7. Թագ. 6. 22]

## ՇՆՈՐՀՔԻ ԱՐԱՐՔՆԵՐ

«Շնորհքի Մասին» (About Grace) վէպին մէջ, Տէյվիտ Ուինքլըրը (David Winkler), կը ցանկայ գտնել իր օտարացած աղջիկը, իսկ Հէրմըն Շիլըր՝ (Herman Sheeler) միակ անձն է, որ կրնայ օգնել իրեն: Բայց կա՛յ հարց մը: Տէյվիտի դուստրը՝ ծնած է՝ Հէրմընի կնոջ հետ Տէյվիտի սիրաբանութեան հետեւանքով եւ Հէրմըն նախազգուշացուցած էր, որ Տէյվիտ երբէ՛ք կապ չհաստատէ իրենց հետ:

Կ'անցնին տասնամեակներ, մինչեւ որ Տէյվիտ կը գրէ Հէրմընին ներողութիւն խնդրելով իր արարքին համար: «Ես իմ կեանքիս մէջ պարապութիւն մը ունիմ, որովհետեւ շատ քիչ բան գիտեմ աղջկանս մասին», կ'աւելցնէ ան՝ խնդրելով տեղեկութիւններ ստանալ անոր մասին: Ան կը սպասէ, տեսնելու եթէ Հէրմըն պիտի օգնէ իրեն:

Ինչպէ՞ս պէտք է վերաբերիլ անոնց հետ, որոնք մեզի դէմ սխալներ գորած են: Իսրայէլի թագաւորը՝ այս հարցը դիմազրաւեց, երբ իր թշնամիները՝ հրաշքով յանձնուեցան իր ձեռքը (7. Թագ. 6. 8-20): Ան կը հարցնէ Եղիսէ մարգարէին. «Զարնե՛մ, զանոնք զարնե՛մ»: Ո՛չ, կ'ըսէ Եղիսէ: «Անոնց առջեւ հաց ու ջուր դիր, որպէսզի ուտեն եւ խմեն, եւ իրենց Տիրոջ երթան» (Հմ. 21-22): Այս շնորհքի արարքին միջոցով, Իսրայէլ խաղաղութիւն կը գտնէ թշնամիներուն հետ: (Հմ. 23):

Հէրմըն՝ կը պատասխանէ Տէյվիտի նամակին, կը հրաւիրէ գինք իր տունը ճաշի: Ճաշէն առաջ՝ ան կ'աղօթէ. «Տէր Յիսուս, շնորհակալ եմ, որ կը հսկէիր ինձի եւ Տէյվիտին՝ այսքան տարիներ»: Ան կ'օգնէ Տէյվիտին, որ գտնէ իր աղջիկը, իսկ Տէյվիտ՝ յետագային՝ կը փրկէ անոր կեանքը: Աստուծոյ ձեռքերուն մէջ՝ մեր շնորհքի գործողութիւնները՝ անոնց հանդէպ, որոնք մեզի դէմ անարդարութիւն ըրած են, յաճախ օրհնութիւն կը բերեն մեզի:

**Աղօթք** - Սիրելի Յիսուս, կը խնդրե՛մ, տո՛ւր ինձի իմաստութիւն եւ զօրութիւն այսօր՝ շնորհք մատուցելու անոնց, որոնք ինձի դէմ անարդարութիւն գործած են: Ամէն:

**Որո՞ւ շնորհքի արարքները ոգեշնչցած են քեզ՝ անցեալին: Ի՞նչ շնորհք կրնաս առաջարկել մէկու մը այսօր:**

Հաւատքով Մովսէս, երբ ծնաւ, երեք ամիս պահուեցաւ իր ծնողներուն կողմէ ... ու չվախցան թագաւորին հրամանէն: [Եբ. 11. 23]

## ՔԱԼԷ՛ ՅԱԿՏՔՈՎ

Ճան (John) տխուր էր, երբ կորսնցուց իր գործը: Ան գիտէ՛ր՝ թէ դժուար պիտի ըլլայ դարձեալ սկսիլ աշխատանքի՝ նոր տեղ մը՝ իր գործի ասպարէզի աւարտին մօտ, քան թէ սկիզբը: Ան սկսաւ աղօթել ճիշդ գործ մը ունենալու համար: Յետոյ՝ Ճան թարմացուց իր տուեալներու ցանկը, կարգաց հարցազրոյցներու խորհուրդները եւ հեռախօսային շատ զրոյցներ ունեցաւ: Իր դիմումը ընելէ շաբաթներ ետք, ան ընդունեց նոր պաշտօն մը՝ լաւ ժամանակացոյցով եւ հեշտ երթեւեկութեամբ: Անոր հաւատարիմ հնազանդութիւնը եւ Աստուծոյ նախատեսութիւնը՝ հանդիպեցան կատարեալ խաչմերուկի մը:

Աւելի թատերական դէպք մը տեղի ունեցաւ Յոգաբէդի (Ելք 6. 20) եւ անոր ընտանիքին հետ՝ Եգիպտոսի մէջ՝ Իսրայէլի ստրկութեան ժամանակ: Երբ Փարաօն որոշեց, որ բոլոր նորածին եբրայեցի որդիները պէտք է նետուին Նեղոս գետին մէջ (1. 22), Յոգաբէդ սարսափեցաւ: Ան չէր կրնար փոխել օրէնքը, բայց կային որոշ քայլեր, որոնք ան կրնար ձեռնարկել Աստուծոյ հնազանդելու եւ իր որդին փրկելու համար: Հաւատքով ան պահեց զայն՝ Եգիպտացիներէն: Շինեց՝ փոքրիկ պրտուէ (papyrus) տապանակ մը՝ կուպրով ու ձիւթով ձեփեց եւ «մանուկը մէջը դրաւ, ու գետին եզերքը եղող շամբին մէջ ձգեց» (2. 3): Աստուած ներխուժեց՝ հրաշքով պահպանելու անոր կեանքը (հմ. 5-10) եւ յետագային օգտագործեց անոր՝ բոլոր Իսրայէլը իր ստրկութենէն ազատելու համար (3. 10):

Ճան եւ Յոգաբէդ տարբեր քայլեր արին, բայց երկու պատմութիւններն ալ՝ ցոյց կուտան հաւատքով լեցուն գործողութիւններու արդիւնքը: Հաւատքը մեզ կը զօրացնէ շարունակելու վստահիլ Աստուծոյ բարութեան անկախ արդիւնքներէն:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը խնդրե՛մ՝ օգնէ ինծի հաւատարմութեամբ առնելու իւրաքանչիւր քայլ, այն ճամբուն վրայ, որ Դուս ունիս ինծի համար: Ամէն:

**Երբեմն՝ չե՛նք գիտեր թէ ի՞նչ ընելու ենք վախի եւ անհանգստութեան հետեւանքով: Ինչպե՞ս կրնանք հաւատարմութեամբ կատարել Աստուծոյ պատիւ բերող յաջորդ քայլը:**

Անոնք ըսին. «Եկէ՛ք մեզի քաղաք մը եւ աշտարակ մը կառուցանենք... ու մեզի անուն վաստկինք: [Ծն. 11. 4]

## ԿԱՌՈՒՑԵԼ՝ Ա՛ՅՆ՝ ԻՆՉ ՈՐ ԿԸ ՏԵՒԷ

**Ե**րբ ես երիտասարդ տղայ մըն էի՝ Օհայոյի (Ohio) մէջ, մենք կը բնակէինք քանի մը շինարարական ծրագիրներու դիրքերու մօտ: Անոնցմէ ներշնչուած՝ ընկերներս ու ես՝ հաւաքեցինք շինարարական նիւթերու մնացորդները ամբողջ մը կառուցանելու համար: Գործիքներ փոխ առնելով մեր ծնողներէն՝ օրերով կը փորձէինք մեր ունեցած նիւթերը ծառայեցնել մեր նպատակները իրականացնելու համար: Հաճելի էր, բա՛յց մեր փորձերը մեզ չըջապատող լաւ կառուցուած շէնքերու մէկ վատ արտացոլացումն էր: Ուստի մեր կառուցածը՝ շատ երկար չտեւեց:

Ծննդոց 11-ին մէջ մենք կը հանդիպինք շինարարական մեծ ծրագրի մը: Մարդիկ ըսին. «Եկէ՛ք մեզի քաղաք մը ու աշտարակ մը կառուցանենք, որուն գագաթը մինչեւ երկինք կը հասնի» (Հմ. 4): Այս ջանքերուն մեծ խնդիրը այն էր, որ մարդիկ այդ ըրին «անուն վաստկելու համար» (Հմ. 4):

Սա՛ մարդոց համար կրկնուող խնդիր եղած է. մենք յուշարձաններ կը կառուցանենք մեզ ու մեր ձեռքերումներուն համար: Յետոյ աստուածաշնչական այս պատմութիւնը կը հակադրուի Աստուծոյ տաճարը կառուցանելու՝ Սողոմոնի զրդպատճառին. «Ահա՛ ես կը մտածեմ՝ Տէրոջ՝ իմ Աստուծոյս անունին տուն մը կառուցանել» (Գ. Թագ. 5. 5):

Սողոմոն՝ հասկցաւ, որ իր կառուցանածը՝ պէտք է մատնանշէ Աստուծոյ եւ ո՛չ թէ իրեն: Սա՛ այնքա՛ն կարեւոր է, որ ան նոյնիսկ Սաղմոս մը գրեց անոր մասին: Սաղմոս 127-ը կը սկսի այսպէ՛ս. «Եթէ Տէրը չկառուցանէ տունը, ընդունայն կ'աշխատին զայն կառուցանողները» (Հմ. 1): Ինչպէս իմ մանկութեան ամբողջը, ա՛յն՝ ինչ որ կը կառուցանէինք, չի տեւեց, բայց Աստուծոյ անունը եւ ա՛յն՝ ինչ որ մենք կ'ընենք իրեն համար, յարատեւ նշանակութիւն ունի:

**Աղօթք** - Հա՛յր, կը խնդրե՛մ՝ ներէ ինձի այն ժամանակներուն համար, երբ կեդրոնացած եմ ինքզինքիս վրայ եւ ո՛չ թէ այն, ինչ որ Դուն կ'ընես աշխարհի մէջ: Ամէն:

**Ի՞նչ կը կառուցանես քու կեանքովդ: Ինչպե՛ս քու կեանքդ պատիւ կը բերէ Աստուծոյ:**

Ո՛վ Տէր, մինչեւ ե՞րբ. զիս ընդմի՞շտ պիտի մոռնաս: [Սաղմ. 13. 1]

## ԻՆՉՈ՞Ւ Ե՛Ս՝ Ո՛Վ ԱՍՏՈՒԱԾ

**Ճ**իմ (Jim) աւելի քան մէկ տարի կը պայքարի շարժուն ջղաբջիջային հիւանդութեան դէմ Անոր մկաններուն ջիղերը կը քայքայուին, իսկ մկանները կը տկարանան: Ան կորսնցուցած է իր լաւ շարժելու հմտութիւնը եւ իր մարմինի աղամները կառավարելու ունակութիւնը: Ան այլեւս չի կրնար կոճկել իր վերնաշապիկը կամ կապել իր կօշիկին կապերը, եւ գոյգ մը ձողիկներ օգատագործելը՝ անհնարաւոր դարձած է: Ճիմ՝ կը պայքարի իր իրավիճակին հետ եւ կը հարցնէ. «Ինչո՞ւ՝ Աստուած թոյլ կու տայ, որ այս պատահի: Ինչո՞ւ ես»:

Ան լաւ ընկերակցութեան մէջ է շատ ուրիշ հաւատացեալներու հետ, որոնք իրենց հարցերը յանձնած են Աստուծոյ: Սաղմոս 13-ին մէջ՝ Դաւիթ կ'աղերսէ. «Ո՛վ Տէր, մինչեւ ե՞րբ, զիս ընդմի՞շտ պիտի մոռնաս: Մինչեւ ե՞րբ քու երեսդ ինձմէ պիտի ծածկես: Մինչեւ ե՞րբ մտքիս մէջ հոգեր պիտի ունենամ, եւ ամէն օր տրամութիւն՝ սիրտիս մէջ» (Հմ. 1-2):

Մենք նոյնպէս կրնանք մեր շփոթութիւնն ու հարցերը տանիլ Աստուծոյ: Ան կը հասկնայ, երբ մենք աղաղակենք Իրեն. «Մինչեւ ե՞րբ» եւ «Ինչո՞ւ»: Անոր գերագոյն պատասխանը տրուած է Յիսուսով եւ Անոր տարած յաղթանակով՝ մեղքի ու մահուան վրայ:

Երբ մենք կը նայինք խաչին եւ դատարկ գերեզմանին, վստահութիւն ձեռք կը բերենք՝ ապաւինելու Աստուծոյ «կարեկցութեան» (Հմ. 5) եւ ուրախանալու Անոր փրկութիւնով: Նոյնիսկ՝ ամենամութ գիշերներուն մէջ, մենք կրնանք «երգել Տէրոջ, որոհտեւ մեզի երախտիք ըրաւ» (Հմ. 6): Քրիստոսի հանդէպ մեր հաւատքի միջոցով, Ան ներած է մեր մեղքերը, որդեգրած է մեզ՝ որպէս Իր զաւակները եւ կ'իրագործէ Իր յաւիտենական բարի նպատակը մեր կեանքերուն մէջ:

**Աղօթք** - Սիրող Յայր, շնորհակալ եմ, որ կը հոգաս ինձի: Կը խնդրեմ՝ օգնէ ինձի որ վստահիմ Զեզի, որովհետեւ Դուս ամէն ինչ գեղեցիկ կ'ընես՝ իմ կեանքիս մէջ: Ամէն:

**Մեր բոլոր ցաւերն ու հարցերը տանինք Աստուծոյ, որովհետեւ՝ Ան ցոյց կու տայ Իր բարութիւնը մեզի, նոյնիսկ մեր ամենամութ գիշերներուն մէջ:**

Նաեւ ի՛մ ձեռքս հիմնադրեց երկիրը, եւ ի՛մ աջ ձեռքս տարածեց երկինքը: [Ես. 48. 13]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԶԵՌՔԸ

1939-ին՝ Բրիտանիոյ Համար պատերազմի բռնկումին հետ կապուած, Ճորճ Դ. (George IV) թագաւորը Սուրբ Ծննդեան օրուայ իր ձայնասփիւռային հաղորդումի ժամանակ՝ ուզեց խրախուսել Միացեալ Թագաւորութեան եւ Բրիտանական Հասարակապետութեան բոլոր քաղաքացիները, իրենց վստահութիւնը դնելու՝ Աստուծոյ վրայ: Մէջբերելով բանաստեղծութիւն մը, որ իր մայրը թանկարժէք կը նկատէր, ըսաւ ան. «Դուրս եկէ՛ք խաւարին մէջ եւ ձեր ձեռքը դրեք Աստուծոյ ձեռքին մէջ: Այդ՝ ձեզի համար աւելի լաւ կ'ըլլայ, քան լո՛յսը եւ աւելի ապահով, քան յայտնի ճանապարհը»: Ան չէ՛ր գիտեր, թէ ի՞նչ պիտի բերէ Նոր Տարին, բայց կը վստահէր Աստուծոյ, որ «կ'առաջնորդէ եւ կ'աջակցի» իրենց՝ գալիք անհանգիստ օրերուն մէջ:

Աստուծոյ ձեռքի պատկերը՝ կը յայտնուի Աստուածաշունչի շատ տեղերու մէջ, որոնցմէ մէկն է՝ Եսայի գիրքը: Այս մարգարէին միջոցով՝ Աստուած կանչեց իր ժողովուրդին՝ իրեն վստահելու, որ ինք որպէս իրենց Արարիչը՝ «առաջինը եւ ... վերջինը» (Ես. 48. 12), կը մնայ իրենց հետ կապուած: Ինչպէ՛ս ան կ'ըսէ. «Ի՛մ ձեռքս հիմնադրեց երկիրը, եւ ի՛մ աջ ձեռքս տարածեց երկինքը» (Հմ. 13): Անոնք պէտք է վստահին իրեն եւ չնային պակաս գորութիւն ունեցողներու: Ի վերջոյ, Ան է՝ իրենց «Փրկիչը, Իսրայէլի Սուրբը» (Հմ. 17):

Ինչ բանի որ ալ հանդիպինք Նոր Տարուան նայելով, մենք կրնանք հետեւիլ Ճորճ Դ. թագաւորին եւ Եսայի մարգարէին խրախուսանքներուն եւ մեր յոյսն ու վստահութիւնը դնել Աստուծոյ վրայ: Այն ատեն՝ մեզի համար ալ՝ մեր խաղաղութիւնը գետի պէս պիտի ըլլայ, մեր «արդարութիւնը՝ ծովու ալիքներու պէս» (Հմ. 18):

**Աղօթք** - Ամենահզօր Աստուած, Դո՛ւն ստեղծեցիր երկինքն ու երկիրը, բայց տակաւին՝ Դո՛ւն կը փայփայես գիս: Ես կը վստահիմ Զեզի: Ամէն:

**Մինչ կը մտածես Նոր Տարուան մասին, ի՛նչ իրավիճակներ կամ յարաբերութիւններ կրնաս վստահիլ Աստուծոյ: Ինչպէ՛ս Անոր ձեռքի պատկերը կը խօսի քեզի:**

## ՑԱՆԿ ՆԻԻԹՈՑ

Ապաշխարութիւն.....	Յոկ. 25, Նոյ. 15
Արդարութիւն.....	Յոկ. 24, Նոյ. 11, 14, 29
Ազդել Մարդոց.....	Դեկ. 1, 8, 15, 22
Աղօթք.....	Յոկ. 11, 16, 29, Նոյ. 14, 26
Աշակերտութիւն.....	Յոկ. 8
Առատաձեռնութիւն.....	Յոկ. 24
Աստուծոյ Ընտանիքը.....	Յոկ. 30
Աստուծոյ Նկարագիրը.....	Նոյ. 3, Դեկ. 9, 14, 20, 31
Աստուծոյ Սէրն ու Հոգատարութիւնը.....	Յոկ. 3, 6, Նոյ. 5, Դեկ. 3, 13, 14, 19
Աստուծոյ Վարդապետութիւնը.....	Դեկ. 13, 29
Աստուծոյ Վստահիլ.....	Յոկ. 7, 17, 21, Նոյ. 5, Դեկ. 28, 30
Աւետարանչութիւն.....	Յոկ. 2, 12, 27, Նոյ. 20, Դեկ. 10
Բարեկամութիւն.....	Յոկ. 13, Դեկ. 23
Բարկութիւն.....	Յոկ. 4
Բժշկութիւն.....	Յոկ. 5
Եկեղեցական Մասնակցութիւն.....	Նոյ. 19
Իմաստութիւն.....	Նոյ. 1, 22, Դեկ. 18
Խորհրդատուութիւն.....	Դեկ. 15
Ծառայել Ուրիշներու.....	Յոկ. 19, Նոյ. 2, 9, 16, 23, Դեկ. 6
Կեանքի Պայքարներ.....	Յոկ. 5, 18
Կռապաշտութիւն.....	Դեկ. 29
Համայնք.....	Դեկ. 12, 23
Հանգիստ.....	Յոկ. 18
Հաշտութիւն.....	Յոկ. 28, Դեկ. 27
Հաւատք.....	Դեկ. 28
Յաւիտենական Կեանք.....	Նոյ. 21
Յոյս.....	Յոկ. 5, 30, Նոյ. 8, 10, Դեկ. 9
Հալածանք.....	Դեկ. 8
Համբերութիւն.....	Յոկ. 9
Հնազանդութիւն.....	Նոյ. 18

Հոգեկան Աճում.....	Նոյ. 7, 17
Հոգեկան Կարգապահություն.....	Նոյ. 24
Հոգեկան Հասունություն .....	Հոկ. 1, 8, 15, 22
Հոգեկան Պատերազմ .....	Հոկ. 1
Հոգիին Պտուղները .....	Հոկ. 2, 9, 16, 23, Նոյ. 3
Ճակատում .....	Հոկ. 31, Նոյ. 7
Մատակարարություն.....	Հոկ. 20, 26, Նոյ. 12
Մարդկութեան Մահ .....	Նոյ. 21
Մեղք.....	Հոկ. 25
Մեղքերու թողություն .....	Հոկ. 25, 28, Նոյ. 28
Մտային Հիւանդություն.....	Հոկ. 10
Ներել Ուրիշներու.....	Հոկ. 10, 28, Դեկ. 27
Շնորհակալություն.....	Նոյ. 25, 28, 30
Որոշում Կայացնել .....	Նոյ. 1, 8, 15, 22, Դեկ. 5
Ուրիշ Հաւատացեալներու հետ Ապրիլ ...	Նոյ. 7, Դեկ. 15, 23
Սուրբ Գիրքի Սերտողություն/Մեկնաբանություն.....	Նոյ. 231
Սիրել Ուրիշները .....	Հոկ. 4, 10, 14, Նոյ. 4, 11, 13, Դեկ. 22
Սխալ Ուսուցում.....	Նոյ. 6
Սուրբ Հոգի .....	Հոկ. 7, 23, Դեկ. 7, 8, 18
Ստեղծագործություն.....	Դեկ. 19
Սրբություն.....	Դեկ. 7
Տառապանք .....	Նոյ. 8, 10, 20, Դեկ. 9, 30
Փրկություն .. Հոկ. 2, 12, 26, 27, Նոյ. 15, 21, Դեկ. 4, 8, 10, 17, 20	
Ըաջալերություն.....	Հոկ. 8, Նոյ. 19, Դեկ. 2, 9, 16, 23
Զրիստոս՝ Անձ/Գործ .....	Հոկ. 27, Նոյ. 26, 27, Դեկ. 17, 20
Զրիստոս՝ Ծնունդ.....	Դեկ. 10, 12, 21, 25
Զրիստոս՝ Կեանքի Ուսուցում .....	Հոկ. 20, Դեկ. 1, 12
Զրիստոս՝ Մարգարեություններ Իր Մասին.....	Հոկ. 21
Զրիստոս՝ Մահ.....	Դեկ. 12
Զրիստոս՝ Փրկիչ/Մեսիա .....	Դեկ. 4, 24
Զրիստոսի Հետ Միություն .....	Նոյ. 10, 19, Դեկ. 18
Զրիստոսի Համար Ապրիլ .....	Հոկ. 6, 15
Զրիստոսի Նման Ապրիլ .....	Նոյ. 6

## ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Եթէ կը ճանչնաք անձեր, որոնք պիտի փափաքին այս գրքոյկին յաջորդ թիւերը ունենալ, կրնաք անոնց անունները ու հասցէները գրել վարի կտրօնին վրայ եւ ղրկել հետեւեալ հասցէներէն մէկուն.–

Սփիւռքի հասցէ՝  
Armenian Missionary Association  
31 West Century Road  
Paramus, NJ 07652  
Tel. 201.265.2607 - E-mail: info@amaa.org

Հայաստան եւ Կովկասեան երկիրներ դիմել՝  
Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն  
Բաղրամեան Փողոց, Թիւ 18  
Երեւան, Հայաստան  
հեռ. (374-10) 54-35-76

Name/Անուն.....

Address/Հասցէ.....

.....

Tel./Հեռ.....

.....

Name/Անուն.....

Address/Հասցէ.....

.....

Tel./Հեռ.....